


220

2001 247004

g(2)(075)  
U-35

1020

Timbres-poste pour Collections  
VENTE--ACHAT--ÉCHANGE  
**M. TOTUNDJIAN**  
47, rue "4 Januari"  
**PLOVDIV, Bulgarie**



3(6) (075)

15-35

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՄԻՋԻՆ Բ. ԵՒ ԲԱՐՁՐ. Ա. ԴԱՍԵՐՔԱՅԻ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ՔԱՐՏԻԱՐԻՈՐ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

# ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵԻԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԵՐ ԵՒ ՅՈՅՆՔ



ՀԱՄԱԶԱՅՆ ԿՐԹ. ԵՐԱԴՐԻ ՈՒՍՄՆ. ԽՈՐՀՐԴՈՅ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

معارف نظارت جلیله سنک سنه ۳۲۳ نيسان ۲۴ تاريخلو  
و ۴۰:۹-۴۰:۱ نومرولى رحصتنامه ميلاه طبع اولمشدر

Տպագր. ԶԱՐԵԿ Կ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1907

ԱՌԱՔԻՆԱԶԱՐԴ ԵՒ ՈՂԲԱՅԵԱԼ  
ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՅԻ Բ., ՀԱՆԱՋԵԱՆԻ  
ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ  
ՆՈՒՐԲԷ  
ԱՇԵՆԱՏԱՍԻՐԱԳԸ  
Ի ՆՇԱՆ ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒՅԻՆ



36816-66

50802 - Ա. Է.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Դասական համես աշխատասիրութեանցս շարքին մեջ՝ կը փափաքէի ունենալ նաեւ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ համառօտ դասագիրք մըն ալ, զոր այսօր, կարելիութեան սահմանին մեջ հրատարակել յաջողած ըլլալու համար՝ ինքզինքս բարեբաղդ կը համարիմ:

Պատմութեան կարեւորութեանը մասին երկարօրէն խօսիլը աւելորդ կը սեպեմ, քանի որ Յարգոյ պատշտանակիցներս արդէն շատ լաւ ըմբռնած են անոր գերազանց եւ բարոյացուցիչ օգտակարութիւնը, նա մանաւանդ համոզուած են թէ՛ ուսման այս կարեւոր նիւղը՝ տեսակ մը «Մասալ» եւ կամ առակերտին համար զուարճալի ժամանցի մը նիւթ ըլլալէ դադրելով՝ պարզապէս իմաստասիրական ուսում մը դարձած է այժմ:

Եւ իբր, Պատմութիւնը, ինքնին որքան հետաքրքրական է զուրկ համար, նոյնքան ալ կոչուած է գերազանց դեր մը կատարել՝ կազմելու համար անոր մեջ բարոյական մարդը: Պատմութեան պատշտանն է մշակել եւ զարգացնել՝ զուրկ խորհելու, դատելու եւ բաղդատելու բնական կարողութիւնները, պարզել անոր առջեւ՝ ազգերու մեծութեան եւ սկարութեան գաղտնիքները, ներկայացնել՝ նշմարապէս Մեծ մարդիկը՝ իբրեւ կենդանի օրինակներ աշխատասիրութեան, յարասեութեան ու բարձր նկարագրի, եւ այս ամենուն ամբողջութիւնը ուսանողին համար պիտի ըլլայ՝ կեանքի փորձառութեան ամենէն գեղեցիկ եւ ամենէն գործնական դասը:

Ներկայ աշխատասիրութեանցս մեջ՝ Եւրոպացի եւ ո՛չ մէկ հեղինակի հետեւած եմ կուրօրէն: Իրաւ է որ ուսման այս նիւղին համար ընտիր եւ գնահատելի դասագիրքեր չեն պակսիր իրենց մեջ, բայց ասոնք պատ-

բասուած են իրենց միջավայրին, իրենց ծրագիրներուն, իրենց պէսներուն եւ մասնաւոր տեսպէսներուն համաձայն՝ որոնց ամբողջութիւնը հեռի է մեր կրթական համեստ պահանջումներուն գոհացում տալիս:

Այս հիման վրայ եւ այս սկզբունքով է որ ձեռնարկեցի ներկայ դասագրքիս պատրաստութեան, միշտ աչքի առաջ ունենալով՝ մեր բաղային վարժարանաց մեջ ուսման այս նիւղին տրուած կարեւորութեան աստիճանաչափը:

Սոյն աշխատասիրութիւնս երեք մասերէ բաղկացած է. Ա. — ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԵՐ ԵՒ ՅՈՅՆՔ.

Բ. — ՄԻՋԻՆ ԳԱՐ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅ.

Գ. — ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դասագրքիս պարունակութիւնն, լեզուն եւ ընդհանուր ուղղութիւնը այնպէս մը պատրաստ եմ, որ մէ հաւասարապէս «Միջին» եւ «Բարձրագոյն» Դասընթացներու ուսանողի կրնան օգտուիլ, անուշտ, Յարգելի ուսուցչաց տալիս աստիճանական բացատրութիւններով: Դարձեալ, Պատմութիւնը մեքենաբար տրուց գոց սորվիլն արգիլելու նպատակաւ՝ իբր պատրաստութիւն դրած եմ առանձին Հրանգներ, Վերջումումներ, Խմբագրութեան նիւթեր, Ժամանակագրական Պատկերներ, եյն. գորս Յարգոյ Ուսուցիչի կրնան օգտուիլ ձեւերու ներքեւ ալ օգտակարապէս ի գործ դնել: Նոյնպէս, պատշաճ համարեցի մեծ մարդոց եւ կարեւոր առարկաներու պատկերներու հետ, աշխարհագրական քարտանքներ ալ զետեղել՝ իբր ուղեցոյց եւ դիւրութիւն ուսանողին:

Փափաքեցի է ինձ յուսալ որ, սոյն համեստ աշխատասիրութիւնս ալ՝ Պատ. Խնամակալաց եւ Յարգոյ ուսուցչաց ներողամիտ ընդունելութեան բաղղին պիտի արժանանայ:

Գ. Մ.

ՄԱՍՆ ԱՌԱՅԻՆ

ԱՐԵՒԵԼ. ՀԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Մարդկային Ազգի կամ Ընդհանուր պատմութիւնը չա՛տ հետաքրքրական եւ հրահանգիչ ուսում մըն է:

Պատմութիւնը՝ Անցեալին Հայելին եւ Փորձառութեան Դասարանն է: Պատմութենէն պիտի սորվինք ժողովուրդներուն գեղեցիկ ձիրքերն ու առաքինութիւնները: Վերջապէս, Պատմութեան ուսումն է որ, մարդուս սրտին մէջ կ'ամրապնդէ բարիից զգացումը եւ պատրաստութեան սերը:

Հին ազգերու պատմութեան շատ մը կարեւոր մասերը թերի եւ առատաբեր խառն են, ինչու որ, հին դարերու մէջ՝ առանձին պատմագիրներ, տեղի ունեցած կարեւոր դէպքերը անմիջապէս արձանագրողներ, թուղթ ու գիրք չի գտնուելուն համար, պատահած դէպքերը բերնէ բերան եւ յաջորդաբար սերունդէ սերունդ կ'աւանդուէին: Պատմութեան այս ձեւը կը կոչուի Անգիր Պատմութիւն կամ Աւանդութիւն: Այս պատճառաւ է որ հիմակուան պատմագիրները

մեծ դժուարութիւն կը կրեն այդ Աւանդութիւններուն մէջ՝ իրաւը սուտէն և բուն պատմականը առասպելէն ստկելու համար: Ուստի կը դիմեն հին ձեռագիրներու, դրամներու, արձանագրութիւններու, յիշատակարաններու, նշանաւոր աւերակներու, դամբարաններու՝ ևն. որոնք կը կոչուին ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՔԻԻՐՆԵՐ: Պատմագիրները այս առարկաները խնամով ուսումնասիրելով՝ հետզհետէ նորանոր պատմական ճշմարտութիւններ երեւան կը հանեն:

Իսկ երբ Պատմութեան մէջ հանդիպինք հետեւեալներուն պէս խօսքերու, ինչպէս՝ «կ'ըսուի քե», «կը պասմուի քե», «աւանդութեան մը նայելով», «ըտողներ այ կան որ» ևն., կը նշանակեն թէ՛ այդ ձեւին ներքեւ պատմութեան ճշգրտութիւնը ինք՝ Պատմութիւնը բոլորովին չերաշխաւորեր:


Պատմութեան անբաժան մէկ մասը կը կազմէ նաեւ Աւխարհագրութիւնը՝ առանց որու մարդ գիտակցօրէն և հիմնական կերպով չի կրնար սորվիլ Պատմութիւնը և փոխադարձաբար:

Մեր նախահայրերը կեանքի նիւթական անհրաժեշտ միջոցներէն զուրկ ըլլալով՝ շատ զանգաղ կերպով ու դժուարաւ հասան քաղաքակրթութեան աստիճանին, այնպէս որ, պատմագիրները նախապատմական այս շրջանը երեք որոշ շրջաններու բաժնած են.

1. ՔԱՐԷ ԴԱՐ, երբ անզօր մարդ էակը անուշիկ գազաններու դէմ ինքզինքը պաշտպանել և իր անհրաժեշտ պէտքերն հողալ կարենալու համար՝ սկսաւ գործածել կարծր քարէ տապար, նետ, դանակ, սուր ևն.: Այս շրջանը կոչուած է ՔԱՐԷ ԴԱՐ:

2. Ժամանակ անցնելով, մարդիկ պղինձն ու աւազը բաղադրելով՝ սկսան Արդրէ աւելի տօկուն

զէնքեր ու գործիքներ շինել: Այս շրջանն ալ կոչուած է ԱՐՈՅՐԷ ԴԱՐ:



Քարէ դարու գործիքներ

3. Վերջապէս, մարդիկ երկաքը գտան և այս սքանչելի մետաղին շնորհիւ՝ ունեցան աւելի կատարելագործուած և հաստատուն գործիքներ՝ որոնց շնորհիւ կրցան ինքզինքնին բնութեան և գազաններու դէմ պաշտպանել և իրենց կեանքի պէտքերն աւելի դիւրաւ և առատօրէն հայթայթել: Այս շրջանը կոչուած է ԵՐԿԱԹԻ ԴԱՐ, որ է սկզբնակէտը մարդկային ազգի քաղաքակրթութեան:

Մ Ա Ր Դ Կ Ա Յ Ի Ն Յ Ե Ղ Ե Ր

Մարդկային Ազգը բաժնուած է երեք գլխաւոր ցեղերու. 1. Սպիտակ կամ Կովկասեան, 2. Սեւ կամ Խափեիկ, 3. Դեղին կամ Մոնկոլեան ցեղ:

ԽԱՓՇԻԿ ՅԵՂ. — Այս երեք մեծ ընտանիքներուն մէջ, տակաւին ամէնէն յետագէմն է Խափեիկ ցեղը որ ընդհանրապէս կը գտնուի Ափրիկէի մէջ և պասմուրթի շուրհի:

Դեղին Յեղ. — Այս ցեղին գլխ. ներկայացուցիչներն են Չինացիք: Մական Չինաստան՝ գտնուելով Սախոյ կեդրոնական և Ծայրագոյն Արեւելեան մասին մէջ, մա-



Խափշիկ ցեղ



Դեղին ցեղ

նաւանդ՝ բարձրաբերձ լեռնաշղթաներով և ընդարձակ ծովերէ շրջապատուած ըլլալուն, հին ատեն աշխարհի միւս մասերուն անհաղորդ և անծանօթ մնացած էր:

Բնական այս պատճառներուն վրայ պէտք է աւելցնել նաեւ Չինաց ազգային այն արտառոց նկարագիրը՝ որով իրենցմէ զատ ամէն ազգ կամ ժողովուրդ իբր բարբարոս ու թշնամի նկատելով՝ զանոնք իրենց երկիրը չէին ընդուներ: Ահաւասիկ այս պատճառաւ է որ պատմութիւնը շատ նուազ տեղեկութիւն ունի իբր 400 միլիոնէ բաղկացած Չինացի ազգին անցեալին վրայ:

Չինացիք գոռոզութեամբ կը պարծենան թէ՛ իրենք եղած են աշխարհիս հնագոյն և ամէնէն իմաստուն ազգը. թէ՛ իրենց նախնիքները աստուածնէրու սերունդէն իջած են, և թէ՛ աստուածներու ձեռքով հիմնուած է իրենց կայսրութիւնը զոր կ'անուա-

նեն «Երկնային կայսրութիւն» և վեհապետն ալ «Որդի Երկնից»:

Միայն սա ճշմարիտ է որ, Չինացիք Բրիտոսէ հազարաւոր տարիներ առաջ, շատ հին քաղաքակրթութիւն մը ունեցած են: Իրենց գրականութեան մշակուած այլ և այլ ճիւղերը, իմաստասիրական գրուածքները, արուեստներն ու ճարտարութեանց այլ և այլ ճիւղերը, ինչպէս նաեւ իրենց ճաշակին յատուկ տեսակ մը ճարտարապետական յիշատակարաններ՝ ապացոյց են ասոր: Դարձեալ, Եւրոպացիներէ հազարաւոր տարիներ առաջ, իրենք գտած են Տպագրութիւնը, Վառօղը և Կողմնացոյցը: Բայց ասոնց և ո՛չ մէկէն օգտուած է մարդկութիւնը, ինչու որ Չինացիք ամէն բան իրենց մէջ գաղտնի պահած, և հետեւապէս իրենց քաղաքակրթութիւնն ալ կայուն և սահմանափակ վիճակ մը ունեցած է:

Չինաց մեծ Օրէնդիրն եղած է Կոնփուկիոս անուն փիլիսոփան որ կ'ապրէր Բրիտոսէ վեց հարիւր տարի առաջ: Այս նշանաւոր մարդը՝ իր հայրենակիցներուն բարքը ազնուացնելու նպատակաւ՝ իմաստուն օրէնքներ գրաւ:



Սահմանեց այն պարտականութիւնները զորս պէտք է ունենան զաւակները՝ իրենց ծնողաց, հպատակներն՝ իրենց թագաւորին ու երկրին տիրոջ օրէնքներուն, կրօնական պատուէրներու հանդէպ և վերջապէս՝ մարդիկ իրենց նմաններուն նկատմամբ: Կոնփուկիոսի այս օրէնքները պարունակող նուիրական մատեանները մինչև այսօր երկիւղածութեամբ կը յարգուին Չինաց կողմանէ:

Կրօնքով Պուտտայական են Չինացիք, իրենց



իշխանները կը կոչուին Մանսարին: Չինաց մէջ ժողովրդական դասակարգ, ազնուական կամ աամիկ գոյութիւն չունին: Ամէնէն ստարին քաղաքացին անգամ իր անհատական արժանիքովն ու մրցմամբ՝ կարող է տէրութեան ամէնէն բարձր պաշտօններուն հասնիլ: Չինաստանի յաջորդաբար աիւրեցին Մոնկոլքարաւները(ժ.Գ. դարուն), Մանչուքարաւները (ժ.Ե. դարուն)՝ որոնց սերունդէն է արգի կայսերական ընտանիքը: Սակայն ժ.Թ. դարուն է որ, Չինաստան եւրոպական մեծ տէրութեանց բուռն զօրութեան առջեւ տեղի տալով՝ հարկադրուեցաւ բանալ իր նաւահանգիստները օտարաց առջեւ եւ անոնց հետ առեւտրական ու քաղաքական յարաբերութիւն մշակել: Վերջին տարիներս՝ Չինաստան սկսաւ լուրջ ջանքեր ընել՝ հետեւելու համար եւրոպական քաղաքակրթութեան, ինչպէս իր ցեղակիցը, յառաջդիմատէրն Ճապոն, այս ընթացքին հետեւելով, այսօր Մայրագոյն Արեւելքի մէջ ստացած է զինուորական և քաղաքական փառաւոր գիրք մը:



Պուտտա



Սպիտակ ցեղ

իր խնայական բարձր ձիրքերովն ու քաղաքակրթութեամբ՝ միւս երկու ցեղերէն գերազանց է եւ այս

ՍՊԻՏԱԿ կամ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅԵՂ. — Այս ցեղը իր մարմնական չնորհալի կազմուածքով, մանաւանդ՝

պատճառաւ է որ աշխարհիս մեծագոյն մասին տէրն է:

Հին կտակարանը մասնաւորապէս կը խօսի Սպիտակ ցեղին վրայ՝ որու նախահայրերը եղած են Նոյ նահապետի երեք որդիները՝ Աեմ, Քամ և Յաբէք:

Սեմէն յոռաջ եկած են գլխաւորապէս Հրեայ և Արաբացի ազգերը որոնք կը կոչուին Սեմական ընտանիք:

Քամի սերունդը շատ հին տառններ Ասիայէն գաղթեց Ափրիկէ և հոն ծնունդ տուաւ մասնաւորապէս եգիպտական ազգին:

Յաբէթի սերունդը տարածուեցաւ Ասիոյ սեծագոյն մասին՝ Պարսկաստանի, Արաբատի և Կովկասի մէջ՝ ուրկէ գաղթեց Եւրոպա: Այս պատճառաւ է որ Սպիտակ ցեղը կը կոչուի նաեւ Կովկասեան՝ որու ամէնէն ընտիր և հարազատ սերունդը մինչեւ հիմայ կը գտնուի Կովկասի մէջ:

ԱՐԻՒԲ կամ ՀՆԴ—ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԵՂ. — Արդի գիտունները, Յաբէթի սերունդին Արիւ կամ Հնդ—Եւրոպական անունը կուտան: Կը կարծուի թէ այս ցեղին բնակավայրն էր Կեդր. Ասիոյ մեծագոյն լեռնադաշտը եղող Թիպէթի ընդարձակ գաւառը՝ ուրկէ ի վերջոյ քանի մը մասի բաժնուելով ցրուեցաւ: Մէկ մասը գաղթեց դէպի արեւմուտք՝ Եւրոպա, և կոչուեցաւ Իրանեան՝ որմէ սերած են Եւրոպական արդի ազգերը: Ուրիշ մաս մը գաղթեց դէպի հարաւ՝ Գանգէսի հովիտը (Հնդկաստան) և կոչուեցաւ Հնդիկ:

Գլխունները ուսումնասիրելով Եւրոպայի արդի լեզուները՝ Հնդկաց նախնական լեզուն եղող Սանսկրիթի հետ, ստուգած են որ մեծ նամանութիւն կայ այս երկուքին մէջ և երկու ցեղերն ալ գրեթէ միեւնոյն ծագումն ունին: Այս պատճառաւ Եւրոպական ազ-

գերը կը կոչուին նաև Հնդ—Եւրոպական ըն-  
սանիք :

ՀՆԴԿԱՅ ՀՆՈՒԹԻՒՆԸ. — Ինչպէս Չինաց , նոյն-  
պէս Հնդիկներու հին պատմութիւնն ալ անծանօթ  
մնացած է : Եթէ իրենց նուիրական մատեանները ե-  
ղող վիճաներուն վկայութեանը հաւատանք , Հնդիկ-  
ները նախ քան Քրիստոս 1500 տարուան հնութիւն  
մը ունեցած են : Ասոնք , հին Եգիպտացիներուն պէս՝  
քանի մը որոշ դասակարգելու բաժնուած էին , ինչ-  
պէս՝ Քուրմեր (Պրահման) , Պա-  
ստրապիկներ (Քըշադրիա) , Վանա-  
ռականներն , Երկրագործները (Վայ-  
սիա) ու արհեստագէտները (Սուզ-  
րա) : Ասոնցմէ զատ՝ կար նաև  
Փարիա ըսուած դասակարգ մը որ  
ամէն իրաւունքէ զրկուած , ան-  
արգ և ստրուկ տարրն էր : Պրահ-  
մանները զօրաւոր դաս մը կը  
կազմէին , ո՛չ միայն իբրև կրօնքի մեկնիչ , այլ եւ  
իրբև դատաւոր , իբրև բժիշկ և իբրև ժամա-  
նակին գիտունները :



Պրահմա

Սակայն Քրիստոսէ 600 տարի առաջ , Սափիամունի  
կամ Պուսսա (իմաստուն) անուն Հնդիկ երեւելի իշ-  
խան մը , հին կրօնքը բարեփոխելով՝ սկսաւ քարո-  
զել նոր կրօնք մը՝ որուն ամփոփումը հետեւեալն է .

1. Մարդոց հաւասարութիւնը բարոյական օրէնքին առջեւ . —
2. Իմացականութեան մեակումը . —
3. Բարիքն պատուար . —
4. Մարդոց մեջ բարոյական սէր եւ փոխադարձ օգնութիւն . —
5. Կեանքի ձախողութեան հանդէպ համբերութիւն և վերջապէս՝ հոգիի ու մարմնի մաքրութիւն : Պուտայի մահէն

յետոյ , իր աշակերտները այս քարոզութիւնները հաւաքելով՝ կազմեցին Պուտայական վարդապետութեան նուիրական մատեանը : Բայց որովհետև Պրահմա ամէնէն առաջ դասակարգերը ջնջելով՝ ժողովրդային հաւատարութիւն կը քարոզէր , այս պատճառաւ քուրմերը ի սկզբան սոսկալի հարածանք մը հանեցին այս նոր վարդապետութիւնը քարոզողներուն դէմ որոնք գացին Թիպէք , Մոնկոլիա , Չինաստան , Հնդկա-Չին ու Սեյլան կղզին՝ ուր տարածեցին Պուտայականութիւնը՝ որուն հետեւող մինչև 560 միլիոնէ աւելի ժողովուրդներ կան յիշեալ երկիրներուն մէջ : Հնդկաստանի բնական թանկագին հարստութիւնները՝ ամէն դարու մէջ հրապուրած են Ասիացի ու Եւրոպացի ժողովուրդները՝ ծովու և ցամաքի ճամբով իրեն հետ առեւտրական յարաբերութիւն մշակելու : Այսպէս , առաջին անգամ Փիւնիկեցիք , ապա , Մեծին Ալեքսանդրի աշխարհակալութեան հետեւանօք (327 ին) Ասիացի յոյն գաղթականներ ու բնիկներ , է դարուն Արաբացիք , ԺԳ դարուն՝ Մարքո-Բոլո վենետիկցին որ առաջին Եւրոպացին եղած է Ծայրագոյն Արեւելք ճամբորդելով՝ այդ առասպելական երկիրներու մասին՝ Եւրոպայի գրաւոր տեղեկութիւններ հաղորդող : Նոյնպէս՝ ԺԵ դարուն , Վասօ-Տր-Վալա Փորթուկէզ անուանի ծովակալը՝ առաջին անգամ Ափրիկէի շրջանն ընելով՝ հասաւ արեւմտ. Հնդկաստանի Քալիքուք քաղաքը :

Փորթուկէզներէն յետոյ՝ Հնդկաստանի յաջորդաբար տիրեցին Հոլանտացիք և Յրանտացիք : Բայց մեծահարուստ այս երկրին վերջնապէս տիրանալու նախանձակի բաղդը վիճակուած էր Մեծին Բրիտանիոյ որու արքայական թագին պատուականագոյն գոհարն է Հնդկաստան :

### ՊԱՏԿԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԵՐՈՒ

Քամեան գլխ. Ընտանիքներ՝ եզրպտացիք, Քաղ-  
գէացիք:

Սեմական գլխ. Ընտանիքներ՝ Եբրայեցիք, Փիւնի-  
կեցիք, Ասորեստանցիք, Արարացիք:

ՍՊԻՏԱԿ ԿԱՄ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅԵՂ. — Արիական կամ  
Հնդկա—Եւրոպական գլխ. Ընտանիքներ՝ Հնդկիք,  
Մարք, Պարսիկիք, Հայք, Յոյնք, Լատինք, Գեր-  
մանք, Կեղտք, Սլաւք:

ԴԵՂԻՆ ԿԱՄ ՄՈՆԿՈՒԵԱՆ ՅԵՂ. — Չինացիք, ծա-  
բոնք, Թաթարք, Մոնղոլք, Օսմանցիք, Մաճառք  
կամ Հունգարացիք, Ֆինլանտացիք:

ՍԵՒ ԿԱՄ ԽՍՓՇԻԿ ՅԵՂ. — Միջին և Հարաւային  
Ափրիկէի բնիկները,

ԿԱՐՄԻՐ ԿԱՄ ՊՂՆԶԱԳՈՅՆ ՅԵՂ. — Ամերիկեան  
Հնդիկները:


### ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Մարդիկ՝ իրենց բնական անհրաժեշտ պէտքերը հայ-  
թայթելու և իրենց կեանքն ու ստացուածքը բնու-  
թեան հազար ու մէկ վտանգներուն դէմ պաշտպա-  
նելու համար, ստիպուած են խմբովին ապրիլ և մի-  
տախն աշխատիլ: Այս պատճառաւ է որ մարդս կոչ-  
ուած է բնկերական: Մարդկային ընկերութեան կազ-  
մակերպութիւնը կ'սկսի ընտանիքով՝ որուն մէջ հայ-  
րը՝ կերպով մը կը կատարէ վեհապետի, դատաւորի  
և քահանայի բնական պաշտօնը՝ իր բազմանդամ ըն-

տանիքին նկատմամբ և կը կոչուի նահապետ: Այս  
էր հին դարերու մէջ մարդկային ընկերութեան նախ-  
նական ձեւն ու վիճակը: Բայց ժամանակ անցնելով՝  
միեւնոյն ցեղին պատկանող շատ մը նահապետական  
ընտանիքներ միացան և կազմեցին ժողովուրդներ,  
ժողովուրդներն ալ բազմանալով՝ յառաջ բերին ա-  
ռանձին առանձին Ազգութիւններ՝ որոնք ունեցան ի-  
րենց յատուկ հայրենի հող, յիշատակներ, արտադ-  
րութիւններ, իրենց յատուկ լեզու, կրօնք, ազգային նկա-  
րագիր, օրէնք, այլ և այլ ձեւերով կառավարութիւն  
և իրարմէ տարբեր ու իրարմէ բարձր կամ միջակ  
քաղաքակրթութիւն:

Միայն պէտք է գիտնալ որ, մանաւանդ հին ա-  
տենները, բնական և նրութական մեծամեծ դժուա-  
րութիւններու պատճառաւ, մարդիկ շատ դանդաղ  
կերպով յառաջ գացին քաղաքակրթութեան մէջ:  
Մարդիկ, իրենց բնական երկիրներուն աշխարհա-  
զրական գիրքին, կլիմային և հողին բնութեան  
համեմատ՝ եղան հաշուարած, Երկրագործ, Ուրտոդ  
կամ Նաւարկու: Բայց կեանքի պէտքերն քանի  
աւելցան, մարդիկ ալ սկսան իրենց աշխատանքը  
բազմապատկել և իրենց բնական բերքերը փո-  
խանակել հեռաւոր երկիրներու ժողովրդոց աւելի  
կարեւոր ապրանքներուն հետ: Այս հաղորդակցու-  
թենէն յառաջ եկաւ վաճառականութիւնը որ իր հետ  
բերաւ հարստութիւն և քարեկեցութիւն՝ որով մար-  
դիկ, փոխանակ խրճիթներու կամ անշուք անակներու  
մէջ պատասպարուելու, հեռոցհեռ ունեցան կանոնաւոր  
և հաստատուն բնակարաններ, աւելի լաւ և առատ  
անունդ վայելեցին, սկսան աւելի ճաշակաւոր կերպով  
հագուիլ, և մշակել արհեստներ, գիտութիւններ ու  
ճարտարութեանց այլ և այլ կարեւոր ձեւերը:

363/6-66



ՄԵՐ ՆԱԽՆԻՔՆԵՐՈՒՆ ԾԱՆՕԹ ԱՇԽԱՐՀԸ

Մարդիկ, հազարաւոր տարիներ այն սխալ համոզումն ունեցած են թէ՛ երկիրս տափարակ մարմին մը ու երկինքն ալ՝ վրանի մը կամարին պէս՝ անոր վրայ անշարժ զանգուած մըն է: Այս պատճառաւ՝ մեր նախնիք, Երկրագունտիս հազիւ մեկ քառորդ մասը կը հանչեցային:

ԱՄՄԱ. — Հին աշխարհի այս մեծագոյն ցամաքին ծանօթ մասերն էին, Աել (Եւքսինեան Պոնտոս) և Միջերկրական (Ներքին) ծովերու սահմանակից երկիրներէն ի զատ, Կարսի և Օմանի (Երիթրեան) ծովերը, արդի Օսմ. Ասիան, Պարսկաստանը, Աֆղանիստանը, Պելոնիստանը, Արաբական ցամաքաղօղին և Թաքարիստանը: Իսկ Ինդոս ու Գանգես գետերը կը նկատուէին իբր աշխարհիս արեւելեան սահմանագիծը:

ԱՓՐԻԿԷ. — Հիները Ափրիկէն կ'ընդունէին իբր Ասիոյ շարունակութիւնը և անոր հիւս. մասը միայն կը ճանչնային, ինչպէս Եգիպտոսը, Կիրենէն (Թարապլոս), Կարթեգոն (Թունուզ), Նումիդիան (Ճէզալթր) և Մաւրիտանիան (Մարոք):

ԵՒՐՈՊԱ. — Այս ցամաքին մէջ ամէնէն ծանօթ երկիրներն էին Յունաստան՝ իր սահմանակից հիւս. գաւառներով (Թրակիա, հիւսիսային. Յունաստան, Եպլորոս, Թեսալիա), Իտալիա և Սպանիա: Իսկ Գալլիոյ, Բրիտանիոյ և Գերմանիոյ մէկ մասին վերջերը և այն ալ՝ մասամբ ծանօթացան: Հետեւապէս, պատմութիւնը կը խօսի Միջերկրականի սահմանակից վերջէջի ալ՝ միայն երեք երկիրներու՝ այսինքն՝ Յունաստանի, Իտալիոյ և Սպանիոյ վրայ:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Ընդհանուր պատմութիւնը 4 մասերու կը բաժնուի. 1. Հին, 2 Միջին, 3. Նոր, 4. Ժամանակակից:


Հին պատմութիւնը կ'սկսի աշխարհիս ստեղծումով, որ է Քսէ. 4963 տարի առաջ և կը հասնի մինչեւ Քսի. 476 թուականը՝ երբ Հռոմէական պետութիւնը կը կործանի:

Միջին դարու պատմութիւնը կ'սկսի 476ին և կը տեւէ մինչեւ 1453, որ ատեն երկու Նշանաւոր գէպքեր տեղի կ'ունենան, այսինքն՝ Օսմանցիք Կ. Պոլիսը կ'առնեն և Գրիստափոր Քոլոմպոս ձեռնաղացին ալ՝ Ամերիկան կը գտնէ (1492):

Նոր պատմութիւնը կ'սկսի 1453ին և կը տեւէ մինչեւ 1789 թուականը՝ ուսկից սկսելով մինչեւ մեր օրերը պատահած գէպքերն ալ՝ առանձին մաս մը կը կազմեն Ժամանակակից պատմութիւն անունով:

Արեւելեան Հին ժողովուրդներ ըսելով կը հաւանանք Եբրայեցիք, Հայք, Եգիպտացիք, Ասորեստացիք, Մարք, Պարսիք, Փիւնիկեցիք, Կարթեգոնացիք, Բաբելոնացիք ևն.: Թէպէտ ասոնց մէջ Ափրիկեցի ժողովուրդներ ալ կան, ինչպէս Եգիպտացիք, Կարթեգոնացիք և իրենց պատմութիւնը մեծ մասամբ անծանօթ երովպացիները, բայց ասոնք ալ Արեւելեան ժողովուրդներ կը կոչուին, ինչու որ իրենց քաղաքակրթութիւնը Ասիայէն առած են:

Իսկ Յոյները և Հռոմայեցիները՝ Հին Պատմութեան շրջանի վերջերն է որ կ'երեւան՝ իբրև Արեւմուտքի այսինքն՝ Եւրոպայի ամէնէն հին ազգերը և շատ կարեւոր գեր մը կը կատարեն:



# ԵՐՐԱՅԵՅԻՔ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ. — Պաղեստին կամ Հրէաստան կը գտնուէր Միջերկրականի Արեւլ. կողմը: Հիւս. սահմաններն էին՝ Փիւնիկէ և Ասորիք, իսկ արեւելքէն ու հարաւէն՝ Արաբիոյ անապատը:

Պաղեստին թէպէտ լեռնային երկիր մը, բայց ունէր արգաւանդ հովիտներ: Իր մէջ կը պարզունակէր Լիբանան, Թափօր, Սիօն, Կարմելոս, Զիբեկեաց, Գողգոթա ևն. լեռները, որոնց մեծ մասը Ս. Գրոց մէջ պատմական մեծ կարեւորութիւն ստացած են: Ամէնէն երեւելի գետն էր Յորդանան, որ հիւսիսէն դէպ ի հարաւ՝ Ասֆալթիք կամ Մեռեալ ձովը կը թափի: Գլխաւոր քաղաքներն էին՝ Երուսաղեմ, Կաբառնաում, Նազարէթ, Տիբերիա, Բեթլեհեմ, Սամարիա, Դազա, Երիփով, Կանա, Յոպպե, Կեսարիա ևն.:

2. ԱՅՐԱՀԱՄ. — Իսրայէլացի կամ Հրեայ ազգին նախահայրն եղած է Աբրահամ, որ Քսէ. իբր 2000 տարի առաջ, Միջագետաց Ուր քաղաքէն ելլելով՝ իր ընտանիքով եկաւ բնակեցաւ Պաղեստինի Խառան քաղաքը զոր Ած. խոստացաւ տալ իր սերունդին, ինչպէս նաեւ երկիրքի աստղերուն և ծովու աւազին չափ ալ բազմաթիւ զաւակներ:

3. Աբրահամ իր ժամանակի նահապետներուն մէջ մեծ համբաւ կը վայելէր, ո՛չ միայն իբրև մեծահարուստ և պատկառելի անձնաւորութիւն, հապա նաև՝ իբրև միակ երկրպագուն ճշմարիտ Աստուծոյ: Այս պատճառաւ՝ Աստուած խոստացաւ Աբրահամու՝ մեծ և ընտրեալ ազգի մը նախահայրը ընել զինքը:

Աբրահամ ունէր՝ բազմաթիւ՝ ծառաներ և աղա-

խիններ: Իր Հագար աղախինէն յառաջ եկած են Աբրաքացիք կամ Իսմայէլացիք, իսկ իր ծերութեանը ժամանակ ունեցած Իսահակ անուն արու զաւկին սերունդն է որ եղաւ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը:

4. ՅԱԿՈՅ ՆԱՀԱՊԵՏ. — Իսահակ ունեցաւ երկու մանչ երկւորեակ զաւակներ, Եսաւ և Յակոբ: Այս վերջինն ալ տէր եղաւ 12 արու զաւակներու՝ որոնց անուններն են Ռուբեն, Շմաւոն, Գեւի, Յուդա, Իսակ, Նեֆթալիմ, Գադ, Ասեր, Իսահար, Զաբուղոն, Յովսէփ և Բենիամին՝ որոնք Իսրայէլի 12 ցեղերուն նախահայրերը եղան:

5. Յակոբ Նահապետի սերունդը՝ Պաղեստինի մէջ պատահած մեծ սովի մը պատճառաւ՝ գաղթեց Եգիպտոս՝ ուր 400 տարուան միջոցի մէջ շատ բազմացաւ և Յովսէփ Գեղեցիկ մեծ փառքի և իշխանութեան հասաւ: Սակայն վերջերը՝ փարաոնները չարաչար կը նեղէին Իսրայէլացիները և իրենց հսկայ շէնքերուն համար անխնայ կ'աշխատցնէին զանոնք:

Ահա այն ատեն Աստուած հրամայեց Մովսէսի, որպէս զի Իսրայէլացիները Փարաւոնին ձեռքէն ազատելով՝ առաջնորդէ Աւետեաց երկիրը զոր իր սիրելի ծառային՝ Աբրահամու և անոր սերունդին տալ խոստացած էր: Իսրայէլացիք 40 տարի Սինա անապատին մէջ թափառելէ և բնական մեծամեծ դժուարութիւններու զիմազրաւելէ յետոյ, վերջապէս Յեսուզօրսպատին առաջնորդութեամբ հասան Աւետեաց երկիրը՝ որու շրջակայ բարբարիկ ցեղերուն յաղթելով՝ վերջնապէս տէր եղան Աստուծոյ իրենց խոստացած աշխարհին:

Յեսու՝ Աւետեաց երկիրը բաժնեց՝ Իսրայէլի 12 ցեղերուն մէջ:

7. ԴԱՏԱԻՈՐՆԵՐ. — Ի սկզբան Իսրայելի իւրաքանչիւր ցեղ՝ իրարմէ անկախ և իր ցեղապետին իշխանութեանը ներքեւ կ'ապրէր: Սակայն դժուարին պարագաներու մէջ ամէնքը միասնալով՝ իրենց մէջէն կ'ընտրէին խելացի ու զօրաւոր մէկը, որպէս զի երկիրը արտաքին վտանգներու դէմ պաշտպանէ: Այդ մարդը կը կոչուէր Դատաւոր:

Երեւելի գատաւորներ եղան Դեբովրա, Գեդեոն, Սամսուոն, Յեփթայի և Սամուէլ:

7. ԹԱԳԱԻՈՐՆԵՐ. — Իսրայելացիք ուղելով քաղաքական միութիւն մ'ունենալ և ինքզինքնին զօրաւոր քրացիներու դէմ պաշտպանել, դիմեցին վերջին գատաւոր Սամուէլ մարգարէին, որպէս զի իրենց թագաւոր մ'ընտրէ: Սամուէլ՝ Բենիամինի ցեղէն Սաւուղը օծեց թագաւոր (1100 Գ. Ա.), որ թէեւ ի սկզբան իր խոհեմութեամբ ու տարած յաղթութիւններովը սիրելի եղաւ ժողովուրդին, բայց յետոյ, Աստուծոյ դէմ անհնազանդ գտնուելուն համար, Սամուէլ Յուդայի ցեղէն թագաւոր սրակեց Դաւիթը որ պարզ, բայց արխատիրտ հովիւ մ'էր:

9. ԴԱՒԻԹ ԵՒ ՍՈՂՈՄՈՆ. — Երեւելի վեհապետ մը եղաւ Դաւիթ (1056—1016), յաղթեց Իսրայելի թշնամիներուն և իր տէրութեան սահմանները ընդարձակեց՝ հիւսիսէն մինչեւ Եփրատ ու հարաւէն մինչեւ



Իսրայելացի քահանայ

Կարմիր ծով: Նոյնպէս՝ զինուորական ու քաղաքական կարգ կանոններ գրաւ և Սիօն լեռան վրայ հիմնեց փառաւոր մայրաքաղաք մը, որ է Երուսաղէմ: Դաւիթ իր հոգեշունչ Սաղմուսերգութիւններով զԱստուած կը փառարանէր և այս պատճառաւ կոչուեցաւ Թագաւոր—Մարգարէ: Բայց իր ձերութեան մէջ քանի մը մեղքեր գործեց ու նորէն զղջաց:

Դաւիթի յաջորդեց իր որդին Սողոմոն (1016—976) որ իր խնաստութեան և տարած յաղթանակներուն համար մեծ համբաւ ստացաւ: Սողոմոն՝ Երուսաղէմի մէջ՝ Փիւնիկեցի ճարտարապետներու ձեռքով՝ հսկակապ տաճար մը կառուցանել տալով՝ զայն Աստուծոյ նուիրեց: Իրեն համար ալ փառաւոր պալատ մը շինեց՝ ուր կ'ապրէր՝ Արեւելքի վեհապետներուն յատուկ պերճանքով ու շաղկութեամբ: Իր հօրը պէս, Սողոմոն ալ ի վերջոյ մոլորեցաւ և իր Աստուածն ուրանալով՝ սկսաւ օտար ազգերէ կէն առնել և կուռքերու տաճարներ կանգնել:

Սողոմոնի իշխանութեան ժամանակ, Հրէաստան իր փառաց ու զօրութեան գագաթնակէտն հասած էր:

10. ՀԵՐՁՈՒԱԾ. — Սողոմոնի մահուանէ յետոյ, Հրէից թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ: Իսրայելի 10 ցեղերը կազմեցին զատ տէրութիւն մը հիւսիսային Պաղեստինի մէջ՝ Իսրայելի քաղաւորութիւն անունով ու մայրաքաղաք ունեցան Սամարիան: Իսկ Յուդայի ու Բենիամինի երկու ցեղերն ալ՝ Սողոմոնի որդւոյն Ռոբովամի առաջնորդութեամբ ունեցան առանձին տէրութիւն մը որ կոչուեցաւ Յուդայի քաղաւորութիւն՝ Երուսաղէմն ունենալով իրեն Մայրաքաղաք:

11. Բայց այս երկու տէրութիւնները թէ՛ իրարու դէմ ունեցած հակառակութիւնով, թէ՛ իրենց կրօնա-

կան աւանդութիւններէն հեռանալուն և մանաւանդ գրացի ազգերու հարուածներէն շատ տկարացան: Իսրայէլի թագաւորները մինչեւ անգամ չէին արտօններ որ իրենց հպատակ Հրեաները երուսաղէմ երթան ուխտի և մեհեաններ շինելով՝ կ'ստիպէին զանոնք կուռքերու երկրպագել:

Վերջապէս, Քրիստոսէ 721 տարի առաջ, Ասորեստանի Սալմանասար Ե. թագաւորը Սամարիան պաշարելով առաւ և իր վերջին թագաւորին Ովսի հետ՝ բազմաթիւ Հրեաներ ալ գերի տարաւ ի Նինուէ: Իսրայէլի թագաւորութիւնը տեւեց 255 տարի:

12. Յուդայի երկրին ժողովուրդը՝ փոխանակ Իսրայէլի պատահած աղէտէն խրատուելու, և փոխանակ հետեւելու մարգարէից յորդարներուն՝ որոնք երուսաղէմի սպաննացող տխուր վախճանը կը գուշակէին, անտարբեր կերպով շարունակեց իր ամբարիշտ ընթացքը: Այսպէս, Քրիստոսէ 587 տարի առաջ էր որ. Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Բ. թագաւորը ահագին զօրութեամբ արշաւեց Հրէաստան, երկար պաշարումէ մը յետոյ առաւ երուսաղէմը, տաճարը քանդեց, կողպտեց անոր թանկագին հարստութիւնները և հազարաւոր Հրեայ ընտանիքներ ալ գերի տարաւ ի Բաբելոն: Յուդայի թագաւորութիւնը տեւեց 390 տարի: Այս միջոցին կ'ապրէին Նաալի ու Նեմիա երեւելի մարգարէները:

13. ՄՍՐԳԱՐԷՆԵՐ. — ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՆՃԱՆԸ. — Հրեաները 70 տարի գերի մնացին Բաբելոնի մէջ՝ զոջալով իրենց գործած ամբարշտութեան վրայ և կարօտը քաշելով իրենց հայրենի երկրին: Սակայն իմաստուն մարդիկ ու Մարգարէներ՝ կը սրտապնդէին զանոնք որ չի յուսահատին և հաւատք ունենան Իս-

րայէլի Աստուծոյն գթութեանը վրայ: Վերջապէս՝ երբ 536ին, Պարսից Մեծն Կիւրոս թագաւորը Բաբելոնի տիրեց, արտօնութիւն տուաւ Հրէից սրպէս զի վերագոնան երուսաղէմ ու տաճարը վերականգնեն: Հրեաները Զօրաբարէլի առաջնորդութեամբ իրենց երկիրը գացին և Պարսից տիրապետութեան ներքեւ շատ հանգիստ կեանք կը վարէին:

14. Պարսիկներէն յետոյ՝ Հրէաստանի յաջորդաբար տիրեցին Յոյն, Սելեւկեանք և ի վերջոյ Հռոմայեցի: Այս վերջի շրջանին մէջ, Հրէաստանի Հերովդէս թագաւորին և Հռոմի Օգոստո կայսեր օրով է որ ծնաւ աշխարհի Փրկիչը ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Բեթլեհէմի մասուրին մէջ: Սելեւկեան թագաւորներէն Սելեւկոս Գ. և Անտիոխոս Գ. շատ աշխատեցան Հրեաները կոտորած ընել, բայց չի յաջողեցան: Այս պայքարին մէջ նշանաւոր հանդիսացաւ Մակաբայեցի դիւցազն ընտանիքը: Յիսուս Քրիստոս խաչուեցաւ Օգոստոսի յաջորդ Տիբերիոս կայսեր օրով: Հրեաները Ներոնի իշխանութեան ժամանակ զլուխ քաշեցին Հռոմայեցիներէն և այս պատճառաւ 1/2 միլիոնի չափ մարդ կորաւ իրենցմէ: Իսկ Քրիստոսէ 70 տարի յետոյ, Տիսոս Հռոմայեցի զօրապետը Զատիի Տօնի մը պաշարեց երուսաղէմը և վերջապէս առաւ զայն, տաճարը կողպտեց ու կրակի տուաւ և քար քարի վրայ չի թողուց՝ ինչպէս ողբալով գուշակած էր Քրիստոս: Այս աղէտալի դէպքին մէջ երկու միլիոնի չափ Հրեայ սպաննուեցաւ և մնացեալները պարտաւորեցան գաղթել ու ցրուիլ աշխարհի այլ և այլ երկիրները՝ միշտ սպասելով և յուսալով՝ աշխարհային նիւթական այժերով սպառազէն՝ Փրկիչ Մեսիայի մը գալտեան հաստատուն հաւատքը:

Հրեաները՝ արուեստի, գիտութեան կամ ճարտարութեան մասին՝ յիշատակութեան արժանի բան մը չեն թողած: Իրենց գլխաւոր արժանիքն եղած է մեծամեծ զոհողութիւններով հաստատուն պահել միակ և ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքն ու օրէնքները՝ զորս Աշխարհի Փրկիչը Յիսուս Քրիստոս կատարելագործելով՝ հիմնեց իր երկնային վարդապետութիւնը (Քրիստոնէութիւն) որ եղած է սիրոյ, գթութեան ու եղբայրութեան գերազանց կրօնը:

**Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն**

1. Ո՞ր կը զոնուէր Պաղեստին եւ որոնք էին սանձանները. Ի՞նչ կարեւոր լեռներ ու քաղաքներ ունէր. — 2. Ո՞վ էր Աքրահամ եւ Աստուած ի՞նչ խոստացած էր անոր. — 3. Աքրահամ ի՞նչ զուակներ ունէր. — 4. Ո՞վ էր Յակոբ նահապետ եւ քանի զուակ ունեցաւ. — 5. Յակոբի սերունդը ինչո՞ւ եգիպտոս գողձեց եւ հոն ի՞նչ վիճակ ունեցաւ. — 6. Իսրայելագիր որո՞ւ ձեռքով ազատեցան Փարաւոններու ձեռքէն. — Որո՞նք ըստեցան Դատաւոր. — 8. Ի՞նչ գիտես Սաուլի եւ Դաւիթի վրայ. — 9. Դաւիթի եւ Սողոմոնի ժամանակ Հրէաստան ի՞նչ վիճակի մէջ էր. — 10. Սողոմոնի մահուանէ յետոյ ի՞նչ պատահեցաւ. — 11. Որչա՞փ տեւեց եւ ո՞վ կործանեց Իսրայէլի Թագաւորութիւնը. — 12. Յուդայի տէրութիւնը ո՞վ կործանեց. — 13. Որո՞նք էին գլխաւոր մարգարէները. — 14. Հրեաները ո՞րչափ ատեն գերի մնացին Բաբելոնի մէջ եւ որո՞ւ ձեռքով ազատեցան. — Ե՞րբ ծնաւ Յիսուս Քրիստոս. — Երուսաղէմը ո՞վ կործանեց:

**Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ի Բ**

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ. — Ա. փրկիչէի հիւս. աբեւեղեան կողմը նեղ ու երկար հովիտ մըն է ԵԳԻՊՏՈՍ՝ որու մէջէն կ'անցնի Նեղոս մեծ գետը:

2. — Աշխարհի վրայ չի կայ գետ մը որ Նեղոսի չափ օգտակար եղած ըլլայ, ինչու որ Եգիպտոսի մէջ անձրեւ չի գար, բայց ասոր փոխարէն՝ Նեղոս գետը ամէն տարի Յուլիսի մէջ կանոնաւորապէս յորդելով հովիտը կ'սողդէ և ի վերջոյ կը թողու պարարտ ու կակուզ աւաղ մը՝ որու վրայ երկրագործը շատ գելբաւ վարուցան կ'ընէ և առատ բերք կ'ստանայ:

Ահա այս պատճառաւ է որ Հեռագոսոս յոյն պատմագիրն ըսած է թէ՛ «Եգիպտոս Նեղոսի մէկ պարզեւն է». այսինքն հասկցնել կ'ուզէ որ, եթէ Նեղոս գետը գոյութիւն չունենար. Եգիպտոս ալ պարզապէս անապատ մը պիտի դառնար:

3. Հին ատեն Եգիպտոս կը բաժնուէր բնական երեք որոշ մասերու. Ա. Սուրիոյ Եգիպտոս կամ Տելլա՝ որու գլխաւոր քաղաքն էր Պիլոսիոն. — Բ. Միջին Եգիպտոս կամ Մեմփիս. — Գ. Վերին Եգիպտոս՝ որու մայրաքաղաքն էր Թեբէ կամ Թեբայիթ:

4. ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. — Եգիպտոսը ունեցած են 26 Արեայական հաւասարիւններ, այսինքն՝ թագաւորական ընտանիքներ որոնց մեծ մասին վրայ ստոյգ տեղեկութիւններ չունինք, այնպէս որ, մենք այն թագաւորներուն (Փարաւոն) վրայ





միայն պիտի խօսինք, որոնք որ և է մեծագործութիւնով մը՝ պատմութեան մէջ անուն և յիշատակ մը թողած են:

5. Եգիպտական պետութեան հիմնադիր կը ճանչցուի Մեհեա անուն եթովպացի մը որ Քրիստոսէ 2500 տարի առաջ, Միջին Եգիպտոսի մէջ Մեմփիս քաղաքն հիմնեց ու այլ և այլ կարգ կանոններ գրաւ:

6. Գ. հարստութեան մէջ կը յիշուին Քեոպս, Քեփրէն և Միկերիս փարաւոնները որոնք իրենց անունով հսկայ և ամրակուռ բուրգեր կանգնեցին և որոնք մինչեւ հիմայ կը գտնուին Գահիրէ քաղաքին մօտերը:

2. հարստութեան մէջ նշանաւոր կը հանդիսանան Նիսոկրիս գեղանի ու իմաստուն թագուհին և Օսդրասաեհն Գ. փարաւոնը՝ որոնց օրով Եգիպտոս շատ ծաղկեցաւ արուեստներու, վաճառականութեան և ճարտարութեանց մէջ: ԺԲ. հարստութեան մէջ նշանաւոր է Մեթիս, որ Լիբիոյ անապատին մէջ իր անունով ընդարձակ լիճ մը փորել տուաւ:

7. Քրիստոսէ իբր 2000 տարի առաջ, Ասիայէն Առաք կամ Փիւնիկեցի բողոքախնդիր ժողովուրդներ Եգիպտոս արշաւելով՝ տիրեցին անոր Ստորին ու Միջին մասերուն և իրենց մայրաքաղաք ընտրեցին Մեմփիսը: Բնիկ Եգիպտացիք՝ չիկրնալով այս օտարականներուն գիւժողրել, ապաստանեցան վերին Եգիպ-



Փարաւոն

տոս: Այս նորեկ բարբարիկ ժողովուրդները իրենց հետ բազմաթիւ արջառ բերած ըլլալուն համար, Եգիպտացիները զանոնք կոչեցին Հիւսոս. որ կը նշանակէ հովիւ քաղաւոր:

8. Հիւքսոսներու Եգիպտոսի մէջ տիրապետութիւնը երեք դար տեւած էր, երբ բնիկ Եգիպտացիք Թէփայիթի մէջ զօրանալով՝ յաջողեցան զանոնք բուլրովին վանել Եգիպտոսէն: Այնպէս կը կարծուի թէ՛ այս Հիւքսոսներու իշխանութեան ժամանակն էր որ Յակոբ Նահապետի ընտանիքը Եգիպտոս հաստատուեցաւ և Յովսէփ Գեղեցիկ ալ փոխարքայ եղաւ, բայց ո՛ր փարաւոնին օրով ըլլալը ստույգ չի գիտցուիր:

8. ԺԲ. և ԺԹ. հարստութիւնները շատ երեւելի եղած են երկու անուանի փարաւոններով, Սեթի Ա. բայց մանաւանդ իր որդին Սետուսը կամ Ռամսես Բ. որ մեծ հռչակ հանեց՝ Ասիոյ ու Եւրոպայի մէջ ձեռք բերած ընդարձակ աշխարհակալութիւններով: Կը պատմուի թէ մինչեւ Հնդկաստան ու Չինաստանի սահմանները տարածեց իր իշխանութիւնը: Սետուսը, իր աշխարհակալութիւններէն վերադարձին, ձեռք ձգած մեծամեծ հարստութիւնները գործածեց իր հայրենիքը շինցելու: Հիմնեց փառաւոր պալատներ. մեհեաններ, կոթողներ, երեւելի յիշատակարաններ, նոյնպէս հազորդակցութիւնը զիւրացնելու նպատակաւ՝ նորանոր ջրացքներ բացաւ և իր ժողովուրդին երջանկութեանը մեծ հոգ տանելուն համար՝ ի վերջոյ իբրեւ աստուած պաշտուեցաւ:

10. Սեսոսարի մահէն յետոյ, Եգիպտոս երկար տարիներ անկարգութեան և շփոթութիւններու մատուցեալ, մինչեւ որ Փսամեթիս անուն հայրենասէր իշխանը յաջողեցաւ թագաւորական արժանիքը ելլել և անկարգութեանց վերջ տալ:

11. Լուսամբնու և յառաջդիմասէր փարաւոնն Պըն էր Փաւմեթիոս: Օտարականներու եգիպտոսի մէջ բնակելու անիմաստ արգելքը վերցուց և Յոյներն ու Փիւնիկեցիները սիրով ընդունեց իր երկրին մէջ՝ որպէս զի վաճառականութիւն և քաղաքակրթութիւն զարգանան:

12. Նեխա ով իր որդին, ճիշտ հօրը՝ Փաւմեթիօսի օրինակին հետեւեցաւ և օտարականները ապնջականեց: Նոյնպէս, վաճառականութիւն և հազորդակցութիւն գիւրացներու նպատակաւ՝ թէեւ փորձեց Միջերկրականը ջրանցքով մը կարմիր ծովուն միացնել, բայց չի յաջողեցաւ:

Կը պատմուի թէ այս փարաւոնն էր որ Փիւնիկեցի նաւորդներու յանձնեց Ափրիկէի շրջանն ընել, սակայն այս՝ ձեռնարկութեան արգիւնքը յայտնի չէ եղած:

13. Արժանիքի կողմանէ եգիպտոսի վերջին փարաւոնը եղած է Ամասիս, որ թէպէտ ազքատիկ մարդու զաւակ և ո՛չ ազնուական սերունդէ, բայց իր խելքովն ու քաջութեամբ՝ յաջողեցաւ պարզ զօրապետութենէ մինչև թագաւորական բարձր աստիճանի հասնիլ: Ամասիսի օրով եգիպտոս շա՛տ փայլուն շրջան մ'ունեցաւ: Երկրագործութիւն, առուտուր, ճարտարութիւն և արուեստներ շատ ծաղկեցան: Ինքն ալ եգիպտոսը հոյակապ շէնքերով զարդարեց, Սփիւնքաներ կանգնեց, ջրանցքներ բացաւ և վերջապէս՝ երկրին ընդհանուր յառաջդիմութեանը մեծ հօգ տաւ:

14. Բայց զօրաւոր պետութիւններ սկսած էին նախանձիլ այս հարուստ ու գեղեցիկ երկրին և աչք անկիւ անոր վրայ:

Այսպէս, Ամասիսի յաջորդ Փաւմեթեսի օրով էր որ, Պարսից Կամբիս թագաւորը անագին բանակով մը եգիպտոս արշաւեց և Քրիստոսէ 525 տարի առաջ զայն նուաճելով՝ պարսկական գաւառ մը ըրաւ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

15. Եգիպտացիք աշխարհիս ամենէն հին քաղաքակրթեալ ազգը և արուեստից ու գիտութեանց մասին ալ՝ ուրիշ ժողովուրդներու վարպետները եղած են. գլխաւորապէս՝ Յունաց և Փիւնիկեցեաց և՛անոնց միջոցաւ ալ՝ ապագայ ժողովուրդներն օգտուած են:

Եգիպտացիք կը պաշտէին արեւը «Օսիրիս», անոր քոյրը լուսինը՝ «Իսիս» անուններով, Նեղոս գետը՝



Իսիս




Օսիրիս

իրբեւ իրենց երկրին գոյութեանը պատճառ ու բարերար, և որու անուհով երգում ալ կ'ընէին: Աստուծէ ի գատ, կը պաշտէին կովը՝ Սպիս անուհով որ իրեն յատուկ տաճար և կրօնական հանդէսներ ունէր: Նաև կը պաշտէին կատուն, շունը, մուկը, բազէն և նոյն խակ բոյսերը, այնպէս որ իրենք շատ բարի ու երանխտազէտ ժողովուրդ մ'ըլլալնուն, ինչ բան որ

իրենց օգտակար էր, անոր աստուած կ'ըսէին: Ուստի իրաւունք ունի Հերոգոտոս, երբ կ'ըսէ թէ «Եգիպտոսի մէջ Աստուծոյն ի գաւ՝ ամէն բան աստուած էր»:


17. Եգիպտացիք կը հաւատային հանդերձեալ կեանքի և հողի անմահութեան: Մեռելները հրապարակաւ կը դատէին, ու եթէ ժողովուրդին կողմէ բարի վկայութիւն արուէր, զանի մովիս կ'ընէին, այսինքն՝ զմոսեյով՝ յատուկ դամբարաններու և կամ իրենց տան մէջ խնամքով կը պահէին: Իսկ այն մարդիկ որոնք աշխարհի մէջ բարի չէին ապրած, մահուանէ յետոյ գերեզմանէ կը զրկուէին, ինչ որ շատ մեծ նախատինք էր իրենց պարագաներուն: Եգիպտական մամիաներէն շատերը գտնուած են և կը պահուին հնութեանց թանգարաններու մէջ՝ իրենց դագաղներով միասին:



Ապիս կով

Եգիպտացի ժողովուրդը երեք որոշ գասակարգերու կը բաժնուէր, Ա. Քոււմերը, Բ. Չիմուորականները, Գ. Հասարակ պարզ ժողովուրդը, որ նոյնպէս իր ստորաբաժանումներն ունէր, ինչպէս՝ եկեղացոճ, արհեսաւոր, ստուկ ևն.: Առաջին երկու դասերը մեծ յարգ և ազդեցութիւն ունէին, ինչու որ իրենցմէ կ'ընարուէին թագաւորներն ու տէրութեան բարձր պաշտօնատարները, մանաւանդ քուրմերը՝ պատկառանք կ'ազգէին բոլոր ժողովուրդին՝ իրենց բարձր հրմտութիւնով և իրրե թարգման աստուածներու կամաց:

18. Եգիպտացիք շատ պարկեշտ, բարոյականի մասին նախանձախնդիր և մանաւանդ՝ աշխատասէր ու չարքաշ ժողովուրդ մըն էին: Իրենք, Քրիստոսէ 3000 տարի առաջ մշակեցին ու ծաղկեցուցին գրականութեան, արուեստից և գիտութեան շատ մը ճիւղերը, ինչպէս՝ երկրաչափութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, բժշկութիւն, աստղաբաշխութիւն, ճարտարապետութիւն ևն.: Իրենց ճարտարապետական հրաշալիքներն են հսկայ բուրգերը (որոնք փարաւսններու իբր գերեզման կը ծառայէին), սիւնադարձ սքանչելի պալատները, մեծարուեստ քանդակներով զարդարուն տաճարները, միակտուր կրանիթէ կաթողները, սիւնքսները ևն. որոնց աւերակներն անգամ հիացում կ'ազգեն տեսողին:




Եգիպտական պալատ

ները ևն. որոնց աւերակներն անգամ հիացում կ'ազգեն տեսողին:

19. Եգիպտացիք ունէին երեք տեսակ գիր, Ա. Սրբագրում կամ Մեհենական, Բ. Քրմական, Գ. Ռամկական տառեր: Առաջինները՝ իրապէս գիր չէին, այլ՝ խորհրդաւոր պատկերներ ու նշաններ զորս կը գործածէին սրբազան վայրերու և փառաւոր յիշատակարաններու համար: Քրմական տառերը՝ միայն քուրմներուն հասկընալի մասնաւոր նշանագիրներ էին: Իսկ Ռամկականը՝ բոլոր ժողովուրդին գործածած սովորական Այբուբէնն էր: Մեհենական կամ Սրբագրոյժ տառերուն խորհրդաւոր գագոնիքը առաջին

անգամ յաջողեցաւ լուծել և կարգալ Շամայօրիոն ա- նուն ֆրանսացի գիտունը՝ որու չնորհիւ՝ եգիպտա- կան պատմութեան մէջ մութ և անորոշ մնացած շատ



Եգիպտական բեւեռագրեր

մը մասեր հետզհետէ լուսարանուեցան և մինչև հի- մայ ալ այգ՝ կարեւոր ճիւղին հետեւողներ կան և ո- րոնք կը կոչուին եգիպտաբան :

Հին եգիպտացիք իբրև թուղթ կը գործածէին տեսակ մը եղէգի ներքին նուրբ մաշկը որ կը կոչուէր Պապիրոս :



# ՓԻՒՆԻԿԵՑԻՔ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ. — Փիւնիկէ կը գտ- նուէր Պագեստինի հիւսիսակողմը՝ Լիբանան լեռնե- րուն և Միջերկրական ծովուն միջև :

Նեղ, քարոտ ու անբեր երկիր մըն էր Փիւնիկէ՝ որուն գլխաւոր քա- ղաքներն էին Ար- դոն, Տիւրոս, Սա- բեքա և Պերիքե՝ ո- ռոնք ծովեզերեայ և իրարու դաշնակից էին :

2. Փիւնիկեցիք կը պատկանէին Սե- մական ցեղին : Ի- րենց պատմութիւնը մեծ մասամբ կոր- սուած է, և ինչ որ գիտենք այսօր Փիւ- նիկեցւոց մասին, քաղած ենք իրենց հեռ յարաբերակից՝ մասնաւորապէս Հըր- եայ և Յօն ազգե- ռու պատմութիւն- ներէն ու նորանոր խուզարկութիւններէ :

Փիւնիկէի թագաւորներուն մէջ ծանօթներն են՝



Ակեհոր, որ ճանչցուած է իբրև հիմնադիր այս տէրութեան, Հիւամ և Պիգմալիոն՝ որոնք կ'ապրէին Քրիստոսէ 1000 տարի առաջ և ժամանակակից էին Դաւթի և Սողոմոնի:

Աւանդութեամբ կը պատմուի թէ, Հիւամ թագաւորին քոյրը, Եղիսէ կամ Դիսէ, Քրիստոսէ 890 տարի առաջ, Ափրիկէի հիւս. կողմը, այժմեան Թունուզի մօտ, հիմնած է Կարեհոն նշանաւոր քաղաքը, որ ժամանակ անցնելով՝ Հին աշխարհի ծովային ամէնէն ծաղկեալ ու վաճառաչահ կեդրոնը դարձաւ:

3. Փիւնիկեցիք ընդհանրապէս զինուորական ժողովուրդ մը չէին, և գրեթէ շարունակ զօրաւոր պետութիւններու հարկատու և հպատակ եղած են: Այսպէս, առաջին անգամ, Ասորեստանի Սարգոն թագաւորը Տիւրոսը պաշարելով առաւ և բնակիչներուն մեծ չափիք հատուց: Երկրորդ անգամ, Նաբուգոդոնոսոր Բ. Բաբելոնի թագաւորը այս քաղաքը հիմնայատակ կործանելով՝ բոլոր Փիւնիկէի տիրեց: Իսկ վերջին հարուածը տուաւ Մեծն Ալեքսանդր թագաւորը, որ Քրիստոսէ 333 տարի առաջ, կղզեակի մը վրայ շինուած նոր Տիւրոսը պաշարելով առաւ և Փիւնիկէն իր ընդարձակ աշխարհակալութեան միացուց:

Այս նշանաւոր դէպքէն յետոյ, Փիւնիկեցիք սկսան գունդադուռնոց գաղթել իրենց նոր հայրենիքը Կարքեդոն, այնպէս որ, Փիւնիկեցւոց պատմութեան շարունակութիւնը պիտի տեսնենք Կարքեդոնականին մէջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Փիւնիկեցի փոքրաթիւ ժողովուրդը՝ մարդկային ազգի պատմութեան մէջ փառաւոր յիշատակ մը թողած է՝ իբրև Հին աշխարհի առաջնակարգ վաճառական, յանդուգն նաւարկու և արուեստագէտ ժողովուրդը որ, մեծապէս նպաստած է ընդհանուր քաղաքակրթութեան:

5. Ինչպէս տեսանք, Փիւնիկէ քարոտ և անջրդի երկիր մը ըլլալով, ծոցովուրդը ստիպուեցաւ իր բազմն ու ապագան՝ հեռաւոր աշխարհներու մէջ փրնտուել: Ուստի, օգտուելով՝ Լիբանան լեռներուն՝ հարուստ անտառներէն՝ Փիւնիկեցիք նաւեր շինեցին, և սկսան իրենց այլ և այլ նապարանքները հեռաւոր երկիրներ փոխադրել:

6. Փիւնիկեցիք յաջորդաբար՝ գաղթականութիւններ հիմնեցին Կիպրոս, Սիկիլիա, Սարսենիա, Մալքա ու Եգեական ծովու կղզիներուն մէջ, նոյնպէս՝ հիմնեցին Հար. Ֆրանսայի և Սպանիոյ մէջ՝ Քասեց (Քասիքոս), Քարթեժա (Կարթագինէ), Մալաքա (Մալաքա) և Հիսթալիս (Մելիլ) քաղաքները: Հիւս. Ափրիկէի մէջ՝ Կարքեդոնէն զատ՝ հիմնեցին Ուսիկի և Ադրումէսի գաղթավայրերը:

Փիւնիկեցիք Հեռակիան Կորոզներէն (Ճիպրալ-թարէն) ալ դուրս ելլելով՝ մտան Ատլանտեան ովկիանոս: Նախ գացին Քանարեան կղզիները, ապա դէպի հիւսիս՝ Մեծն Բրիտանիա ևն. մինչև Պալթիկ ծովուն հարաւային երկիրները՝ ամէն կողմ բազմ և թանկագին հարստութիւններ փնտռելու նպատակաւ:

7. Երբ պահ մը խորհինք որ, հին դարերու մէջ

ուր հիմակուան նաւաշինութեան արուեստին կատարելագործութիւնը կը պակսէր, երբ տակաւին զոյութիւն չունէր նաւապետն առաջնորդող կողմնացոյցի սքանչելի գիւտը, և նաւորդները՝ միայն աստղերն ունէին իրենց ուղեցոյց, ա՛յն ատեն կրնանք որոշ գաղափար մը կազմել թէ ի՞նչ մեծ քաջարտութիւն էր և ի՞նչ ահագին կարեւորութիւն ունէր՝ բնութեան կատարի տարրերուն դէմ մաքառելով՝ անծանօթ ծովերու և անեզր ովկիանոսներու մէջ Փիւնիկեցւոց կատարած խելգխ նաւարկութիւնը:

Տ. Սակայն Փիւնիկեցիք՝ միայն ծովեզերեայ երկիրներու հետ չէր որ վաճառականութիւն կ'ընէին: Իրենց բազմաթիւ կարաւանները կ'երթեւեկէին նաեւ Արաբիս, Բաբելոն, Պարսկաստան, Բալթիա, Հնդկաստան և մինչեւ Չինու սահմանները, և նաւերով ալ՝ Ասիոյ ծովեզերեայ երկիրները: Փիւնիկեցիք այս հարուստ երկիրներէն կ'ստանային թանկագին քարեր, մարգարիտ, փղսկր, խնկեղէն, համեմներ, գեղարոյսեր, ընտիր կերպաներ, հազուագիւտ պըտուղներ ևն. զորս կը փոխանակէին իրենց սպրանքներուն հետ և Արեւմուտքի ազգերուն շատ սուղ գինով կը ծախէին:

9. Փիւնիկեցիք որքան համբաււոր էին իրրեւ առաջին կարգի նաւարկու և վաճառական ժողովուրդ, նոյնչափ ալ նշանաւոր էին իրենց արուեստներովն ու ճարտարութեամբ: Մասնաւորապէս Սիդոն և Տիրոս քաղաքներուն մէջ կը գտնուէին երեւելի գործարաններ՝ ուր կը պատրաստուէին բուրգէ և վուչէ ընտիր կերպաներ, Արեւելքի ժողովուրդներուն ճաշակին յարմար զարդեղէններ, կանացի ձեռական աշխատութիւններու յատուկ գեղեցիկ գոր-

ծիքներ, մեծարժէք ու ճաշակաւոր հողէ անօթներ, ոսկեղէն ու արծաթեղէն զարդեր, փղսկրէ ու սաթէ այլ և այլ առարկաներ ևն.: Բայց ասոնց մէջ ամէնէն յարգի ու շատ փնտռուածներն էին ծիրանիով ներկուած և նուրբ կերպասէ զգեստները որոնք համբաււոր էին Սիդոնական Զգեստներ անուանով և Արեւելքի վեհապետներն ու մեծամեծ իշխանները միայն գործածելու իրաւունք ունէին զանոնք:

10. Կ'ըսուի թէ՛ Փիւնիկեցիք կարեւոր գիւտեր ալ ըրած են, ինչպէս Միրանի ներկը՝ զոր գիպուածով ձեռք բերած են, ապակիտ, դրամը, հեղուկ և թանձր մարմիններ կշռելու կանոնաւոր չափեր ու կշիռներ, մանուանգ Այբ ու Բեկը: Միայն սա ճշմարիտ է որ, Փիւնիկեցիք, Եգիպտական նշանադիրները ընդօրինակելով՝ պարզեցին, համառօտեցին և 22 գրի վերածելով՝ ընթացիկ Այբ ու Բեկ մը շինեցին զոր Յոյներն ու Հռոմայեցիներն ալ ընդունեցին և ժամանակ անցնելով՝ եւրոպական արդի ազգերն ալ ինչ ինչ փոփոխութիւններով սկստան գործածել զանոնք:

Թէեւ Փիւնիկէի ամէն մէկ քաղաք իր առանձին իշխանն ու օրէնքներն ունէր, բայց արտաքին յարձակումներու դէմ երկիրը պաշտպանելու նպատակաւ՝ մէջերնին նիզակակցութիւն մը կազմած էին: Այս դաշնակից քաղաքներուն մէջ ամէնէն երեւելիներն էին և փոփոխակի մայրաքաղաքի դերը կը կատարէին Սիդոն և Տիրոս:

11. Մինչեւ հիմայ խօսեցանք Փիւնիկեան ազգին նիւթական ա՛յն առաւելութիւններուն վրայ՝ որոնցմով եզան Հին Աշխարհի քաղաքակրթութեան միջնորդները և իրենց ընդարձակ վաճառականութեան ու գաղթականութիւններուն շնորհիւ՝ Արեւելքի և Արեւ-

մուտքի ժողովուրդներուն միութեան գիծը: Բայց ժամանակն է ըսել թէ, այս ազգը բարոյականի տեսակէտով ոչինչ կ'արժէր: Փիւնիկեցիք բնութեամբ գոռոզ, նենգամիտ, շահամուլ, խաբերայ և մինչեւ անգամ իրենց ազգակից թշուառին անկարեկից ու անտարբեր էին: Շուայութիւն, մեղկութիւն, բարուց ապականութիւն խոր արմատներ ձգած էին իրենց ամէն դասակարգերուն մէջ:


12. Փիւնիկեցւոց կրօնքն ալ իրենց ազգային նկարագրին պէս լիտի և անգութ էր: Գլխաւոր աստուածնին էր Բա'աղ կամ Մողոզ — իբրեւ կենդանաբար և մահացնող զօրութիւն — որուն համար ամէնէն հաճելի նուէրն էր մարդկային կեանքի ողջակէզը: Այս պատճառաւ՝ Մողոզի պղնձէ արձանը հրաշէկ տաքցնելով՝ անոր ձեռքերուն մէջ կը նետէին մանկիկներ՝ որոնց սրտաճովիկ ճիչերը չի լսելու համար, սրինդներ ու ծնծղաներ կը զարնէին:

Փիւնիկեցիք կը պաշտէին նաեւ Անահիթ կամ Միլիդա անուն գիցուհին՝ որուն ի պատիւ եղած հանդէսներուն մէջ էր որ բացայայտ կերպով կը պարզուէին իրենց անբարոյականութեան ամէնէն նողկալի տեսարանները:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞ր կը գտնուէր Փիւնիկէ եւ ի՞նչ էր իր բնական կազմութիւնը. — Որո՞նք էին իր գլխաւոր քաղաքները եւ ո՞ր շինուած էին. — Ո՞ր ազգերէն բաղած ենք իրենց պատմութիւնը. — Ո՞ր թագաւորները ծանօթ են. — Կարբեղոն օաղաղարը ե՞րբ եւ որո՞ւն ձեռքով հիմնուեցաւ. — Փիւնիկէի յաջորդարար որո՞նք տիրեցին. — Փիւնիկեցիք ի՞նչ բաներով նըշանաւոր եղած են. — Ո՞ր երկիրներուն մէջ գաղթականու-

թիւններ հիմնեցին. — Ի՞նչ գիտես իրենց նաւարկութեան արուեստին վրայ. — Յամարի վրայ ո՞ր երկիրներուն հետ առուտուր կ'ընէին. — Ի՞նչ ապրանքներ կը փոխանակէին. — Իրենք ի՞նչ տեսակ ապրանքներ կը պատրաստէին. — Հին աշխարհի քաղաքակրթութեան մէջ ի՞նչ կարեւոր դեր կատարած են Փիւնիկեցիք. — Ի՞նչ զիւտեր բրած են. — Իրենց կրօնքին եւ ազգային նկարագրին վրայ ի՞նչ գիտես:



ԴԻՏՈՂ. — Փափաքելի է որ Մայրաքաղաքիս Հայ վարժարանաց մէջ պատմութեան դաս աւանդող Յարգելի պաշտօնակիցներս, իրենց աշակերտները երբեմն առաջնորդին Օսմանեան հնութեանց թանգարանը — պատմութեան գործնական դասարանը — ուր ցուցադրուած պիտի գտնեն՝ Արեւելեան Հին ազգերու, Յունաց ու Հռոմայեցւոց վերաբերեալ հիւանալի ոսկեղէն ու արծաթեղէն ձեռագործներ, կանացի զարդեղէններ, այլ և այլ նիւթերէ անօթեղէններ, արձաններ ու արձանիկներ, հին դրամներ, զէնքեր, դամբարաններ, Եգիպտական մոմիաներ ևն. ևն. որոնք կենդանի ու տպաւորիչ կերպով կը պատկերացնեն ուսանողին մտքին ու երեւակայութեան մէջ՝ այն ամէն բաները՝ զորս միայն բերանացի կամ գրաւոր նկարագրութեամբ ուսած և իր մատաղ երեւակայութիւնով ենթադրական կամ անճիշտ գաղափար մը կազմած էր:



# ՄԱՐԲ ԵՒ ՊԱՐՍԻԿԲ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐԲ. — Մէկ կողմանէ Տիգրիս ու Ինդոս մեծ գետերուն, և միւս կողմէն Կասպից ծովուն և Պարսկային ծոցին միջեւ կը տարածուի ընդարձակ և տեղ տեղ անապատային լեռ-




նազաշտ մը, որ իր նախկին բնակիչներուն ցեղին անունով կը կոչուէր Իրան կամ Արեաց Աբխառն:

2. Արիներու այս մեծ ընտանիքին կը պատկանին՝ Մարերէն ու Պարսիկներէն ի զատ, Հայերը, Հնդկները ու Եւրոպական արգի ազգերուն մեծադոյն մասը որոնք կը կոչուի նաեւ Հնդկա—Եւրոպական ընտանիք:

Հին ատեն՝ Արեաց աշխարհին մէջ կը բնակէին Բակարիացիք, Պարթեք, մանաւանդ Մարերն ու Պարսիկները որոնք ի վերջոյ միանալով՝ զօրաւոր պետութիւն մը կազմեցին,

3. Մարերը երեւելի էին իրրեւ կորովի, չարքաշ և աշխատասէր ժողովուրդ: Ասոնք այլ և այլ ցեղերու բաժնուած, իրենց առանձին գլխաւորներով կը



Պարսկական պալատ

կառավարուէին և հարկատու էին Ասորեստանի հզօր վեհապետներուն:

4. ՎԱՐՐԱԿԷՍ ԵՒ ԴԻՈՎԿ. — Ինչպէս Ասորեստանի պատմութեան մէջ պիտի տեսնենք, Մարաց Վարբակէս զօրապետը՝ միանալով Բաբելոնի Բելշախ իշխանին հետ՝ Մարդանարալի տէրութիւնը կործանեց և այս առթիւ Մարերն ալ իրենց անկախութիւնը զրտնելով՝ ունեցան առանձին պետութիւն մը:

Վարբակէսի մահուանէ յետոյ՝ Մարաստանի մէջ մեծ անկարգութիւններ պատահելուն, ժողովուրդին խնդրանքով՝ թագաւորական զահը ելաւ Դիովկ անուն պարզ գիւղացի մը, որ իր խելքին և արդարասի-



բութեանը պատճառաւ՝ ամէնուն համարումը շահած էր: Դիովկ 50 տարիի չափ իշխանութիւն վարելով՝ երկիրը խաղաղեց, իմաստուն օրէնքներ դրաւ և հիմնեց Եկրասուն եօթնագարիսպ հոյսկապ քաղաքը:

5. ՓՐԱԻՈՐԴ ԵՒ ԿԻՍՔՍՍՐ. — Դիովկի յաջորդեց իր պատերազմատէր որդին Փրաուրդ, որ Պարսկաստանը նուաճելով՝ հիմնեց Մար—Պարսկական տէրութիւնը: Փրաուրդ ուզեց նաեւ Ատորեստանի Նաբուգոդոնոսը Ա. թագաւորին հետ ալ չափուիլ, բայց պատերազմը կորսնցուց և ինքն ալ սպաննուեցաւ:

6. Փրաուրդի յաջորդեց իր որդին Կիախար, որ թէպէտ իր հօրը վրէժը լուծելու նպատակաւ Նինուէն պաշարեց, բայց ճիշտ այդ միջոցին իմանալով որ, այժմեան Սիպերիոյ մէջ բնակող Սկիթացի անուն բարբարոս ժողովուրդը Մարաստան արշաւեր է, Նինուէի պաշարումը վերցուց և փութաց իր երկիրները պաշտպանել: Սակայն չկրնալով զանոնք բոլորովին վանել, յանձն առաւ տարեկան տուրք մը վճարել անոնց: Քանի մը տարի յետոյ, Կիաքսար, Սկիթացեաց գլխաւորները խարէութեամբ սպաննելէ յետոյ, Բարելոնի Նաբուպալասար իշխանին հետ միանալով՝ գնաց Նինուէն պաշարմամբ առաւ ու կործանեց:

Մարաց վերջին թագաւորը եղաւ Ածդահակ, որու օրով Պարսից Կամբիւս իշխանին որդին և իր թուր Կիւրոս, Մարաստանի տիրելով՝ հիմնեց Մար—Պարսկական մեծ և հզօր պետութիւնը:

### Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Պ Ա Ր Ս Ի Ց

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐԹ. — Բուն Պարսկաստանի սահմաններն էին՝ հիւսիսէն՝ Մարասան, արեւելքէն՝ Կրմանիա, հարաւէն՝ Պարսկային ծոց, իսկ արեւմուտքէն՝ Բաբելասան:

Դիխաւոր քաղաքներն էին Շօս, Պերսեպոլիս և Փասարգարս:

#### Կ Ի Ի Ր Ո Ս

2. Արեւելքի վեհապետներուն մէջ մեծ անուն թողած է Կիւրոս, ո՛չ միայն իբրեւ ընդարձակ պետութեան մը հիմնադիրը և մեծ աշխարհակալ, հապա նաև՝ իբրեւ վեհանձն և ժողովրդատէր թագաւոր: Իր մանկութեան չըջանի մասին կը պատմուին խել մը առասպելներ՝ որոնք պատմութեան հետ բնաւ յարաբերութիւն չունին: Սա միայն ճշմարիտ է որ, Կիւրոս՝ Մարաց Ածդահակ թագաւորին թուր և Պարսից Կամբիւս կուսակալին զաւակն էր, և թէ՛ Մարաստանի մէջ լաւ դաստիարակութիւն մը ստանալով վերադարձած էր իր երկիրը Պարսկաստան:

3. Կիւրոս, երբ իր հօրը յաջորդեց, առաջին մտածումը եղաւ երկիրը բարեկարգել: Այս նպատակաւ՝ Պարսից ցիրուցան ցեղերը միացնելով՝ անոնց մէջ քաղաքական ու զինուորական կարգ կանոն դրաւ: Յետոյ, Մարաց Արբակ կամ Վարբակիս իշխանին հետ դադանապէս նիզակակցելով՝ քալեց իր պապուն դէմ և մեծ ճակատամարտի մէջ մէջ անոր յաղթելով՝ տիրեց Մարաստանի և այսպէս հիմնեց Մար—Պարսկական ընդարձակ պետութիւնը՝ Գրիստոսէ 650 տարի առաջ:

4. Ասկից յետոյ կ'սկսի կիւրոսի ընդարձակ աշխարհակալութեանց շարքը: Նախ՝ տիրեց Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը գտնուող Լիւդիոյ տէրութեան՝ որու թագաւորը Կրեսոս՝ թէպէտ մեծ համբաւ ունէր իբրեւ աշխարհիս ամէնէն՝ մեծահարուստ անձը, բայց սկսած էր՝ Պարսից նորահաստատ հզօր պետութիւնը սպառնալիք մը նկատել իր երկրին: Իրօք ալ, կիւրոս յաղթեց Կրեսոսի և պատերազմին մէջ թէեւ զանի գերի բռնեց, բայց վեհանձնութեամբ վարուեցաւ հետը և ազատ արձակեց:

Լիւդիոյ տիրելէ յետոյ, կիւրոս իր յաղթական ընթացքը շարունակեց դէպի արեւմուտք և նուաճեց Արշիպեղագոսի երկայնքը (Յոնիա) գտնուած Յոյն գաղթականութիւնները՝ որոնք բազմամարդ, հարուստ և ծաղկեալ վաճառատեղիներ էին:

5. Իսկ, Քրիստոսէ 538 տարի առաջ էր որ, կիւրոս Բաբելոն ամուր քաղաքը պաշարեց և հնարքով մը առաւ զայն: Այս խառնաշփոթութեան մէջ սպաննուեցաւ Բաբելոնի վերջին իշխանը Պալգազար: Կիւրոս, քաղաքին բնակչաց հետ շատ վեհանձնութեամբ վարուեցաւ, մասնաւորապէս արածոնեց Հրեաներուն՝ որպէս զի վերադառնան Երուսաղէմ՝ ուսկից 70 տարիէ ի վեր գերի բերուած էին Նաբոլզոդոնտոսորի ձեռքը:

6. Կիւրոս շարունակեց իր աշխարհակալութիւնները բոլոր ծանօթ Ասիոյ մէջ՝ մինչեւ Հնդկաստանի սահմանները: Բայց չկրցաւ ունեցածովը գտնանալ և իր փառասիրութեանը չափ մը դնել: Ուստի, իր աէրութեան հիւս. կողմը (այժմեան Սիրպերիոյ մէջ) բնակող բարբարոս Ակիւթացիներուն դէմ քաղեց, սակայն չարաչար յաղթուելով՝ ցիրուցան բանակովը վերադարձաւ Պարսկաստան: Ըսողներ ալ կան որ,

Կիւրոս, Ակիւթացոց Թօմիւր թագուհին ձեռքը գերի իննալով՝ նախատանօք սպաննուած ըլլալ: Ինչպէս որ իր մանկութեան պարագաներն անստոյգ և առասպելախառն են, իր մահն ալ նոյնը եղած է:

Կիւրոսի հիմնած ընդարձակ կայսրութեան սահմաններն էին՝ Յաբատսկս գետէն մինչեւ Եգիպտոս և Ինդոսէն մինչեւ Եգեական ծով (Արշիպեղագոս):

7. ԿՄՄԻԻՄ. — Կիւրոսի յաջօրեց իր անդրանիկ որդին Կամբիւս, որ հօրը բարեմասնութիւններէն զուրկ, գինեմոլ ու սնափառ մէկն էր: Քանի որ իր հայրը բոլոր ծանօթ Ասիան նուաճած էր, ինքն ալ ուղեց Ափրիկէն աշխարհակալել: Ուստի անապին բանակով մը արշաւեց Եգիպտոս, յաղթեց Փաւսնետ թագաւորին, Մէմփիսը կողոպտեց և շատ մը Եգիպտացիներ սուրէ անցուց: Այսպէս, Քրիստոսէ 525 տարի առաջ՝ Եգիպտոս եղաւ Պարսկական նահանգ մը:

8. Կամբիւս միաքը դրաւ նուաճել նաեւ Կարգեդոնը որ, ինչպէս գիտենք, Փիւնիկեցոց հիմնած ամէնէն մեծ ու վաճառաչան գաղթալայրն էր: Բայց այս նպատակին համեղու համար՝ նաւատորմիղի անհրաժեշտ պէտք ունէր: Ուստի դիմեց Եգիպտոսի մէջ բնակող Փիւնիկեցիներուն՝ որպէս զի իրենց նաւերը փոխ տան: Բայց ասոնք յանձն չառին իրենց տունը իրենց ձեռքովը կործանել, որով Կամբիւս ստիպուեցաւ այս խորհուրդէն ետ կենալ:

9. Այն ատեն Պարսից թագաւորը իր փառասիրութեանը ուրիշ տոտարէզ մը փնտռեց: Եգիպտոսի արեւմտեան կողմը, Ամոնի ովասիսին մէջ՝ Արամագդի մեհեանը կար, որ իր պարունակած թանկագին հարստութիւններուն կողմանէ մեծ համբաւ ունէր: Կամբիւս բռնակ մը զրկեց այդ մեհեանը կողոպտե-

լու համար, բայց զօրքը՝ աւագային մրկի մը պատահելով կորաւ : Այս երկրորդ անյաջողութեան վըրայ, համբիւս իր բանակին գլուխն անցած՝ ճամբայ ելաւ դէպ ի հարաւ՝ Եթովպիոյ տիրելու համար : Բայց մէկ կողմանէ պաշարի չզոյութիւնը և միւս կողմանէ՝ երկրին բնական դժուարութիւնները բանակը կոտորեցին՝ որով համբիւս ամօթահար ու մոլեգնած՝ վերագարձաւ Եգիպտոս : Ճիշտ այս միջոցին էր որ բարեպաշտ Եգիպտացիք իրենց մեռած Ապիսին տեղ նոր մը գտած ըլլալով՝ հանդէսներ կը կատարէին ամէն կողմ : Կամբիւս կարծելով որ իր կրօն ձախորդութիւններուն վրայ կը խնդան և ուրախութեան ցոյցեր կ'ընեն, սաստիկ կատողելով՝ Ապիս կովը իր ձեռքովը սպաննեց, բուրմերը ձեծել տուաւ և իր անլուր անգթութիւններովը ամէն կողմ ան ուսարսափ սփռեց :

10. Երեք տարիի չափ կար որ Կամբիւս Եգիպտոս կը գտնուէր, երբ օր մը խմանալով որ, Պարսկաստանի մէջ՝ իր մեռած Շմերզ անուն եղբորը նըմանող մօզ մը՝ ժողովուրդը խաբելով գահ ելեր է, իսկոյն ճամբայ ելլելու պատրաստութիւն տեսաւ : Բայց գինով վիճակի մէջ ձի հեծնելու պահուն, կ'ըսեն թէ՝ ինքզինքը դաշտնով վերաւորեց դիպուածաւ և ասոր հետեւանքով քիչ ատենէն մեռաւ (522) :

11. ԴԱՐԷՆՆ ՎԵՏԱՍՊԵՍԱՅ (521—485). — Խաբեբայ Շմերզին ուրախութիւնը հազիւ տարի մը տևեց, ոչովհետեւ եօթը Պարսիկ իշխաններ անոր նենգութիւնը երեւան հանելով՝ իրեն աջակից ու պաշտպան մողերովն սպաննեցին և ի վերջոյ՝ իրենցմէ մէկը Դարէն Վեսասպեան արքայական աթոռը բարձրացուցին : Դարէն, որ ժառանգական օրինաւոր թագաւոր մը

չէր համարուեր, իր անձը և իշխանութիւնը ժողովուրդին պատկառելի ընելու նպատակաւ՝ Կիւրոսի Ասոսա անուն աղջկանը հետ ամուսնացաւ :

12. Դարեհի առաջին գործն եղաւ, Շմերզի իշխանութեան օրով գլուխ քաջող գաւառները հնազանդեցնել : Ասոնց մէջ ամէնէն կարեւորն էր Բաբելոնը ըմբոստութիւնը : Դարեհ ամբողջ մէկ տարի պաշարեց Բաբելոնը, բայց անոր անառիկ ամրութեանն առջեւ յուսահատ՝ տեղի տալու կը պատրաստուէր, երբ իր զօրապետներէն մէկը՝ Զոպիւրոս, խաբէական միջոցով մը յաջողեցաւ քաղաքն առնուլ<sup>(\*)</sup> : Դարեհ, ապագային այս տեսակ դժուարութեանց չիհանդիպելու համար, քաղաքին պղնձէ հսկայ դուռները վերցուց և պարիսպներուն մեծ մասն ալ կործանել տուաւ :

13. Ինչպէս տեսանք, Արեւելքի վեհապետները ընդհանրապէս իրենց փառքը կը փնտռէին ընդարձակ աշխարհակալութիւններու մէջ : Դարեհ ալ՝ զօն չեղաւ տէրը ըլլալուն այնպիսի լայնատարած պետութեան մը որ իր մէջ կը պարունակէր բոլոր ծանօթ Ասիան ու Ափրիկէի ձգահարը՝ եղող մեծահարուստ Եգիպտոսը, և ուղեց Եւրոպայի ալ տիրանալ : Այս նպատակաւ՝ Դարեհ անապին բանակով մը ճամբայ ելաւ դէպի արեւմուտք, Կ. Պոլսոյ նեղուցէն անցաւ Թրակիա (հիմակուան Խաիրնէի կուսակալութիւնը) և յառաջանալով դէպի հիւսիս՝ Իսքր (Դանուբ) գետէն անդին, և ուղեց այժմու Ռուսիոյ և հարաւ. Ռուսիոյ մէջ բնակող Սկիւրացի բարբարոս ժողովուրդները նուաճել : Բայց ասոնք, փոխանակ

(\*) Այս, եւ նմանօրինակ պարագաները եթէ Յարգոյ ուսուցիչը հարկ տեսնեն, կրնան նկարագրել աշակերտին :

պատերազմելու, երկիրն աւերելով՝ թշնամիին առաջքէն խոյս կուտային, այնպէս որ, Դարեհ այս ամայի երկիրն մէջ ընդունայն թափառելէ յետոյ՝ պարտաւորեցաւ վերագառնալ և միտքը դրաւ Յունաստանը նուաճել (506—490):

Բայց պատմութեանս շարունակութեանը մէջ առիթ պիտի ունենանք տեսնելու թէ՛ այնքան ընդարձակ և արտաքին երեւոյթով այնքան զօրաւոր կարծուած Պարսկական պետութիւնը՝ բարոյական ոյժի տեսակէտով ո՛րքան տկար, և նոյն իսկ փոքրաթիւ՝ բայց արեւմտեցա Յոյն ազգին դիմադրելու անգամ ո՛րքան անկարող պիտի գտնուի եղեր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

14. Արիական ցեղերուն մէջ նշանաւոր էին Պարսիկները, իբրև չարքաշ, սակաւապետ և պարզասէր ժողովուրդ: Մինչդեռ Մարերը ասոր հակառակն էին: Սակայն ժամանակ անցնելով՝ երբ հարստութեան ու ճոխութեան տիրացան, Պարսիկներն ալ վարքով ու բարքով սկսան վատթարանալ:

Ասիական ուրիշ ազգերու կրօնքին հետ բաղդատելով, ի սկզբան Պարսից կրօնքը շատ պարզ ու բնական էր: Բայց Քրիստոսէ վեց դար առաջ՝ Զրադաես անուն երեւելի մոզը՝ սկսաւ քարոզել նոր կրօնք մը՝ որու վարդապետութիւնները ամփոփուած են Զեհն—Ավեսթա, այսինքն՝ Իանն կենդանի անուն նուիրական մատենանին մէջ:

15. Զրադաշտ կը վարդապետէր թէ՛ տիեզերքը կառավարող երկու համազօր աստուածութիւններ

կան, Ումիդդ և Ահրիման: Առաջինը՝ բարութեան ոգին ու հեղինակն է: Անկէ կը բղխի ամէն ինչ որ բարի է, ինչպէս Արեւը (Միթրա) որ իր պատկերն է, լոյսը, կեանքը, երջանկութիւնը, անմահութիւնը ևն.: Իսկ Ահրիման կամ Արհմն՝ չարութեան ոգին և աղբիւրն է: Իրմէ ծնունդ կ'առնեն խաւարը, բնական պատուհասները, տեսանելի և աներեւոյթ բոլոր չարիքները, մահը ևն.:

Բարին ու չարը, լոյսն ու խաւարը, օգտակար և վնասակար տարրերը, կըսէր, Զրադաշտ, շարունակ կատաղի պայքար մը կը մղեն՝ տիեզերական տիրապետութիւնը իրարու ձեռքէ յափշտակելու համար, բայց վերջնական յաղթանակը պիտի մնայ Որմիդդի՝ որու շնորհիւ՝ բարութեան յաւիտենական լոյսը պիտի ծաւալի տիեզերքի վրայ:

16. Զրադաշտի այս պարզ կրօնքը քիչ ատենէն աղաւաղեցաւ, որովհետեւ Մարերը սկսան հետեւել իրենց դրացի ժողովրդոց նախապաշարունակներուն և աւելորդապաշտութեանց: Մոգերն էին որ ի պատիւ Որմիդդի հաստատեցին՝ ատրուշաններու վրայ մըշտնջեանական կրակ վառելու սովորութիւնը և այս պատճառաւ Պարսիկները կոչուեցան Կրակապաւս: Այս ազանդին հետեւող Պարսիկներէն մինչեւ հիմայ փոքր մաս մը կը գտնուի Կովկասի մէջ՝ Պախու քաղաքին շրջակաները:

17. Ինչպէս ամէն հին հեթանոս ազգերու մէջ, Պարսից մոգերն ալ առանձին դաս մը կը կազմէին և մեծ՝ ազգեցութիւն ունէին թէ՛ ժողովուրդին և թէ՛ վեհապետաց վրայ: Ասոնք ալ, Քաղդէացի քուրմերուն պէս՝ կը պարծենային թէ իրենք գերմարդկային զօրութիւն ունին պատգամները մեկնել և մարդոց ապագան գուշակելու:

18. Պարսից կառավարութիւնը բացարձակ միապետութիւն էր և թագաւորը, որ կը կոչուէր Արքայից Արքայ (Շահն Շահ), կ'ապրէր փառաւոր արքունիքի մէջ՝ շրջապատուած ազնուական ցեղէ հազարաւոր սպասարկուներով, որոնք խորին ակնածութեամբ ու երկրպագելով կը ներկայանային անոր: Դարեհ, տէրութիւնը բաժնեց քսան մարզդաւանութեան (Սատրապութիւն) զորս կը կառավարէին մէկ մէկ երեւելի նախարարներ՝ իրենց ստորակարգ պաշտօնեաններով: Բայց ժամանակ անցնելով՝ այս մարզպանները տեսակ մը ինքնագլուխ վեհապետներ դարձան և նոյն իսկ բուն թագաւորին հրամաններուն կ'անաստէին: Բայց պէտք է գիտնալ որ, Դարեհ, ինք առաջինը եղաւ իր տէրութեան մէջ կանոնաւոր վարչութեան մը հիմերը դնող: Թէ առեւտրական և թէ զինուորական հաղորդակցութիւնը զիւրացնելու համար՝ Արքունի ճամբաներ շինել տուաւ, կանոնաւոր թղթատարութիւն սահմանեց և վարչական շատ մը ճիւղերու մէջ հակակշիռ մտցուց:

Դարեհի օրով Պարսից կառավարութիւնն սկսաւ չափաւոր միապետութիւն ըլլալ:

19. Պարսիկ մանուկները մեծ խնամով կը կրթութուէին, նախ իրենց ծնողաց կամ բարեկիրթ կիներու ձեռք և ապա՝ պետական խնամակալ պաշտօնեաններու միջոցաւ՝ որոնք կը սորվեցնէին ձի հեծնել, նետ արձակել, մարմնամարզ, զինուորական կրթութիւն, իրենց նախնիքներու քաջագործութեանց պատմութիւնները և կրօնական ու պատերազմական երգեր: Պարսիկ տղոց ամենէն աւելի աչքի գաբնող մէկ առաքինութիւնն էր բնաւ սուս չիսօսիլ: Իսկ չափահասները առ հասարակ, իրենց չափն ու

աստիճանը ճանչնալով՝ անոր համեմատ մեծ յարգանքով և քաղաքավարութեամբ կը վարուէին իրարու հետ: 20. Իրաւ է որ, Պարսիկները իրենց նուաճած ազգերէն նորանոր արուեստներ ու ճարտարութիւններ սորվեցան, բայց չկրցան զանոնք կատարելութեան հասցնել: Յոմարային վաճառականութիւնը շատ ծաղկած էր, նոյնպէս երկրագործութիւնը: Պարսիկները իրենց յատուկ ճարտարապետական ոճ մըն ալ ունեցան որ սակայն չէր հաւասարէր Ասորականին ու Եգիպտականին: Այս ճարտարապետական շինուածոց մնացորդները կ'երեւին հին Պերսեպոլիս քաղաքին մօտերը:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

1. Ո՞ր կը գտնուէր Մարաստան. — 2. Արեաց աշխարհին մէջ ո՞ր ազգերը կը բնակէին. — 3. Մարերը ի՞նչ յատկութիւններով երեւելի էին. — 4. Ո՞վ էր Վարթակէս, Դիովկ ո՞ր քաղաքը հիմնեց. — 5. Փրաւորը ի՞նչ վախճան ունեցաւ. — 6. Խօսէ՞ նիւստարի վրայ:

1. Ո՞ր կը գտնուէր Պարսկաստան, որո՞նք էին զիսաւոր քաղաքները. — 2. Ո՞վ էր Կիւրոս. — 3. Արո՞ւ ղէմ պատերազմեցաւ եւ ի՞նչպէս հիմնեց Մար-Պարսկական պետութիւնը. — 4. Ի՞նչպէս տիրեց Լիւզիոյ. — 5. Ո՞ր թուականին աշխարհակալեց Բարեւոնը. — 6. Ո՞րմէ յաղթուեցաւ ու ե՞րբ մեռաւ, որո՞նք էին Կիւրոսի աշխարհակալութեան սահմանները. — 7. Ո՞վ եղաւ իր յաջորդը եւ ո՞ր երկիրը աշխարհակալեց. — 8. Ինչո՞ւ չկրցաւ Կարբեղոնի տիրել. — 9. Նկարագրէ՛ եթովպական արշաւանքը. — 10. Ի՞նչպէս մեռաւ Կամբիս. — 11. Ո՞վ էր Դարեհ Վշտասպեայ. — 12. Ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ. — 13. Ի՞նչ հնարքով տիրեց Բարեւոնի. — 14. Դարեհ ի՞նչ նպատակաւ եւ ի՞նչ ծածրով Եւրոպա արշաւեց. — 15. Ի՞նչ զիտեա Պարսից նկարագրին վրայ, ի՞նչ կրօնք ունէին, ո՞վ էր Զրադաշտ, ի՞նչ էր իր վարդապետութեան հիմք. — 16. Կրակապաշտութիւնը ի՞նչպէս մտաւ Պարսից մէջ. — 17. Մոզերը ի՞նչ ազդեցութիւն ունէին. — 18. Ի՞նչ էր Պարսից կառավարութեան ձեւը, Դարեհ վարչական ի՞նչ բարեկարգութիւններ հաստատեց. — 19. Պարսիկները ի՞նչպէս կը դաստիարակէին իրենց գաւակները. — 20. Պարսիկները քաղաքակրթութեան ո՞ր ճիւղերը մշակեցին:

# ԲԱՐԵԼՈՆ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆ<sup>(\*)</sup>

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ. — Արարատի լեռներէն կը բղխին երկու մեծ գետեր, Եփրատ ու Տիգրիս. որոնք հիւսիսէն ի հարաւ վաղելով կը միանան և Պարսկային ծոցը կը թափին:

Այս գետերուն ոռոգած ընդարձակ երկրին հարաւային մասը կը կոչուի Միջագետք, որ կը նշանակէ երկու գետերու միջեւ գտնուած երկիր:

Տափարակ եւ ընդարձակ երկիր մ'է Միջագետք՝ որ իր մէջ կը պարունակէր Հին աշխարհի երկու հզոր կայսրութիւնները՝ Բաբելոնի և Ասորեստանի:

2. Աւանդութեամբ կը պատմուի թէ՛ Աստուածաշունչի մէջ յիշուած Նեբրովզ կամ Բել անուն քաղաքի սրտոգը՝ Քրիստոսէ իբր 2000 տարի առաջ, Եփրատ գետին եզերքը հիմնեց Բաբելոն քաղաքը և շրջակայ թափառական ցեղերն ալ իր իշխանութեան ներքեւ հաւաքելով՝ հաստատեց Բաբելական կամ Քաղդէական տեղաբնակները և ինքն եղաւ անոր թագաւոր:

Դարձեալ՝ աւանդութեամբ կը պատմեն թէ՛ Մէսի ցեղէն Ասուր անուն մէկը՝ Տիգրիսի եզերքը կը հիմնէ Նինուէ քաղաքը և շրջակայ երկիրները իր անունով կը կոչէ Ասորեստան:

3. Ասորեստանի պատմութիւնը կը բաժնուի թագաւորական երկու որոշ շրջաններու: Առաջին մասին մէջ կը յիշուի Նինոս, որ անուանի եղած է իբրեւ երեւելի աշխարհակալ և մեծաշէն թագաւոր: Նինոս՝

(\*)Այս մասը պէտք է աւանդել Պարսկականէն առաջ:

նախ Բաբելոնը նուաճելով իր տէրութեան միացուց: Նոյնպէս՝ իր Նինուէ մայրաքաղաքը հոյակապ շէնքերով և բարձր աշտարակներով զարդարեց եւ այնքան հաստ պարիսպով մը ամրացուց զայն՝ որու վրայէն երեք կառքեր հանգիստ կրնային երթեւեկել:

4. ՇԱՄԻՐԱՄ. — Նինոսի յաջորդեց իր կինը Շամիրամ, որ թէեւ խելացի, բայց չափազանց փառամոլ ու չարասիրտ թագուհի մ'էր: Շամիրամ իր ամուսինը գերազանցեց թէ՛ մեծաշինութեամբ և թէ իր ընդարձակ աշխարհակալութիւններով: Տիրեց Եգիպտոսի, Եթովպիոյ և Ասիոյ մէջ ալ՝ մինչեւ Հնդկաստանի ու Սեւ ծովու սահմաններուն մէջ զըստնուած երկիրներուն:

Ինչպէս որ Նինոս Նինուէ քաղաքը, Շամիրամ ալ Բաբելոնը փառաւոր յիշատակարաններով, ջրանցքներով, ընդարձակ կառուղիներով և զմայելի դարաստաններով զարդարեց: Այս վերջինները կ'ըսուէին Շամիրամի Առկախեալ պարսեզներ: Միայն թէ պէտք է գիտնալ որ, պատմագիրները այս երկու վեհապետներուն վրայ պատմուածները իբր առասպել կը նկատեն և մինչեւ իսկ՝ անոնց զոյութեանը մասին տարակոյս ունին:

5. Ասորեստանի Ա. թագաւորութեան վերջին վեհապետն եղած է Սարգանաբալ Ա., որ անհոգ և զբօսասէր մէկն էր:

Ասոր օրով Մարաց Վարբակես ու Բաբելոնի Բելսիս իշխանները միանալով՝ Նինուէն պաշարմամբ առին և Ասորեստանի տէրութիւնն իրենց մէջ բաժնեցին Քրիստոսէ 760 տարի առաջ:

### Ա. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՍՈՐԵՍԱՆԻ

6. Ասորեստանի պատմութեան այս Բ. շրջանը աւելի վաւերական կը նկատուի՝ պատմական նոր խուզարկութիւններու և գտնուած կարեւոր արձանագրութիւններու շնորհիւ :

Այս շրջանին մէջ գտնուած վեհապետներուն գրե-



Ասորեստանի Վեհապետ

թէ ամենքն ալ երեւելի աշխարհակալներ եղած են, ինչպէս .

Սալմոնասար՝ որ իր տէրութիւնն ընդարձակեց՝ տիրելով Ասորոց երկրին, Փիւնիկէի և Հրէաստանի :

7. Սարգոն (719—704) մեծ հռչակ հանեց իրբեւ երեւելի աշխարհակալ, տիրելով Փոքր Ասիոյ, Պարսկաստանի, Մարաստանի, Արարիոյ ու Միջերկրականի քանի մը կղզիներուն :

Բայց Սարգոնի անունը անմահացնողը եղաւ իր մեծաշինութիւնը՝ երբ Նինուէի աւերակներուն վրայ հիմնեց մեծ ու փառաւոր քաղաք մը՝ Սարգոնի Դըղ-

եակ անունով : Ահա այս քաղաքին և հին Նինուէի աւերակներն են որ ասկից իբր 65—70 տարի առաջ գտնուեցան՝ Պօթա ու Լէյքոս հնագէտներուն ջանքով՝ ու երեւան ելան պալատներ, մեհեաններ, բազմաթիւ արձաններ, դամբարաններ և արձանագրութիւններ՝ որոնց շնորհիւ՝ Ասորեստանի պատմութիւնը գրեթէ սրբագրուելով՝ վաւերական ձեւ մը առաւ :

8. Սենեֆերիմ ալ Նինուէ քաղաքը զարգարեց և յաղթութիւններ տարաւ Հրէից ու եգիպտացիներուն դէմ :

Ասորգան իր որդին, Բարելոնի տիրեց և Յուզայի Մանսոկ ամբարիշտ թագաւորը գերի բերաւ ի Նինուէ : Այս Մանսոկն է որ իր գերութեան մէջ զոջարով հեղինակած է «Տէր Ամենակալ, Աստուած Արբահամու» ևն. գեղեցիկ աղօթքը :

9. Նաբուգոդոնոսոր Ա. ուզեց Յուզայի երկրին տիրել : Բայց իր Հողեփեոնես զօրապետը Բեթուլիա քաղաքը պաշարած տեսն, Յուդիթ անուն արիասիրտ կնոջ մը ձեռքով իր մահը գտաւ և այս կերպով Հրէայք ազատեցան : Վերջին թագաւորը եղաւ Սարգանբայ Բ. որու օրով Մարաց Կիւստոր և Բարելոնի Նաբոպոլասար իշխանները նիզակակցելով՝ Նինուէն կործանեցին և Ասորեստանի պետութիւնը վերջնական կերպով իրենց մէջ բաժնեցին, Բրիտանոսէ 606 տարի առաջ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

10. Բարելացիք և Ասորեստանցիք, թէպէտ Միակ և Գերագոյն էակի մը գաղափարն ունէին, բայց կը պաշտէին նաեւ բազմաթիւ երկրորդական աստուած-

ներ , գլխաւորաբար երկնային մարմինները :

Միջագետաց պայծառ երկինքն ու աշխարհագրական նպաստաւոր դիրքը պատճառ եղան , որպէս զի այս երկու ժողովուրդները Արեւելքի առաջնակարգ աստեղագէտներն ըլլան :

11. Իրենց գլխաւոր աստուածն էր Արեւը՝ զոր կը պաշտէին Բուր, Բեյ(Բա՛ալ) կամ Ասուր անունով, ինչպէս նաեւ կը պաշտէին գլխաւոր մոլորակները , լուսինն ու աստղերը՝ որոնց համար կը հաւատային թէ՛ մարգուս ճակատագրին վրայ մեծ ազդեցութիւն ունին : Իրենց քուրմերը Քաղզէացիներ էին և որոնք երեւելի աստեղագէտի համբաւ կը վայելէին , այնպէս որ , ժամանակ անցնելով՝ Քաղզէուքիւն և Ասեղագիսուքիւն բառերն գրեթէ իրարու հոմանիշ եղան : Քաղզէացի քուրմերը միամիտ ժողովուրդը և նոյն իսկ վեհապետներն այնպէս համոզած էին թէ՛ իրենք աստղերը դիտելով՝ կարող էին մարդոց ճակատագիրն հասկնալ և ապագան գուշակել (բաղդագուսակութիւն) :

12. Բարեւացիք երեւելի չափագէտներ էին : Իրենք բաժնեցին տարին 365 օրերու , Գունտը՝ 360 աստիճանի և օրը՝ 24 ժամու ևն . : Նոյնպէս իրենք գտան Արեգակին և լուսնի խաւարման պատճառն ու ժամանակները , Պիլքագորեան անունով ճանչցուած աղիւսակը : Նաեւ հնարեցին չափերու և կշիռներու գրութիւն մը և մանաւանդ՝ գրամներու չափ ու դասակարգութիւն մը որոնք գրեթէ բոլոր Արեւելքի ժողովրդոց վաճառականութեան մէջ մեծ դեր մը կատարած են :

13. Արեւելքի մէջ մեծ համբաւ ունէին Բարելունի ընտիր գորգերը , գոյնզոյն կերպաները , կիտուածաւոր անօթները , սկիզէն ճաշակաւոր զարդեղէնները ևն . :

Բարելուն թէ՛ ծովու և թէ ցամաքի ճամբով Ասիոյ բոլոր ծանօթ երկիրներուն հետ առեւտրական յարաբերութիւն ունէր : Իսկ ներքին հազորակցութեան բնական և գլխաւոր միջոցն էր Եփրատ մեծ գետը , որ իր բազմաթիւ ջրանցքներով մեծապէս կը դիւրացնէր ներքին յարաբերութիւնը :

14. Նինուէի , կամ աւելի ճիշտը , Սարգոնի դըդեակին մէջէն գտնուած նորանոր գամբարանները , արձաններն և ուրիշ թանկագին հնութիւններ հաստատեցին թէ՛ Ասորեստանցիք առաջին կարգի քանդակագործ , արձանագործ և նուրբ ճաշակի տէր արուեստագէտ ժողովուրդ մըն էին :

Միայն պէտք է գիտնալ որ , Ասորեստանի քաղաքակրթութիւնը բոլորովին նիւթական էր և չունէր եգիպտականին բարոյական բարձրութիւնը : Ասորեստանի վեհապետները իրենց տէրութիւնը կը կտուրէին իբրեւ բացարձակ տէր և իշխան ու ժողովրդին կողմէն կը ճանչցուէին իբրեւ փոխանորդ աստուածներու : Իրենց նուաճած ժողովուրդները խմբովին տեղափոխելով կամ գերի վարելով՝ վիրջին ծայր անգթութեամբ կը վարուէին անոնց հետ :

Ասորեստանցիք և Բարեւացիք իբրեւ թուղթ կը գործածէին՝ թրծուն ու տափակ աղիւսներ ու գլաններ՝ որոնցմէ շատը գտնուելով՝ կարելի եղած է անոնց իմաստը հասկնալ՝ Ասորագէտներու շնորհիւ :





### Բ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԲԵԼՈՆԻ

1. Բարեկտնի այս երկրորդ իշխանութիւնը հազիւ կէս դարու տեւողութիւն ունեցաւ և ուր փայլեցաւ Նաբուգոդոնոսոր Բ. որ մեծ աշխարհակալ մը եղաւ, յողթեց Եգիպտոսի Նեքաւով թագաւորին, Երուսաղէմը և Փիւնիկիէի նորաշէն Տիւրոս քաղաքը կործանեց և ամէն կողմ ահ ու սարսափ տարածեց:

Նաբուգոդոնոսոր իր Բարեկտն մայրաքաղաքը թէ՛ ամրութեամբ և թէ՛ հոյակապ շէնքերով՝ աշխարհիս առաջին քաղաքն ըրաւ: Սակայն Նաբուգոդոնոսոր իր ձեռք բերած համբաւէն ու վայելած փառքերէն շփանալով՝ սկսաւ չափազանց հպարտանալ և պահանջել իր հպատակներէն որպէս զի իբրեւ աստուած պաշտեն զինքը և իր կանգնած արձանին երկրպագեն:

2. Նաբուգոդոնոսորի օրով կ'ապրէին Բարեկտնի մէջ՝ Դանիել մարգարէն և իր երեք ընկերները Անանիա, Ազարիա և Միսայիլ՝ որոնք Երուսաղէմէն իր գերի բերած ազնուական Հրեայ ընտանիքներու զաւակներ էին և իրենց խելքովն ու աստուածապաշտութեամբը երեւելի: Դանիէլ գուշակած էր Նաբուգոդոնոսորի անկումը և Աստուծոյ պատժուիլը, ինչպէս որ կատարուեցաւ:

3. Պալղազար՝ Նաբուգոդոնոսորի մեղկ ու շուայ որդին, վերջին թագաւորը եղաւ Բարեկտնի:

Ասոր օրով, Մարաց և Պարսից թագաւորը Մեծն Կիւրոս, Բարեկտնը պաշարմամբ առնելով՝ զայն իր ատէրութեան միացուց Քրիստոսէ՝ 538 տարի առաջ:

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

1. Ո՞ր կը գտնուէր Ասորեստան . ի՞նչ գիտես իր բնական գիրքին եւ կազմութեանը վրայ: — 2. Ո՞վ հիմնեց Բաբելոն քաղաքը եւ նիւուէն. — 3. Ո՞վ էր նինոս, ի՞նչ աշխարհակալութիւններ ըրաւ. — 4. Նկարագրէ Շամիրամի մեծագործութիւնները. — 5. Ասորեստանի Ա. թագաւորութիւնը որո՞ւ օրով եւ ի՞նչպէս վերջացաւ:

6. Ասորեստանի Բ. թագաւորութեան մասին ի՞նչ գիտես. — 7. Ո՞վ էր Սարգոն, ի՞նչ երկիրներու տիրեց եւ ո՞ր քաղաքն հիմնեց. — 8. Ո՞վ էին Սենտերիմ եւ Ասորդան. — 9. Նաբուգոդոնոսոր Ա. Հրէից դէմ ի՞նչպէս վարուեցաւ, ո՞վ էր Յուծիգ, վերջին թագաւորը ո՞վ եղաւ. —

10. Ի՞նչ էր Բարեկտեցոց եւ Ասորեստանցոց կրօնը. — 11. Ի՞նչ աստուածներ կը պաշտէին. Ի՞նչ էր քաղղէութիւնը. — 12. Ի՞նչ կարեւոր գիւտեր ըրած են. — 13. Ի՞նչ ձեռագործներ ունէին. — 14. Ի՞նչ գիտես իրենց ճարտարապետութեան, առեւտուրին եւ կառավարութեան ձեւին վրայ:

1. Ի՞նչ գիտես Նաբուգոդոնոսոր Բ.ի մասին, ի՞նչ աշխարհակալութիւններ ըրաւ. — 2. Իրեն ժամանակակից ո՞ր երեւելի մարդիկը կ'ապրէին, ի՞նչ վախճան ունեցաւ. — 3. Ո՞վ եղաւ Բաբելոնի վերջին թագաւորը եւ որո՞ւ ձեռքով կործանեցաւ այս տէրութիւնը:



### ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

#### ԱՐԵՒԵԼ . ՀԻՆ ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

##### Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ի Ք

Հնագոյն դարերու ամէնէն առաջին և նշանաւոր կայսրութիւնը եղած է Եգիպտոս, որ մէկ պարզեւն է Նեղոս բարերար գետին: Եգիպտոսի ամէնէն հին քաղաքն էր Մեմփիս: Առաջին հարստութիւններու փարաւոնները կառուցին բուրգերը, Լաբիրինդոսը և Մերիս փորել տուաւ համանուն լիճը:

Յաջորդ դարերուն, Վերին Եգիպտոսի մէջ շինուեցաւ Թեփե քաղաքը որու հրաշալի մնացորդները մինչեւ հիմայ կ'երեւին Քարնափի և Լուսուրի յօտերը: Եգիպտոսի ամէնէն մեծաչէն փարաւոնը եղած է Ռամսես Բ. կամ Սեպոսը:

Եգիպտական պատմութեան վաւերական թուականը կ'սկսի 660ին, երկու նշանաւոր վեհապետներով՝ Փսամեսիփոս և Նեփաւով:

Քրիստոսէ 525 տարի առաջ՝ Եգիպտոսի կը տիրեն Պարսիկները:

Եգիպտացիք, բաց ի երկնային մարմիններէ, իբրեւ աստուած կը պաշտէին նաև՝ Նեղոս գետը. բոյսերը, սուրբ և անսուրբ կենդանիները. մանաւանդ Ապիս կովը: Կը հաւատային հոգիի անմահութեան և մեծ պատիւներ կ'ընէին մեռելոց յիշատակին:

Եգիպտացիք շատ կանուխէն մշակեցին Գիսուքիւն, Արուես և Գրականութիւն: Շամպուլիոն գի-

տուներ յաջողեցաւ կարգաւ Սրբադրոս տառերը՝ որով մեծ լոյս սփռեց Եգիպտական քաղաքակրթութեան մասին:

##### ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ԱՍՈՐԵՍԱՆ

Տիգրիս ու Եփրատ գետերուն միջեւ հիմնուեցան երկու անուանի քաղաքներ, Բաբելոն և Նիւուէ:

Նախ՝ Նիւուէ եղաւ զօրաւոր պետութեան մը կեդրոն և Ասիոյ կարեւոր մէկ մասին տիրեց: Ասորեստանի պատմութեան առաջին մասը առասպելախառն է: Այս շրջանին մէջ կը յիշուին Սարգոն և Սենեֆերիմ աշխարհակալները: Ա. կայսրութիւնը կը վերջանայ Քրիստոսէ 760 տարի առաջ:

Բաբելոն կը տիրանայ Ասորեստանի և զօրաւոր կայսրութիւն մը կ'ըլլայ Մեծն Նաբուգոդոնոսորի օրով: Այս տէրութիւնն ալ Պարսից ձեռքով կը վերջանայ Քրիստոսէ 533 տարի առաջ:

Ասորեստանցիք և Քաղդէացիք ալ կ'ունենան բաւական ծագկեալ քաղաքակրթութիւն մը, մասնաւորապէս աստեղագիտութիւնը շատ կը զարգացնեն, ինչպէս նաեւ՝ չափագիտութեան և ձեռարուեստներու ճիւղերը: Այս երկու ժողովուրդները կը պաշտէին երկնային մարմիններ: Իրենց գիրերը, որոնք կը կոչուէին բեւեռագիր, գիտունները յաջողած են կարգաւ: Իրենց գլխաւոր աստուածներն էինՖէլ, ճեփօ (Արեւ), Լուսին (Միլիդա), Ասղարդէ (Աստղիկ) ևն.:

Նիւուէի աւերակներուն գիւտը բոլորովին լուսաբանեց Ասորեստանի պատմութիւնը:

##### Ե Բ Բ Ա Յ Ե Յ Ի Ք

Եբրայեցի կամ Հրեայ ազգին նախահայրը եղած է Աբրահամ որու զաւակին, Իսահակայ 12 թոռները եղան Իսրայէլի 12 ցեղերուն նախահայրերը:

Մովսէս, Յակոբի սերունդը եգիպտոսէն կ'առաջնորդէ Աւետեաց երկիրը: Իսրայէլացիք, նախ Դաւաւորներով և ապա՝ Թագաւորներով կը կառավարուին: Դաւրի և Սողոմոնի ժամանակ Իսրայէլացիք մեծ փառքի և զօրութեան կը տիրանան: Սողոմոնի տէրութիւնը կը բաժնուի երկու թագաւորութիւններու, Յուդայի և Իսրայիլի որոնք տկարանալով՝ յաջորդաբար զօրաւոր տէրութեանց իշխանութեան ներքեւ կ'իյնան: Հրեաները, ճշմարիտ Աստուծոյ գազափարին աւանդապահները եղած են:

Մարդկային ազգի ամէնէն հին ու վաւերական գրաւոր Յիշատակարանը՝ Հին Աստուածանցն է:

Փ Ի Ի Ն Ի Կ Ե Յ Ի Ք

Փիւնիկեցիք Հին աշխարհի առաջին Նաւարկու և Վանատական ժողովուրդը եղան: Յունաստանի, Ափրիկէի, Սպանիոյ և Փոքր Ասիոյ մէջ շատ մը գաղթականութիւններ հիմնեցին: Իրենց վաճառականութեամբ՝ Արեւելքի և Արեւմուտքի ազգերուն մէջ յարաբերութիւններ հաստատեցին:

Փիւնիկեցիք ճարտարարուեստ ժողովուրդ ալ էին: Գտան Ալպակին, Ծիրանի նեղը, Այր ու բենը, նոյպէս՝ չափեր և կտիւններ:

Իրենց հիմնած ամէնէն երեւելի գաղթափայլն էր Կարճեղոն: Բայց իրենց կրօնքնը ազգային նկարագիրը շատ վատթար էր: Փիւնիկէի յաջորդաբար տիրեցին Ասորեստանցիք, Պարսիկք և ի վերջոյ Մեծն Ալեքսանդր 333ին (Ք. Ա.):

Իրանի լեռնադաշտին վրայ, նախ Մաւերը և ապա Պարսիկները՝ հզօր պետութիւն մը կը հաստատեն:

Կիւրոս, իր պապուն, Մարաց Աժդահակ թագաւորին յաղթելով՝ կը հիմնէ Մար-Պարսկական պետութիւն (549), կը նուաճէ Լիւդիան, կը տիրէ Փոքր Ասիոյ Յոյն գաղթականութիւններուն և կը կործանէ Բաբելական պետութիւնը՝ 538ին: Հրեաները գերութենէ կ'ազատին:

Կիւրոսի որդին և յաջորդը Կամբիս (529—522), եգիպտոսը կը նուաճէ (525) ու եթովպիա կ'արշաւէ: Ամեդ Մոգին կը յաջորդէ Դարեհ Աւեսապեայ որ ներքին խռովութեանց վերջ կուտայ, Բաբելոնի կը տիրէ, Եւրոպայի Սկիւթացոց դէմ անյաջող արշաւանք մը գործելով՝ միայն Թրակիոյ կը տիրէ: Դարեհ առաջինը կ'ըլլայ իր տէրութեան մէջ կանոնաւոր վարչական կազմակերպութիւն հաստատող:

Զրադաօս մոզը եղած է Պարսից կրօնին հիմնադիրը որ բարեւոյ և շարի սկզբունքը կը վարդապետէր: Ռեմիզդի տեսանելի պատկերն էր արեւը զոր կը պաշտէին Պարսիկները և անոր ի պատիւ՝ մշտնջենական կրակ կը վառէին ատրուշաններու վրայ: Արեւելքէ ուրիշ ազգաց կրօնքներուն հետ բազմատեղով Պարսից կրօնը աւելի պարզ և խմսատալից էր: Պարսիկները ձեռարուեստի, ճարտարութեանց, վաճառականութեան և գրականութեան մէջ բաւական ծաղկած էին:



Խ Մ Բ Ա Գ Ր Օ Ի Թ Ե Ա Ն Ե Ի Ի Թ Ե Ր

1. Իսրայելի ժողովուրդին փառքը՝ Դաւիթի եւ Սողոմոնի ժամանակ:
2. Իսրայէլացոց գերութիւնը՝ Բաբելոնի մէջ:
3. Կրօնական տեսակէտով՝ Հրէից վիճակը՝ բաղդատմամբ Արեւելքի միւս ազգերուն, մինչեւ Քրիստոս:
4. Բաղդատեցէք Ռամաէս Բ.ի իշխանութիւնը Փսամետիքոսի եւ Ամասիսի իշխանութեան հետ:
5. Եզրպտացոց կրօնին ոգին ու նպատակը:
6. Քաղաքակրթութեան տեսակէտով՝ Փիւնիկեցոց վաճառականութեան յառաջ բերած օգուտները:
7. Կիւրոսի վեհանձնական գործերը:
8. Պարսից կրօնը՝ բաղդատելի եզրպտականին հետ:
9. » տէրութեան տկարանալուն պատճառները՝ քաղաքական եւ բարոյական տեսակէտներով:
10. Քաղղէացիներու կատարած դերը:

Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Համբ քարտէսի մը վրայ նշանակէ այն գաղթավայրերը զորս հիմնեցին Փիւնիկեցիք եւ այն երկիրները՝ որոնց հետ առեւտրական կարեւոր յարաբերութիւններ ունէին:
2. Կիւրոսի ժամանակակից երեւելի անձեր:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալներուն պատասխանները առանձին սիւնակներու մէջ նշանակէ. —

1. Տէրութեանց հիմնադիրներ. — 2. Քաղաքներու հիմնադիրներ. — 3. Երեւելի կիներ. — 4. Մեծ աշխարհակալներ. — 5. Իրեւելի պաշարումներ. — 6. Նուիրական մատեաններ. — 7. Գլխաւոր աստուածներ՝ հին ազգերու. — 8. Պատմական կարեւոր գետեր. — 9. — Երեւելի յիշատակարաններ. — 10. Կարեւոր գիւտեր. — 11. Կործանած քաղաքներ. — 12. Երեւելի օրէնսդիրներ:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ


Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ո Ւ Ն Ա Ց

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ. — Եւրոպայի հար. արեւելեան կողմը փոքր երկիր մըն է ՅՈՒՆԱՍՏԱՆ, որ օժտուած է աշխարհագրական ամէնէն նպաստաւոր պայմաններով:

Յունաստան կը բաժնուէր ընական երեք որոշ մասերու. Ա. — ՀԻԻՍ. ՅՈՒՆԱՍՏԱՆ, որ կը պարունակէր Յպիրոս ու Թեսալիա գաւառները: Բ. — ՄԻՋԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ կամ ԵԼԼԱԴԱ, որ կը պարունակէր Ասսիկէ փոքր թերակղզին, Յսոլիա, Փոկիա, Բեոլիսիա, Լոկրիս, Դորիս և Մեգարա:

Գ. — ՀԱՐ. ՅՈՒՆԱՍՏԱՆ կամ ՊԵԼՈՊՈՆԷՍ թերակղզին՝ որու գլխաւոր գաւառներն էին՝ Արկադիա, Լակոնիա, Մեսենիա, Եղիս, Աքայիա, Սիկիոն, Արգոնիս և Կորնթոս իր համանուն պարանոցով (այժմ ջրանցք) որով հին ատեն Պելոպոնէսը միացած էր Ելլադայի:

Յունաստան իր շուրջն ունէր նաև մեծ ու փոքր բազմաթիւ արգաւանդ կղզիներ, ինչպէս արեւել. կողմը Եւբէա, Եգինէ ու Սալամինէ կղզիները: Թրակիոյ (այժմ Էտիրնէէ կուսակալութեան) հարաւային և Փոքր Ասիոյ արեւմտեան ծովեզրին մօտ գտնուող Սփորաքեան կղզիները որք էին՝ Թասոս, Պարոս,



Սանդրակի, Լեմնոս Լեն. : Միջերկրականի սեջ՝ Կրեթե մեծ կղզին: Իսկ արեւմտեան կողմը՝ Յունիականի մէջ Կորկիրե, Կեփալոնիա և Իրակի կղզիները:

Գլխաւոր լեռներն էին Ոլիւպոս, Օսա՝ Թեապլիոյ հարաւային կողմը. — Պառնասոս՝ փոկիոյ, Հիւսիս Ատտիկէի և Տայգիս՝ Լակոնիոյ մէջ:

Յունաստանի մէջ կային բաւական ծաղկած քաղաքներ, ինչպէս Փարսալա և Լարիսա՝ Թեապլիոյ մէջ. — Պիրքնա, Թեապոնիկէ, Պոսիդէ և Ոլիւնդոս՝ Քոլկիդէի մէջ. — Ամփիպոլիս և Բիւզանդիոն՝ Թրակիոյ մէջ:

Ելլագայի գլխաւոր քաղաքներն էին՝ Աքեքն, Թեփե, Պլասեա, Կորոնեա, Լեկսրա, Քերոնա, Դերփիս եւ այլն:

Պերպոնէս կը պարունակէր հեռեւեալ քաղաքները, Մեսինա, Սպարդա, Մանսիքեոս, Արգոս, Սիկիոն, Մեգարա և Կորնթոս:

Յունաստան իր աշխարհագրական գեղեցիկ դիրքին, բազմաթիւ ծովեզերքներուն, լայն ու խոր ծոցերուն, թերակղզիներուն և չրջակայ արգաւանդ կղզիներուն շնորհիւ՝ Փիւնիկէէն յետոյ՝ Հին աշխարհի ամէնէն նշանաւոր ծովային ու վաճառական երկիրը եղաւ:

2. ՊԵՆԱՍՏՍՅՈՒՄ. — Յունաստանի նախկին բնակիչներն եղած են՝ Ասիայէն գաղթող Պելասգացի անուն կիսավայրենի ցեղերը որոնք ի սկզբան անտառներու մէջ թափառական կը շրջէին և կ'ապրէին որսորդութեամբ ու վայրի պտուղներով: Պելասգացիներուն կը վերագրուին Կիլոպեան անուն քարի խոշոր հատորներով և առանց շաղախի շինուած այն անձաշակ շէնքերը՝ որոնց մնացորդները մինչեւ հիմայ Յունաստանի այլ և այլ կողմերը կ'երեւին:

Կը պատմուի թէ Կիկրոպս անուն եգիպտացի մը Ատտիկէ գաղթելով՝ բնակիչներուն մէջ կարգ կանոն հաստատեր և Աթէնք քաղաքին հիմունքը դրեր է: Կազմու անուն Փիւնիկեցին ալ Բէռլիտայ մէջ բնակութիւն հաստատեր և իր հետ բերեր է Փիւնիկեան Այր ու Բէնը: Նոյնպէս՝ Դանաւոս անուն ուրիշ եգիպտացի մը, ինչպէս նաեւ Պելոպս Փոիւզացին՝ Յունաստանի նախկին բնակչաց քաղաքակրթութեան առաջին քայլերուն առաջնորդ և անոնց վարպետներն եղած են:

**ՀԵԼԷՆՆԵՐԸ.** — Քրիստոսէ իբր 1600 տարի առաջ, Հելլեն կոչուած ժողովուրդը Յունաստան գաղթեց և Պելասգեան ցեղերը նուաճելով՝ երկիրը իր անունով կոչեց Ելլադա կամ Հելլենաց աշխարհ: Ահաւասիկ Պելասգացի և Հելլեն ժողովուրդներուն իրարու հետ այս ձուլումէն յառաջ եկաւ Յոյն ազգը: Հելլէնները նշանաւոր էին իրենց մարմնական շնորհալի ձիրքերով, բնական ուշիմութեամբ և արիական ոգիով: Ասոնք կը բաժնուէին 4 գլխաւոր ցեղերու. 1. Ուոլիացիք, որոնք բնակութիւն հաստատեցին Ելլադայի և հիւսիսային Պելոպոնէսի մէջ. — 2. Դորիացիք, որոնք նախ գրաւեցին հիւսիսային Յունաստանի քանի մը գաւառները և յետոյ հաստատուեցան արևելեան Պելոպոնէսի մէջ. — 3. Յունիացիք բնակեցան Ատտիկէի մէջ և Պելոպոնէսի հիւսիսային կողմը. — 4. Ակայեցիք, ասոնք ալ Պելոպոնէսի արեւելեան կողմը հաստատուեցան:

4. ՅՈՒՆՍ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ կը բաժնուի երեք մասերու, 1. Առասպելական Երջան. — 2. Դիւցազանց Երջան. — 3. Պատմական Երջան: Առաջինը կոչուած է Առասպելական, ինչու որ այդ շրջանին

մէջ պատմուածները այլանդակ ու ծաղրելի առասպելներ են: Երկրորդին՝ Դիւցազանց անունը տըրուած է, որովհետեւ գոյութիւն ունեցող կամ երեւակայական դիւցազուններու անբնական և մեծ մասամբ շինծու քաջագործութեանց պատմութիւնը կը պարունակէ: Իսկ երրորդ շրջանին մէջ է որ կարեւոր դէպքերն ու թուականները կ'սկսին ճշգուիլ և որու համար իրաւամբ կոչուած է Պատմական Երջան:

Դարձեալ, Պատմական Երջանն ալ կը բաժնուի երեք գլխաւոր մասերու. 1. Յունաց ծագուէն մինչեւ Դորիացուց արշաւանքը (2000—1104), 2. Դորիացուց արշաւանքէն մինչեւ Մարական պատերազմները (1104—500), 3. Մարական պատերազմներէն մինչեւ Քերոնայի ձակատամարտը (500—338) որ ատեն Յունաստան իր քաղաքական իշխանութիւնը կորսնցնելով՝ Փիլիպպոս թագաւորին գերիշխանութեան տակ մտան:

**ԴԻԻՑՍՉՈՒՆՆԵՐ.** — Յոյները իրենց վառ երեւակայութիւնով հրաշալի պատմութիւններ ստեղծած են այնպիսի անձերու մասին՝ որոնք գերմարդկային քաջագործութիւններով իրենց ցեղին պատիւ բերած և կամ բնական ու մարդկային պատուհասներէ զիրենք ազատած են: Այս մարդիկը կոչուած են Դիւցազունք կամ Կիսասուածք՝ որոնց համար պատմուածները աւելի Դիցաբանութեան կը վերաբերին քան թէ պատմութեան:

Այս դիւցազուններուն մէջ երեւելիներն են՝ Հերակլես, Թէսես, Մինոս, Յասոն, Պերսես, Աքիլլես, Պոլլեւս, Կասսոս ևն.:

5. ՏՐՈՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — (1194—1184 թ. Ա.). — Դիւցազանց Երջանի ամէնէն վերջին և կարեւոր դէպքն է Տրոյոյ պատերազմը:

Փոքր Ասիոյ հիւս. արեւմտ. կողմը (այժմու Պիզալի ՄիւթէսարըրըՓութեան տեղ) փոքր՝ բայց բաւական զօրաւոր տէրութիւն մը կար Տրոյա անուն՝ որու մայրաքաղաքն էր Իլիոն կամ Տրովադա։ Այս երկրին Պիւսիոս թագաւորին որդին Պարիս, Սպարտայի Մենելաոս թագաւորին արքունիքը հիւր կ'երթայ, բայց անոր գեղանի կինը՝ Հեղիսենն առեւանգելով՝ Տրոյա կը փախչի։ Այս նախատինքին վրայ Յունաստանի բոլոր իշխանները արգար բարկութեամբ կը բորբոքին և Մենելաոսի եղբոր՝ Ակիլլեսին հրամանատարութեամբ և 100,000 զօրքով կ'անցնին Ասիա՝ Տրոյացիներէն վրէժ լուծելու համար։

Սակայն Տրոյա իր ամուր պարիսպներուն և շրջակայ ազգերէն գտած օգնութեանը չնորհիւ՝ 10 տարի կը զիմադրէ թշնամիին։ Վերջապէս՝ Իթաքէի խորամանկ թագաւոր Ոգիսեսի մէկ հնարքով՝ Յոյները կը յաջողին Տրոյան առնել և զայն կրակի կուտան։

Այս պատերազմին մէջ Յունաց կողմանէ իրենց զիւցազնական քաջութիւնով նշանաւոր կը հանդիսանան Ախիլլես և Պատրոկլ, իսկ Տրոյացիներուն կողմէն՝ Պրիամոսի որդին Հեկտոր։

Քաղաքակիրթ մարդկութեան համար՝ կէս մը առասպելական այս պատերազմին օգուտն այն եղած է որ, անոր մէջ դերակատար զիւցազուններուն գործերը նիւթ մատակարարած են՝ Բանաստեղծութեան Հայր կոչուած անմահ Հոմերոսի երկու աննման զիւցազներգութիւններուն, Իլիականի և Ոգիսականի։ Հոմերոս՝ առաջինին մէջ կը նկարագրէ Տրոյոյ պա-



Հոմերոս  
Հոմերոս՝ առաջինին մէջ կը նկարագրէ Տրոյոյ պա-

շարման և կործանման պարագաները, իսկ վերջինին մէջ կը խօսի՝ Իթաքէի թագաւոր Ոգիսեսի՝ հայրենիք վերագործած պահուն պատահած արկածներուն վրայ։

1. ԴՈՐԻՍՏԻՈՅ ԱՐՇԱՒԱՆՔԸ. — Այն միջոցին՝ երբ Յունաստանի իշխանները Տրոյոյ պատերազմին պատճառաւ իրենց երկրէն բացակայ կը գտնուէին, Հելլէնաց Դորիացի ցեղը հիւսիսային գաւառներէն գաղթեց դէպի հարաւ, և գլխաւորապէս հաստատուեցաւ Պելոպոնէսի մէջ, այնպէս որ, թէ՛ բնիկները և թէ՛ պատերազմէն վերագործող Յոյները՝ իրենց երկիրները օտարներէ յափշտակուած գտան։ Ուստի, Դորիացոց այս արշաւանքը պատճառ եղաւ որպէս զի Յոյք մեծ բազմութեամբ օտար երկիրներ գաղթելով՝ հոն փնտռեն իրենց շահն ու բարեկեցութիւնը։ Այսպէս՝ Յունական երեւելի գաղթականութիւններ հիմնուեցան Փոքր Ասիոյ արեւմտ. կողմը (հիմակուան Այալնի կուսակալութեան մէջ), ուր կային Ձմիւռնիա, Նիեսոս, Միլէս և Փոկէա քաղաքները։

Սիկիլիոյ մէջ՝ Մեսինա և Սիրակոսա. — Հար. Իտալիոյ մէջ՝ Տարենտոն, Սիպարիս և Կրանոն. — Հար. Գալլիոյ մէջ՝ Մարսիլիա՝ զոր Փոկէացի յոյները հիմնեցին Քրիստոսէ 600 տարի առաջ։

Հիւսիսային Ափրիկէի մէջ՝ Կիրենե և վերջապէս Սեւ ծովու եզերքը և Կրեսէ, Քիոս և Սամոս կղզիներուն մէջ։

Ժամանակ անցնելով՝ այս գաղթականութիւնները թէ՛ բազմամարդութեամբ և թէ՛ վաճառականութեամբ շատ ծաղկեցան և իրենց միջոցաւ՝ Յունական քաղաքակրթութիւնը այս հեռաւոր երկիրներուն մէջ մուտ գտաւ։

Այս գաղթականութեանց մէջ ծնան ու փայլեցան Յունաստանի առաջին իմաստունները, ինչպէս Հովնա-  
րոս և Սափո բանաստեղծները, Իպպոկրատ՝ բժշկու-  
թեան հայրը, Պիաս և Պիւրպոռաս երեւելի իմաս-  
տասէրները ևն. :

Արդէն Յոյն ազգին նկարագիրն այնպէս էր որ,  
երբ բնական կամ քաղաքական աննպատ պարագա-  
ներ արգելք ըլլային իրենց անհատական իրաւանց և  
բարեկեցութեան, փոխանակ իրենց հայրենի երկրին  
մէջ թշուառ ապրելու, կը նախընտրէին գաղթել աւե-  
լի նպատաւոր երկիրներ, հոն զարգանալ և լուա-  
գոյն գիրքի տիրանալու նպատակաւ :

**ՅՈՒՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՊԵՐԸ**

2. Հին Յունաստան, Արեւելքի պետութիւննե-  
րուն պէս՝ քաղաքական միացեալ իշխանութիւն մը  
չէր, այլ ամէն գաւառ, բնական ամէն ամփոփ բա-  
ժանում և մինչեւ իսկ մեծ քաղաքներն իրենց առան-  
ձին իշխանութիւնն ու պետերն ունէին, առանց սա-  
կայն իրարու դաշնակից ըլլալու, ինչպէս են այսօր  
Զուիցերիա և Ամերիկայի Միացեալ Նահանգները :  
Ատնք ի սկզբան միապետական էին, բայց յետոյ  
ընդհանրապէս եղան հանրապետութիւններ, բացի  
Սպարտայէ որ իր կառավարական նախկին ձեւը  
պահեց :

Աւելորդ է ըսել թէ՛ քաղաքականապէս բաժ-  
նուած ասանկ փոքրիկ ժողովուրդ մը չպիտի կրնար  
գիւրաւ զարգանալ և ինքզինքը զօրաւոր թշնամի-  
ներու դէմ պաշտպանել : Բայց Յոյները իրենց համար  
միութեան բուռական զօրաւոր կապեր ունէին : Նախ,  
սա հաստատ համոզումը կար իրենց մէջ թէ՛ իրենք  
մէկ երկրի գաւազ ևն, մէկ լեզու կը խօսին, մէկ

կրօնք ունին, միեւնոյն պատմութիւնը, միեւնոյն  
չափն ու պատիւն ունին հաւասարապէս : Ատնցմէ ի  
զատ՝ կային նաեւ միութեան երկու զօրաւոր կա-  
պեր ալ, այսինքն՝ Ազգային խաղեր և Ամփիկիսթոն-  
եան Ատեան :

ԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԵՐ. — Յոյները, Արեւելքի ժողո-  
վուրդներուն պէս, չէին ախորժեր մեղկ ու թուլա-  
ցուցիչ խաղերէ և զբօսանքներէ : Ընդհակառակը,  
իրենց ամէնէն աւելի նախասիրած հաճոյքներն էին՝  
մարմինը մարզող, միտքն ու սիրտը ազնուացնող  
խաղեր և կրթութիւններ : Ամէն յունական քաղաք  
ու գաւառ՝ այս նպատակաւ իր խաղի և մրցման  
տարեկան հանդէսներն ունէր : Բայց ատնց մէջ ասէ-  
նէն նշահաւորներն էին Նդիս գաւառին Ոլիմպոս լե-  
քան քով տեղի ունեցած մեծահանգէս խաղերը՝  
Ոլիմպիական անուն, որոնց կը մասնակցէին բոլոր  
Յունաստանի ժողովուրդներն անխտիր, ամէն 4 տա-  
րին մէկ անգամ (1) :

**ՈՒՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ**

Այս հանդէսները կ'սկսէին զսկերով, կրօնական  
երգերով և արարողութիւններով : Մասնակցող ժո-  
ղովուրդներուն մէջ՝ եթէ երբէք գտնուէին իրարու  
հետ գժտուածներ, պարտաւոր էին կանխապէս հաշ-  
տուիլ : Ներկայացուած գլխաւոր խաղերն էին՝ մարմ-  
նամարզ, ոստնում, կոփամարտութիւն, գօտեմար-  
տութիւն, ձիարշաւ, նետաձգութիւն, կառարշաւ,  
ոտնարշաւ ևայլն : Ո՛վ որ յաղթող ելլէր, մեծ փառք  
էր թէ՛ իր անձին և թէ իր ծննդավայր քաղաքին  
համար՝ ուր կը մտնէր թափնիէ կամ ձիթենիէ  
պսակը գլուխը՝ քառաձի կառքի մը մէջ բազմած՝ և

(1) Այս 4 տարուան շրջանը կը կոչուէր Ումպիադ, որ Յու-  
նաց Յունականն էր եւ կ'սկսէր Քսէ 776 տարի առաջ :



խանդավառ ժողովուրդին ցնծալից ծափերովը փառաւորուած : Քաղաքացիք յաղթողին արձանը կը կանգնէին, ամէն լեզու անոր փառքը կ'երգէր, հանգէսներու մէջ պատուոյ տեղը կը բազմէր և վերջապէս կը դառնար ընդհանուրին հիացման առարկայ և օրինակելի դիւցազնը :

Մարմնական մարզանքներուն կը յաջորդէին իմացական մրցումներ, այսինքն՝ ընտիր առողջանութեամբ հասուածներ կարգալ, բարձրաձայն պատմել, երգել, ճառել, ոտանաւորներ արտասանել, հետաքրքրական բնական շարժուձեւեր ի յայտ բերել և այլն որոնց ամէնքն ալ հաւատարապէս գնահատուելով՝ իրենց արժանի վարձատրութիւնը կը ստանային : Մէկ խօսքով, այս մէթօտիկ խաղերը և մրցումները Յոյն ժողովուրդներուն մէջ արժարձեցին աշխատասիրութեան, յառաջդիմութեան, զարգանալու և զիրար գերազանցելու ազնիւ փառասիրութեան ոգին որ մեծապէս օգտակար եղաւ իրենց ընդհանուր քաղաքակրթութեանը տեսակէտով :

**ՅՈՒՆԱՅ ԿՐՕՆԸ**

Թէպէտ Յոյները իրենց կրօնի ոգին եգիպտացիներէն ընդօրինակած էին, սակայն միւս կողմանէ՝ իրենց վառվռուն երեւակայութեամբ և միջավայրի պայմաններու հետեւանօք՝ ունեցան բազմաթիւ աստուածներ : Այսպէս, բնութեան տարրերէն ու երեւոյթներէն ի զատ՝ մարդկային առաքինութիւններն ու մոլութիւններն ալ աստուածացուցին, այնպէս որ, յունական կրօնի մանրամասն պատմութիւնը եղած է առանձին գիտութիւն մը որ կը կոչուի Իրիցաբանութիւն :

Յունաց աստուածները երկու դասակարգի կը բաժնուին, Ա. Ոլիմպիական Տասն երկու Մեծ աստուածներ, Բ. Երկրորդական աստուածներ :

**ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ**

1. Կրոնոս կամ Սասուրնոս, աստուածներու հայրը .
2. Ջեւս կամ Արամազդ, Կրոնոսի որդին՝ որու գահը կը գտնուէր Ոլիմպոս լեռան վրայ և իր շուրջն համախմբուած էին հետեւեալ աստուածները .
3. Հերս, Արամազդի կինը .
4. Պոսիդոն » եղբայրը և ծովու աստուած .
5. Վեսսա » քոյրը որ էր պաշտպան աստուածուհի առտնին առաքինութեանց .
6. Իսիսրէ Արամազդի քոյրը որ էր հնձոց աստութեան հսկող աստուածուհի .
7. Ապոլոն բանաստեղծութեան և օգտակար արուեստից աստուած .
8. Արես պատերազմի աստուած .
9. Հերմես վաճառականութեան և ճարտասանութեան աստուած .
10. Արեմաս իմաստութեան գիցուհի
11. Ասդիլ գեղեցկութեան »
12. Անահիս որսորդութեան »

Երկրորդական աստուածներն էին Պիլոսոն, դժոխքի աստուած .  
Բագոս, գինիի »  
Ասկլեպիոս, բժշկութեան »  
Մուսաներ՝ որոնք բանաստեղծութեան ոգի ու ճաշակ ներշնչող գիցուհիներ էին .  
Երէք Պարկայլ՝ որոնք կը հսկէին մարդկային ճակատագրին վրայ .  
Յաւերժահարսեր՝ որոնք անտառները, գետերը և լիճերը կը պահպանէին :

Յունական ամէն կարեւոր քաղաք իրեն յատուկ պաշտպան աստուածն ունէր: Այսպէս՝ Աթէնքինն էր՝ Աթինաս, Արգոսինը՝ Հեռա, Թէբիսինը՝ Ապոլոն, Կիպրոսինը՝ Աստղիկ ևն.:

Յոյները դժուարին պարագաներու մէջ—Արևելք-ցիներուն պէս—աստուածներէ խորհուրդ կը հարցընէին: Ամէնէն երևելի պատգամատեղին էր Թեփիս՝ որ նշանաւոր ուխտատեղի մը դարձած էր բոլոր Յոյն ժողովրդոց համար: Ապոլոնի քրմուէին—Պիւթիա— փափ մը եզրը՝ եռոտանիի մը վրայ նստած, հազար ու մէկ նազանքներով, անկապակից ու կցկտուր խօսքեր կը թափթփէր բերնէն՝ զորս քուրմերը հաւաքելով՝ պարագային յարմար երկգիմի մեկնութիւն մը կուտային պատգամահարցին, որ զո՞ սրտով կը մեկնէր:

Յոյները կը հաւատային հանգերձեալ կեանքի. — բարիները պիտի ժառանգէին հեշտալի գրախտ մը — Եղիսեան դաշտ—, իսկ չարերը պիտի մասնուէին դժոխքի — Տարտարոսի— սոսկալի տանջանքներուն:

Լ Ա Կ Ո Ն Ի Ա

1. Պելլագոնէսի արեւել. կողմը կը գտնուի ԼԱ-ԿՈՆՆԱ գաւառը որ գեղեցիկ հովիտ մըն է և Մեսե-նայէն կը բաժնուի Տայգէս լեռներով:

Այս երկրին նախկին բնակիչներն էին Լակեդեմոնացիք, որոնք իրենց անկախութիւնը կորուսին՝ երբ Դորիացիք արշաւեցին Պելլագոնէս և անոնց հարկատու եղան: Այսպէս, Լակոնիա կը պարունակէր երեք գաւաակարգի ժողովուրդ. Ա. Նորեկ գաղթականները, որոնք Սպարտացի անունով ամէնէն զօրաւոր դասը

կը կազմէին: Բ. Լակեդեմոնացիք, որոնք թէպէտ առաջիններուն հարկատու, բայց ունէին իրենց յատուկ թագաւոր և հողային ստացուածքներ: Գ. Հիլոյները՝ որոնք պարզապէս գերի և ամէն իրաւունքէ զրկուած էին:

Բնական էր որ իրարու հակառակորդ այս երեք գաւաակարգերուն մէջ անպակաս ըլլային ընտանի վէճեր ու քաղաքական խռովութիւններ, մանաւանդ երբ ատոնց առաջըն առնող որոշ օրէնք մըն ալ գոյութիւն չունենար:

2. ԼԻԿՈՒՐԳՈՍ (880 Ք. Ա.) — Արքայական ընտանիքէ՝ իմաստուն անձ մըն էր Լիկուրգոս, որ երկար ճամբորդութիւններ ըրած էր, նպատակ ունենալով այլ և այլ ազգերու վարքն ու բարքը և մանաւանդ անոնց օրէնքներն ուսումնասիրել:



Լիկուրգոս

Իր երկիրը վերադարձին, Գելիսի պատգամէն քաջալերուած և իր հայրենակիցներուն աղաչանքով՝ յանձն առաւ նոր ու արդար օրէնքներով Սպարտան բարեկարգել:

Լիկուրգոսի գլխաւոր նպատակն էր՝ նիւթական հարստութեան համար խռովութեան տեղի տուող պատճառները մէջտեղէն վերցնել ու երկրին ծառայելու համար պատրաստել օրինապահ զինուորներ: Այս նպատակաւ, նախ և առաջ, հողային հաւասարութիւն հաստատեց, այսինքն Սպարտան հաւասար կերպով բաժնեց քաղաքացիներուն մէջ՝ որոնք չէին կրնար իրենց բաժինը ուրիշին ծախել: Լիկուրգոս, ոսկի և արծաթ դրամները վերցուց և անոնց տեղ երկաթէ անագին դրամներ հաստատեց, որպէսզի հարստութեան չի ցանկան:

3. Լիկուրգոսի օրէնադրութեան հիմը բոլորովին նիւթական էր, այսինքն՝ մարդ էակը իբրև թէ ո՛չ հոգի ունէր, ո՛չ սիրտ և ո՛չ ալ իմացականութիւն,

այլ մի միայն նիւթական մարմին մը, միս ու ոսկոր, զօրս պարտաւոր էր մարդել ու աճեցնել: Ուստի երբ նորածին մանուկը տկար ու ճզղած ըլլար, իբրեւ անպէտ առարկայ, գետը կամ փոսը կը նետուէր: Իսկ եթէ քաջառողջ ըլլար, կը յանձնուէր իր ծնողացը որոնք մինչեւ 6 տարեկան հասակը կը խնամէին, անկից յետոյ տղան սեփականութիւնը կ'ըլլար պետութեան՝ որու մասնաւոր պաշտօնեաներուն ձեռքով կը կրթուէր: Սպարտացի տղուն դաստիարակութեան սահմանն էր մարմնամարդ և ձիափարժութիւն: Մարմնական որ և է հանգիստ կամ դիւրակեցութիւն իսպառ արգիւրուած էր: Սպարտացի տղաք, ամառ ձմեռ միեւնոյն պարզ հագուստը կը կրէին, բոկոտն էին, անկողին ըլլալով՝ եղէգի կտորուանք կամ չոր գետինը միայն ունէին: Յաւի եւ տանջանքի զիմանալու համար, փառաւոր կերպով ծեծ կ'ուռէին, և ո՛վ որ շատ դիմանար՝ ծափեր ու մրցանակներ կ'ընդունէր: Բարձրարեւծ լեռներէ վեր մագլցիլ, իրարու հետ մենամարտիլ, ոտքով երկար արշաւներ կատարել, անդունդներէ վար իջնել, մացառուտ և քարոտ ձամբաներէ ժամերով քալել՝ իրենց հաճույքն ու գլխաւոր մարդանքներն էին:

Սպարտացի տղաք ճարպիկութեան վարժուելու համար՝ ազատ էին գողութիւն ալ ընել, բայց բռնուողը չարաչար կը պատժուէր՝ պարզապէս իր անձարակութեանը համար: Սպարտացի տղուն համար ո՛չ տուն կար, ո՛չ ծնողք, ո՛չ ընտանիք, ո՛չ ազգական և ոչ ալ բարեկամ, ընդհակառակը՝ ասոնց ամէնուն փոխարէն՝ միակ բան մը՝ ձգոյութիւն ունէր, այն էր իրենց հայրենի երկիրը Սպարտան: Իրենց մտաւոր կրթութեան միջոցներն էին սրինգ ու քնար ածել, կրօնա-

կան և մարտական երգեր, և մանաւանդ կարճ, բայց իմաստալից խօսակցութեան ձեւ մը, որ նշանաւոր եղած է Լակոնական ոճ անունով:

4. Սպարտացի տղոց ամէնէն գեղեցիկ մէկ առաքինութիւնն էր՝ ծերերը յարգել ու մեծարել: Ամէն քաղաքացի, օրէնքով սահմանուած միեւնոյն միօրինակ կեանքը կը վարէր, սեղանին հասարակաց, ճաշերնին շատ պարզ ու չափաւոր էր: Քսան տարեկան ամէն Սպարտացի զինուոր էր և Սպարտան ալ տեսակ մը զօրանոց՝ ուր ամէնէն խիստ կարգապահութիւնը կը տիրէր: Եւ որովհետեւ աղջիկ տղաքն ալ մանչերուն նման գրեթէ միեւնոյն կրթութիւնը կը ստանային, անոնք ալ ապագային եղան նշանաւոր մայրեր՝ որոնք միեւնոյն ոգիով և Սպարտական միեւնոյն զգացումներով դաստիարակեցին իրենց զաւակները, Լիկուրգոսի փափաքին համաձայն:

5. Բայց երբ ուշագրութիւն ընենք որ, Լիկուրգոսի օրէնքով, Սպարտացիք ո՛չ արհեստ, ո՛չ ճարտարութիւն, ո՛չ ձեռագործ և ոչ ալ վաճառականութեամբ պէտք էին զբաղիլ, երբ նկատենք թէ՛ օրէնքը չէր ներքի իրենց Սպարտայէն հեռանալ և օտարական ընդունել իրենց մէջ, երբ արհամարուած էին ուսում և իմացական դաստիարակութիւն, երբ վերջապէս կաշկանդուած էին բարոյական զարգացման ամէն միջոցներ, այն ատեն պիտի համոզուինք թէ՛ Սպարտայի առերեւոյթ զօրութիւնը՝ բարոյական ոյժէ զուրկ՝ բոլորովին նիւթական էր, և հետեւապէս կեանք ու տեւականութիւն չիպիտի կրնար ունենալ:

6. ՄԵՍՆԱԿԱՆ ՊՍՏԵՐԱԶՄՆԵՐ. — Ինչպէս տեսանք, Լիկուրգոսի դրած օրէնքներուն հետեւանքով,

Սպարտացիք առաջին կարգի զինուորական ժողովուրդ մը եղան և բնական էր որ իրենց այս եռանդին գոհացում տալու համար ասպարէզներ փնտռելով՝ բոլոր Յունաստանի վտանգ մը դառնային: Իրօք ալ, իրենց առաջին հարուածը տուին դրացի Մեսենացիք ու յաջորդական երկու պատերազմներով բոլորովին տիրեցին Պելոպոնէսի այս կարեւոր գաւառին:

Առաջին պատերազմին մէջ, որ 20 տարի տեւեց, (774—724), Մեսենացիներուն կողմէն երեւելի հանգիստացաւ Արիստոքիմ, իսկ երկրորդին մէջ՝ (681—668) Արիստոմէն անուանի զօրապետը որ, թէև արխարար գիմազրելով քանի մը յաղթութիւններ ալ տարաւ, բայց վերջապէս Սպարտացիք յաջողեցան Մեսենիան բոլորովին նուաճել:

Այն ատեն շատ մը Մեսենացիներ լաւագոյն սեպեցին գաղթել օտար երկիրներ, ինչպէս հարաւային Իտալիա և Մանաւանդ Սիկիլիա կղզին՝ ուր հիմնեցին Մեսինա քաղաքը:

Քրիստոսէ 5 դար առաջ, Սպարտացիք դրեթէ ամբողջ Պելոպոնէսի տիրած ըլլալով՝ կը սպառնային Յունաստանի մնացեալ մասերն ալ նուաճել, երբ պարագաներն այնպէս մը բերին որ, ընդհակառակը՝ Յունաստանի բոլոր ժողովուրդները իրենց մէջ ունեցած ատելութիւններն ալ մոռնալով՝ ձեռք ձեռքի տուին՝ իրենց երկիրը անարկու թշնամի մը դէմ պաշտպանելու համար:

**Ա Տ Տ Ի Կ Է**

1. ԱՏՏԻԿԷ. — Ելլագոյի արեւելեան կողմը՝ աշխարհագրական հիանալի դիրքով փոքր թերակղզի

մըն է Ասսիկէ՝ որու արեւելեան կողմը կը գտնուի Երբեա, իսկ արեւմուտքը՝ Սալամիսն ու Եգիսն փոքր կղզիները:

Ատտիկէի մայրաքաղաքն էր Աթէն, որ իր պաշտպան զիցուհի Աթենասի անունով էր կոչուած: Աթէնք՝ մըրն մը միայն հեռու կը գտնուէր ծովէն՝ իրեն նաւահանգիստ ունենալով Փալերիա փոքր քաղաքը:

Ատտիկէի շուրջը կը գտնուէին նաւահանգիստներ, շէն ու արգաւանդ կղզիներ՝ որոնց շնորհիւ՝ Յունաստանի այս գաւառը եղաւ առաջին կարգի ծովային ու առեւտրական կեդրոն մը: Ո՛չ միայն Յունաստանի, այլ և բոլոր մարդկային ազգի պատմութեան մէջ նշանաւոր եղած է Ատտիկէ՝ իբրև կեդրոն և խտացում յունական քաղաքակրթութեան, իբրև որբան՝ մեծ իմաստուններու, ճարտարութեանց, արուեստից և գեղեցիկ դպրութեանց: Աթէնացիք՝ Հելլէնական չորս ցեղերուն խառնուրդը և անոնց ընտիր ընտիր բարեմասնութեանց մէկ հաւաքածոն կը ներկայացնէին: Ասոնք, իրենց Կողքոս դիւցազն թագաւորին մահէն յետոյ (1045), իշխանութիւնը յանձնեցին նախագահի մը որ կը կոչուէր Արխոն և ցկեանս պաշտօն կը վարէր: Յետոյ, Արխոններու պաշտօնին պայմանաժամը 10 տարիի զեղչեցին, և ի վերջոյ, կ'ընտրէին 9 Արխոն՝ որոնք միասին մէկ տարի միայն պաշտօն կը վարէին:

2. Սակայն, կառավարութեան այս ձևն ալ չի գորեց սանձել ազնուապետական զօրաւոր զերդաստաններու անիրաւ արարքները՝ որոնց պատճառաւ ժողովրդական դատակարգը շատ զրկանքներու ենթարկուած էր: Իրաւ է որ Իրական անուն Արխոնը նոր օրէնքներով ջանաց տիրող անկարգութիւններուն

վերջ տալ, բայց իր խստութիւնը այն աստիճան ծայրայեղութեան հասցուց որ, ամէնուն դժգոհութեանը տեղի տուաւ և ինքն ալ ստիպուեցաւ Աթէնքէն հեռանալ:

3. ՍՈՂՈՆ ՕՐԷՆԱԴԻՐ (600). — Այս միջոցին Աթէնքի մէջ կ'ապրէր Սոլոն անուն երեւելի փոխտփան և առաքինի քաղաքացին, որ իր մեծ հմտութեամբը ամէնուն սէրն ու համակրանքը շահած էր: Աթէնացիք, Դրակոնի մեկնելէն յետոյ՝ այս անուանի մարդուն դիմեցին որպէս զի իրենց օրէնքներ զնէ:



Սոլոն

Սոլոն յանձն առաւ և իր դրած արդար և իմաստուն օրէնքներուն շնորհիւ՝ Աթէնք ո՛չ միայն խաղաղեցաւ, այլ եւ շատ զարգացաւ քաղաքակրթութեան մէջ:

Սոլոնի օրէնագրութեան ոգին ու նպատակը դիւրաւ սորվելի ուզողը՝ թո՛ղ աչքի առաջ բերէ Լիկուրգոսի օրէնքները և ճիշտ անոնց հակառակը երեւակայելով՝ կ'ունենայ Աթէնացի իմաստունին օրէնագրութեան բարձր նպատակն ու ամբողջութիւնը:

4. Սոլոն, ամէնէն առաջ, ընտանեկան կազմակերպութիւնը պահպանեց: Պարտք դրաւ որ ամէն ծնողք իր զաւակներուն թէ՛ մարմինը և թէ՛ միտքը հաւասարապէս կրթելու հոգ տանի, ժամանակին՝ անոնց արհեստ մը սորվեցնեն՝ որպէս զի իրաւունք ունենան իրենց ծերութեան ատեն անոնցմէ օգնութիւն սպասելու: Աշխատութիւնը, նիւթական և բարոյական հարստութեան տիրանալու ընտանեկան բաղձանքը՝ իր օրէնքներով քաջալերեց Սոլոն: Ոյժտուաւ ճար-

տարութեան, արուեստից և վաճառականութեան: Պարտք դրաւ որ, քաղաքակիրթ ժողովուրդի յատուկ ասպնջականութեամբ ընդունին օտարականները և մինչեւ իսկ սարուկներու հետ ազնիւ և մարդասիրական ընթացք մը ունենան: Սոլոն արգելեց որ պարտապահանջը իր պարտապանը զերի ընէ, նոյնպէս դրամ փոխ առնել տալը — որ անհրաժեշտ է գործի և վաճառականութեան մէջ — չարգելեց Սոլոն, միայն ստակին տոկոսը նուազեցուց:

5. Իրենց պապերէն ժառանգութիւն մնացած շինծու ազնուականութեան տեղ, Սոլոն ճշմարիտ ազնուականութիւն մը հաստատեց, այսինքն՝ անձնական արժանիքի և նիւթական հարստութեան վրայ հիմնուած ազնուականութիւն մը: Հարուստը այն ատեն ազնուական կը սեպուէր, երբ իր ունեցածէն կարեւոր բաժին մը կը հանէր իր երկրին և ազգակիցներուն շահուն ու փառքին համար: Ամէն Աթէնացի, երբ 16 տարեկան ըլլար, տէրութեան խնամօքը կը դաստիարակուէր՝ իբրեւ ապագայ զինուոր: Իսկ քսան տարեկանին՝ կ'ըլլար քաղաքացի և իբր այն՝ ստէն իրաւունք կը վայելէր: Սոլոն, ժողովուրդը իր հարստութեան աստիճանին համեմատ, չորս դասերու բաժնեց որոնց իւրաքանչիւրը իբրեւ զինուոր և քաղաքացի՝ իր յատուկ պարտքերն և իրաւունքներն ունէր: Սակայն Աթէնական իշխանութեան վարիչ մեքենան կը բաղկանար 4 մարմիններէ, և. Ժողովրդային ժողով, Բ. Մերակոյս. Գ. Արիսպագոս և Դ. Արխոններ:

6. Ժողովրդային ժողովը կը բաղկանար 20ը լրացուցած քաղաքացիներէ՝ որ ընդհանրապէս կազմուած էր 5—6000 անձէ: Այս ժողովը երկրին օրէնագիր և

վերին համարառու մարմինն էր: Ինք կ'ընտրէր՝ ատե-  
նակալներ, դատաւոր, գեսպան և զօրապետ: Արխա-  
պագոսը գերագոյն և պատկառելի ատեան մըն էր՝ որ  
կը բաղկանար Արխոններէ և տէրութեան ամէնէն  
բարձր պաշտօնները վարած փորձառու անձերէ: Այս  
ատեանը կարող էր մահուան վճիռ արձակել, օրէնքի  
գործադրութեանը վրայ հսկել, պաշտպանել կրօնն ու  
ընտանեկան դատախարակութիւնը և անգործ քաղա-  
քաքացիներուն գործ հայթայթել:

Այս ատեանը ա՛յնքան մեծ համբաւ հանեց իր պատ-  
կառանքովն ու ազդեցութեամբ որ իր անունը մինչ-  
չեւ հիմայ փոխաբերաբար կը գործածուի, նշանակե-  
լու համար վեհաշուք և պատկառելի ժողով մը:

Արխոններ. — Ինչպէս ատեանք, Արխոնները 9  
հոգիէ բաղկացած էին և միայն մէկ տարի պաշտօն  
կը վարէին: Ասոնք, երկրին գործադիր իշխանու-  
թիւնը կը կազմէին և էին նախագահ՝ քանի մը ատ-  
եաններու: Արխոնները պարտաւոր էին իրենց ան-  
բասիր վարքովն ու կենցաղավարութեամբ՝ բոլոր  
քաղաքացիներուն բարի օրինակ հանդիսանալ:

ԼԻԿՈՒՐԳՈՍԻ ԵՒ ՍՈՒՈՆԻ ՕՐԷՆՔՆԵՐՈՒՆ

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆԸ

7. Սպարտա՝ զինուոր արտագրող տեսակ մը գոր-  
ծարան էր: Աթէնք՝ զինուորին հետ ընտիր քաղա-  
քացիներ ալ յառաջ կը բերէր: Սպարտայի մէջ ան-  
ուանական էր հաւատարութիւնը որ, միայն բարձր  
դասուն մէջ գոյութիւն ունէր և կը կայանար ստո-  
րին դասերը, մանաւանդ գերիները (չիլոգ) իրենց

շահուն ծառայեցներու մէջ: Մինչդեռ Աթէնք՝ (Տէ՛մօս,  
քաթթօս) տիպար կառավարութիւն մ'էր՝ ուր ասէն  
քաղաքացի՝ ընկերական ինչ ծագում և ինչ դիրք  
ալ որ ունենար, կարող էր իր անհատական արժա-  
նիքով ամէնէն բարձր ատիճաններու հասնիլ: Սպար-  
տա՝ զինուորական և միայն զինուորական անեղ ոյժ  
մ'ունէր, որով բոլոր Յունաստանի պահ մը սարտափ  
ազդեց: Իսկ երբ այդ ոյժն սպառեցաւ, ոչինչ մնաց  
իր անցեալէն: Մինչդեռ Աթէնք, իր քաղաքական իշ-  
խանութիւնը կորսնցնելէ ետքն ալ, չնորհիւ իր բա-  
րոյական և իմացական բարձր առաւելութիւններուն,  
մնաց՝ իբր քաղաքակրթութեան կեդրոն և սպառազ  
դարերուն մէջ ալ անհուն ազդեցութիւն և փառք  
ստացաւ:

ՊԻՍԻՍՏՐՍԵՏ ԵՒ ԻՐ ԵՐԿՈՒ ՈՐԳԻՆԵՐԸ

(564—513)

Տ. Սոլոն իր օրէնքները դնելէ յետոյ, մեկնեցաւ  
Աթէնքէն ու դէպ ի Արեւելք երկար ճամբորդութիւն  
մ'ըրաւ: Այս միջոցին էր որ այցելեց Լիւգիոյ մեծա-  
հարուստ թագաւոր Կրեսոսի՝ որու մտափառութիւնը  
դատապարտեց և խորհուրդ տուաւ որ չի վստահի  
բաղդին անկայուն շնորհներուն:

Սոլոն, 10 տարիէն վերադարձաւ Աթէնք և տե-  
սաւ որ Պիսիստրաս անուն ազնուական մը իշխանու-  
թիւնը զբաւեր է: Այս մարդուն իշխանութիւնը շատ  
օգտակար եղաւ Աթէնքի՝ որու ծովային զօրութիւնն  
աւելցուց, քաջալերեց զպրութիւնն ու արհեստները,  
հիմնեց հասարակաց մատենադարան մը և ինքը առա-

ջին անգամ ի գիր առնել տուաւ Հոմերոսի բանաստեղծութիւնները որոնք մինչեւ այն ատեն ժողովրդական երգիչներ (Ղափսօ՛տոս) քաղաքէ քաղաք շքրջելով կ'երգէին: Ի վերջոյ Պիսիատրատ Սոլոնի օրէնքները վերահաստատեց և շատ պարագաներու մէջ անոր իմաստուն խորհուրդներուն դիմեց:

Իսկ իր երկու որդիքը, Իպպարգոս և Իպպիաս, իրենց բուն ընթացքին համար ժողովրդին ատելի եղան: Առաջինը քիչ ատենէն իր մահը գտաւ, իսկ Իպպիաս ստիպուեցաւ խոյս տալ Պարսկաստան՝ ուր սկսաւ յորդորել Դարեհը՝ որպէս զի Յունաստան արշաւէ:

Այս խառնաշփոթութիւններուն մէջ՝ Կլիսթենես անուն երեւելի Աթէնացի մը կարեւոր ծառայութիւններ մատուց իր երկրին: Կըսուի թէ ինքը եղած է Խեցեվնիոը (Օսթրաքօն) հաստատողը:

ՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ


Ա. ՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ (504—490)

1. Պատմութեան մէջ շատ նշանաւոր եղած են Մարական անուշով այն պատերազմները որոնք Քսէհինգ դար առաջ՝ Յունաց և Պարսիկներուն միջեւ տեղի ունեցան և իբր կէս դար տեւեցին:

Այս անհաւասար պայքարին մէջ գեղեցիկ կերպով կը պատկերանան՝ Յունաց բարոյական զօրութեան կարեւորութիւնը՝ բիրտ ոյժին քով և արուեստին ու

հնարամտութեան արժէքը՝ ծաղրելի յանձնապատաստութեան հանդէպ:

Պարսից պատմութեան վերջին մասին մէջ արդէն տեսանք որ Դարեհ, Փոքր Ասիոյ յունական գաղթականութիւնները բոլորովին նուաճելով՝ անցաւ Եւրոպա ու Թրակիայի տիրելով՝ կուզէր Յունաստանն ալ իր ընդարձակ կայսրութեան միացնել: Բայց Դարեհ և իր յաջորդները այս նպատակին հասնելու համար՝ անհաւատալի դժուարութեանց պիտի հանդիպէին՝ բաղդատարար շատ փոքրաթիւ ժողովրդի մը կողմանէ: Նախ, Յոնիոյ յոյն գաղթականները գլուխ քաշեցին և Աթէնացիներուն դրկած օգնութեամբ՝ յաջողեցան Պարսիկները իրենց սահման



Սարդիկէ

ներէն վանել և Լիւզիա մտնելով՝ Սարդիկէ քաղաքը կրակի տալ: Բայց վերջապէս անկարող ըլլալով թշնամիին ահագին զօրութեան դիմադրել, յաղթուեցան, որով Պարսիկները Միլէքը և Յոնիական քա-

նի մը քաղաքները կործանելով՝ վերստին տիրացան Փոքր Ասիոյ Յոյն գաղթականութիւններուն :

2. ՄԱՐԱԹՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (490—485) . —

Մարական պատերազմներու այս առաջին արարուածէն յետոյ՝ Դարեհ սրոշեց վրէժ լուծել Եւրոպայի Յոյներէն՝ սրոնք իրենց Ասիացի եղբայրներուն օգներ էին : Այս նպատակաւ, իր Մարտոնիոս փեսին ահագին բանակ մը յանձնեց որպէս զի Թրակիոյ ճամբով մտնէ Յունաստան և զայն նուաճէ : Բայց նաւատորմը Արոս լեռան հրուանդանին մօտ ստակալի փոթորիկի մը բռնուելով բնաջինջ եղաւ և Մարտոնիոս ցամաքի վրայ ալ պարտուելով՝ ամօթահար վերադարձաւ Ասիա, առանց Յունաստանի սահմանը ոտք կոխել կարենալու :

Դարեհ չի յուսահատեցաւ և իր Թաս ու Արսափոնց զօրապետներուն յանձնեց 100,000 զօրք և ահագին նաւատորմ մը որ նախ Կիկլասեան կղզիներուն տիրելով՝ հասան Ասսիկէ թերակղզին և Իպպիասի խորհրդով՝ բանակեցաւ Մարաթոնի դաշտին մէջ : Աթէնացիք, հակառակ Յունաստանի բոլոր ժողովրդոց իրենց ըրած զխնումին, միայն Պլասեացիներէն 1000 զինուոր օգնութիւն գտան, որոնք եկան միանալ իրենց սակաւաթիւ բանակին որ հազիւ 10,000 հոգիէ կը բաղկանար : Սակայն, իրենց երկու անուանի զօրապետները՝ Արիստիդէս ու Միլդիասես՝ միլիոնաւոր զօրք կ'արժէին, մանաւանդ վերջինը՝ որու զինուորական հանձարին շնորհիւ՝ Աթէնացիք կը յաջողին իրենցմէ անհամեմատ աւելի զօրաւոր թշնամիին բանակը ջախջախել և ստիպել զանոնք որպէս զի սարսափահար՝ իրենց նաւերը խուճապեն : Այս փառաւոր յաղթութեան վրայ զինուոր մը ուրախութենէն կը թռի Աթէնք՝ առաջին անգամ ինքը տալու համար

Մեծ աւետիար և «Յաղթեցինք» բառն արտասանելով՝ Արիստագոոսի ատենակալաց ոտքին առջև շքնշատ պառ կը մեռնի : Աթէնք, իր քաջերուն յիշատակին իբր երախտագիտութեան նշան, Մարաթոնի դաշտին



Միլդիասէս



Արիստիդէս

մէջ՝ սիւնազարդ փառաւոր շիրիմ մը կանգնեց : Նոյնպէս, այս պատերազմին մէջ իր մահը գտաւ վատազգին Իպպիաս :

Իսկ Մարաթոնի դիւցազնը Միլդիասէս՝ Պարոս կղզին Պարսից ձեռքէն չի կրնալ ազատելուն համար իբր կաշառակեր ամբաստանուելով՝ ծանր տուգանքի մը դատապարտուեցաւ : Եւ որովհետեւ անկարող էր այս գումարը վճարելու, բանտ դրուեցաւ՝ ուր մեռաւ թշուառ վիճակի մէջ, ո՛չ այնքան իր առած վէրքէն, որքան սրտին ցաւէն, իբր անմեղ զօ՛ր թեթեւամիտ հայրենակիցներուն ապերախտութեան :

ՄԱՐԱԿԱՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՄ

(485—479 Ք. Ա.)

3. ԲՄԵՐԲՄԷՍԻ ԱՐՇԱԽԱՆԲԸ . — Մարաթոնի ճակատամարտէն յետոյ, Դարեհ եղիպատոսի մէջ ծագած մէկ խռովութիւնը զսպելու զբաղած ըլլալով Յոյները քանի



մը տարի ժամանակ գտան ինքզինքնին ժողուելու : Միւս կողմանէ, Դարեհ ալ մեծամեծ պատրաստութիւններ տեսած էր պատերազմը վերսկսելու՝ երբ մեռաւ, պարտք զնելով իր որդւոյն Քսերքսեսի, որպէս զի Մարաթոնի պարտութեան նախատինքը չմոռնայ երբեք :

Քսերքսես, իր հօրը տուած խոստմանն հաւատարիմ, չորս տարի յետոյ ահագին պատրաստութիւններով ճամբայ ելաւ իր հօրը վրէժը լուծել և բուր Յունաստանը նուաճելու նպատակաւ : Իր բանակը կը բաղկանար, կ'ըսեն, 2,000,000ի չափ Պարսիկ և Ասիացի այլ և այլ ազգերու զինուորներէ, իսկ նաւատորմը 1300 ցոկանաւ և բազմաթիւ բեռնաբարձ նաւերէ : Քսերքսես, 485 թուականին՝ գարնան ճամբայ ելաւ Շօսէն և հասաւ Ելլեսպոնոս (այժմու Տարտանէ) : Այս նեղուցին վրայ՝ Եգիպտացի ու Փիւնիկեցի զորձաւորներու ձեռք կամուրջ մը ձգել տուաւ, բայց փոթորիկ մը ելլելով՝ կործանեց զայն :

Կ'ըսուի թէ, Քսերքսես բարկութենէն ծովը շրջթայեց ու խարազանել տուաւ : Քանի մը ամիսէն նորէն շինուեցաւ կամուրջը՝ ուսկից պարսկական ստուարաթիւ բանակը եօթն օր ու եօթը գիշերուան մէջ՝ անցաւ Ասիան Եւրոպա՝ ուր Քսերքսես կ'ուզէր հպարտութենէն ի տես իր ծովածաւալ բանակին՝ զոր անպարտելի կը կարծէր :

4. ԱՐԻՍՏՈՂԻԷՍ ԵՒ ԹԵՄԻՍՏՈՂԻԷՍ. — Տարաբազդ Միլզիատէսի մեռնելէն յետոյ՝ Աթէնքի երկու նշանաւոր քաղաքացիներն էին Արիստիդէս ու Թեմիստոկլէս, որոնք իրենց քաղաքագիտական հանճարին կը միացնէին զինուորական բարձր կարողութիւններ : Առաջինը համբաւաւոր էր իբրեւ խոհեմ, արդարա-

դատ ու ծայրայեղ պահպանողական, մինչդեռ Թեմիստոկլէս՝ ընդհակառակը, խորագէտ, յանդուգն և իր երկրին օգտին ու պատուոյն համար ամէն միջոց գործադրելու պատրաստակամ էր :

Վերջապէս, երբ Արդարն Արիստիդէս՝ պարզ և անտեղի ամբաստանութիւնով մը աքսորի դատապարտուեցաւ, ասպարէզը բոլորովին մնաց Թեմիստոկլէսի :

Այս մեծ մարդն էր որ ամէնէն աւելի աղէկ գուշակած էր թէ՛ Մարաթոնի ճակատամարտը նախատեսակն էր ապագայ շատ աւելի բուռն և վտանգաւոր պայքարներու : Այս նախատեսութեամբ՝ ամէն միջոց ի գործ զնելով՝ Աթէնական բանակն ու նաւատորմը զօրացուցած՝ և կազմ ու պատրաստ վիճակի մը մէջ թեմիստոկլէս գրած էր :



Թեմիստոկլէս

5. ԹԵՐՄՈՊՈՒԼԷՒ ՊՍԵՐՍՉՄԸ. — Մինչդեռ Քսերքսես իր բանակին գլուխն անցած Թրակիոյ ճամբով դէպի Յունաստան կը յառաջանար, պարսկական նաւատորմիդն ալ Եգէական ծովէն կը մօտենար դէպի Ատտիկէ :

Յաղթութեան առաջին պատիւը Յունաց վերապահուած էր, որովհետեւ Եւբէա կղզիին հիւսիսակողմը, Արսեմիսիոն հրուանդանին մօտ, պարսկական նաւատորմին հանդիպելով՝ փառաւոր յաղթանակ մը տարին 400 նաւ ընկղմելով : Սակայն ահաւոր էր թշնամիին զօրութիւնը՝ որու առջեւ յունական շատ մը ժողովուրդներ ահաբեկ՝ հպատակութիւն յայտնեցին : Միայն Աթէնք և Սպարտա՝ ամէն զոհողութիւն յանձն առնելով՝ պատրաստուեցան յուսահատ պատերազմի մը : Յամաքային զօրաց հրամանատարու-

Թիւնն յանձնեցին Սպարտայի քաջարի Թագաւոր  
 Լեւոնիդասի, որ պիտի պաշտպանէր Թէրմոպիլէի՝  
 նեղ ու ամուր կիրճը՝ ուսկից միայն կարելի էր Պար-  
 սից՝ ցամաքի ճամբով Յունաստան մտնել: Իսկ Աթէ-  
 նացիք՝ Թէլփիսի պատգամին համաձայն և Թեմիտոկլ-  
 լէսի խորհրդով՝ ծովու վրայ պիտի պաշտպանէին  
 յունական երկիրը:

ԼԵՒՈՆՆԻԴԱՍ. — Քսերքսէս հասաւ Թէրմոպիլ՝ ուր  
 Լեւոնիդաս հազիւ 400 հոգիէ բաղկացած փոքրիկ  
 բանակ մ'ունէր՝ որու միայն 300ը Սպարտացիներ  
 էին: Պարսից Շահըն—Շահը չէր կրնար երեւակայել  
 որ այս ողորմելի խումբը պիտի համարձակէր իր  
 միլիոնաւոր զօրաց զիմադրելու յանդգնիլ, ուստի  
 խզճալով, լուր զրկեց Լեւոնիդասի որ պէսզի հնա-  
 զանդի իրեն և զէնքերը յանձնէ: Սպարտայի անվեներ  
 Թագաւորը լակոնական ոճով մը պատասխանեց,  
 « Եկ'ւր, Ա՛ռ »:

Քսերքսէս բարկանալով՝ յարձակման հրաման կու-  
 տայ: Սպարտացիք անման արիութեամբ կը կռուին՝  
 հազարաւոր Պարսիկներ փռելով կիրճին բերանը:  
 Բայց ահա մատնութիւնը օգնութեան կը հասնի Պար-  
 սից՝ երբ Նփիալսես անուն յոյն մը՝ Քսերքսէսի ցոյց  
 կուտայ գազանի ճամբայ մը՝ ուսկից կրնային մտնել  
 Յունաստան և Լեւոնիդասի փոքրիկ բանակը կռնա-  
 կէն զարնելով բնաչինջ ընել:

Իրօք ալ, յոյներուն համար մահը միայն կը մնար  
 իրենց բաժին: Եւ որպէս զի սուղ ծախէին իրենց կեան-  
 քը՝ կիրճէն դուրս ելլելով մոլեգնաբար կը կռուէին  
 անհամար Պարսից դէմ: Զեռքերնին ո՛չ սուր կը դի-  
 մանայ և ո՛չ նիզակ, այնքան շատ մարդ կը ջարդեն  
 և մնացածներուն կ'ազդեն ահ ու սարսափ: Բայց

վերջապէս իրենք ալ ամբողջովին կ'իյնան պատերազ-  
 մի դաշտին վրայ: Մահու և կենաց այս պատերազմին  
 մէջ, Սպարտացիք՝ Լիկուրգոսի յիշատակն անմահա-  
 ցուցած եղան:

6. ՍՍԼԱՄԻՆԷԻ ԾՈՎԱՄՍԱՐՏԸ. (486) — Քսերքսէս,  
 յոյն մատնիչին ցոյց տուած ճամբով մտաւ Յունաստան  
 և ամէն կողմ աւերակ դարձնելով՝ ուղղակի քաղց  
 Աթէնքի վրայ գոր թափուր գտաւ, ինչու որ, բնա-  
 կիչները Թէմիստոկլէսի խորհրդով՝ նաւերն սպաստա-  
 նած էին: Քսերքսէս՝ Աթէնքը կրակի տուաւ և հոն  
 գտնուած սակաւաթիւ բնակիչներն ալ սուրէ անցուց:

Սակայն Յունաստանի բաղգը ծովու վրայ պիտի  
 վճռուէր: Ուստի, խորամանկն Թէմիստոկլէս իր նը-  
 պատակին հասնելու համար մատնիչ ձեւանալով՝ լուր  
 զրկեց Պարսից Արքային՝ որպէս զի առիթէն օգուտ  
 քաղէ և յունական նաւատորմը չցրուած՝ փութայ  
 չախջախել զայն:

Խաբուեցաւ Քսերքսէս:

Յոյն ծովակալը, Նեքիպիասես, Պարսից նաւատոր-  
 մին մօտենալը տեսնելով՝ քաշուեցաւ Սալամիսի նե-  
 ղուցին ամէնէն նեղ անցքին խորերը՝ որպէս զի թըշ-  
 նամիին գործելու և խոյս տալու միջոցները կաշկան-  
 դէ: Սոսկալի եղաւ այս նշանաւոր ծովամարտը՝ որու  
 մէջ Աթէնացիք իրենց հազիւ 300, բայց դիւրաշարժ  
 նաւերով՝ դիւցազնական արիութեամբ կռուեցան և  
 Պարսից 1000է աւելի նաւերուն մեծագոյն մասը այ-  
 րեցին, խորտակեցին կամ ծովամոյն ըրին: Քսերքսէս,  
 Սալամիսէի բարձր մէկ լեռան վրայէն՝ սոսկումով կը  
 դիտէր իր անպարտելի կարծած նաւատորմին բնաչինջ  
 ըլլալը սակաւաթիւ մարդոց ձեռօք և ցաւելով կը  
 տեսնէր թէ՛ մարդ շատ, բայց զինուոր չունէր իր

բանակին մէջ: Այս աղետալի հարուածէն ահաբեկ՝ Գսերքսէս ձկնորսի մը նաւակով խոյս տուաւ Երես-պոնսոսէն Ասիա՝ ուսկից վեց ամիս առաջ իբր անպարտելի յաղթական անցած էր:

ՊԱՏԻՍՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (479). — Սակայն Պարսիկները Մարսոնիոսի հրամանին ներքեւ տակաւին 300000 զօրաց բանակ մ'ունէին Եւրոպայի մէջ: Ահա այս ստուար բանակին դէմ էր որ Սպարտայի Պաւսանիաս թագաւորն և Արիստիդէս Աթէնացին՝ Բեոլսիոյ Պլասեա քաղաքին մօտ փառաւոր յաղթութիւն մը տարին՝ ուր Մարտոնիոս իր մահը գտաւ, իսկ Պարսից ցիր ու ցան բանակը պարտաւորեցաւ ի փախուստ խուճապել: Այս նշանակելի օրուան մէջ՝ Յոյները ծովու վրայ ևս ո՛չ նուազ փառաւոր յաղթանակ մը չը տանէին:

Քսանդիպպոս Աթէնացին, Փոքր Ասիոյ արեւմտ. կողմը (Սամոսի գիւմաց), Միկլայէ հրուանդանին քով՝ պարսկական նաւատորմը բնաջինջ կ'ընէր:



7. ԱԹԷՆՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻԻՆԸ. — Ինչպէս բացայտ կերպով տեսանք, շատ մը երեւելի մարդոց մէջ՝ Յունաստանի գոյութիւնը ահաւոր վտանգէ մը բուն ազատիչը Թեմիստոկլէս եղած էր՝ չնորհիւ իր հնարամիտ քաղաքականութեան ու զինուորական հանճարին:

Կը մնար ուրեմն պատերազմին պատճառած աղէտները դարձանել: Եւ ճիշտ այն միջոցին, երբ Թրակիոյ յունական բանակին հրամանատարը և Սպարտայի թագաւոր Պաւսանիաս, Գսերքսէսի փեսայա-

նալու համար մատնութեան կը զիջանէր, Թեմիստոկլէս ձեռնարկեց Աթէնքը վերաշինել, և հակառակ Սպարտացւոց անիրաւ առարկութիւններուն, նորա պարիսպները վերականգնեց և քաղաքը հին Փալէրիայի տեղ՝ ամուր պատերով նորաշէն Պիրէոն նաւահանգստին միացուց: Նոյնպէս՝ վերակազմեց Աթէնական նաւատորմը ու երկրին մեծութեան ու փառացն համար ամէն ջանք ի գործ դրաւ:


Սակայն Թեմիստոկլէս ալ իր անուանի նախորդներուն պէս ապերախտութեամբ վարձատրուեցաւ Աթէնացւոց կողմէն: Իր վայելած մեծ, բայց արդարացի համբաւը՝ շատերուն նախանձը շարժած էր, այնպէս որ ստիպուեցաւ հեռանալ իր երկրէն ու երկար թափառումներէ յետոյ զնաց Պարսկաստան՝ ուր կը թագաւորէր այն ստան Արտաշէս:

Հակառակ իր գտած փառաւոր և համակիր ընդունելութեան, և մանաւանդ՝ հակառակ իր հայրենակիցներուն կողմանէ տեսած ցած ապերախտութեան, Թեմիստոկլէս մերժեց Պարսից արքային առաջարկը և չուզեց մատնիչն ըլլալ այն երկրին՝ զոր ոգւով չափ պաշտպանած էր: Ուստի թոյն առնելով մեռաւ, կ'ըսեն:

8. ԱՐԻՍՏՈՒԴԷՍ և ԿԻՄՈՆ. — Թեմիստոկլէս ասպարէզէն քաջուելէ յետոյ, Աթէնքի երկու անուանի քաղաքացիներն էին Արիստիդէս և Կիմոն: Առաջինը՝ Մարսիան պատերազմին ամէնէն տաք միջոցին էր որ տըսորէն վերադառնալով՝ կարեւոր գեր մը կատարած էր Սալամինէի ծովամարտին մէջ: Պաւսանիասի մատնութեանէն յետոյ, Սպարտացիք պատերազմը շարունակելու հոգը բոլորովին թողուցին

Աթէնքի՝ որ իր դաշնակիցներուն գլուխն անցած և մանաւանդ՝ Միլլիաթէսի արժանաւոր որդի կիմոնի հրամանատարութեամբ՝ Պարսիկները բոլորովին վանեցին Եւրոպայէն։ Կիմոն, 477ին Կիպրոսն ու Բիւզանդիոնն ալ Պարսից ձեռքէն առնելէ յետոյ՝ Պամփիլիոյ մէջ Եւրիմեոն գետին քով վճռական յաղթութիւն մը տարաւ՝ որով Պարսիկները ստիպուեցան հաշտութիւն կնքել։ Այս նշանաւոր դաշնագրութեամբ, որ Մարական պատերազմներուն վախճանն ըսել է, Պարսից վեհապետը ո՛չ միայն Փոքր Ասիոյ յոյն գաղթականութեանց անկախութիւնը կը ճանշնար, այլ և յանձն կ'առնէր Եգեան ծովուն մէջ պատերազմական նաւ չի հանել։ Այս պատուարեր յաջուտութիւնը՝ իր հեղինակին անուանով կոչուած է Կիմոնի դաւնագրութիւն։

Իսկ Արիստիդէս, իր անսգլուտ առաքինութեամբ՝ մինչև մահը թէ՛ Աթէնացւոց և թէ՛ բոլոր դաշնակիցներուն սէրն ու վստահութիւնը վայելեց։ Արիստիդէս՝ տէրութեան ելեւմուտքը և խանգարեալ վարչութիւնը կանոնաւորեց և դաշնակիցներուն իրենց մայր երկրին հանգէպ ու փոխադարձաբար ունենալիք պարտականութիւնները դժեց։ Որքան հարուստ էր Արիստիդէս խելքովն ու սրտով, նոյն համեմատութեամբ ալ աղքատ մեռաւ, այնպէս որ, յուզարկաւորութեան ծախքն անգամ տէրութիւնը վճարեց և աղջիկներուն ալ օժտը տուաւ։



ՊԵՐՏԻԿԼԷՍ ԵՒ ԻՐ ԴԱՐԸ

( 449 — 431 )



Պերիկէս

1. Մարական երկարատեւ պատերազմներուն սէջ, Միլլիաթէս, Արիստիդէս, Թեմիսոկլէս, Լեւոնիդաս և Կիմոն իրենց երկիրն և ազգին զինուորական պատիւը փրկած էին։ Սակայն, նիւթական փառքի այս շրջանին կը յաջորդէ՝ իմացական լուսաւորութեան անսպասելի փառագոյնն շրջան մը՝ որու նմանը մինչև այն ատեն չէր տեսնուած մարդկային ազգի պատմութեան մէջ։

Այս նշանաւոր դարուն և այս փառաւոր շրջանին մեծ անձնաւորութիւնն է՝ Միկալէի յաղթականին՝ Քսանդիպպոսի որդին Պերիկլէս, որ Աթէնացւոց ամէնէն անուանի քաղաքացին եղաւ՝ բնական իր գերազանց յատկութիւններուն շնորհիւ։ Պերիկլէս՝ որքան մեծ զօրապետ և աննման պերճախօս, նոյնքան ալ համբաւաւոր էր իրրեւ փորձառու քաղաքագէտ և իր փոփոխամիտ քաղաքացիներուն հետ վարուելու մասին ունեցած հիանալի ճարպիկութեամբ։

2. Պերիկլէսի միակ նպատակն էր՝ Աթէնքը Յունաստանի մայրաքաղաք և Աթէնացիին՝ իր իմացական գերազանցութեամբը բոլոր յոյն ժողովրդոց առաջինն ընել։ Այս փափաքին հասնելու համար, Պերիկլէս իր նիւթական և բարոյական բովանդակ ազդեցութիւնն ի գործ դրաւ։ Աթէնքը՝ ճարտարապետական հրաշակերտներով զարդարեց։ Ինքը հիմնեց Աթէնասոյ մեծագործ տաճարը (Պարթէնոն), երաժշտութեան

Թատրոնը (Օտէն կամ Պրոպիէ), նոյնպէս՝ հասարակաց հոյակապ շէնքեր, նորանոր ճամբաներ ևն. որոնց ամէնքն ալ արուեստի, ճաշակի և փափկութեան զմայլելի գրոշմը կը կրէին: Փիղիաս անուն աննման արձանագործը և Պերիկլէսի մտերիմը՝ մէկ կողմանէ այս շինութեանց վրայ հսկելով՝ ինքն ալ հրաշակերտներ կ'արտագրէր և որոնց մէջ ամէնէն նշանաւորն է 37 տարեք բարձրութեամբ՝ Աքենասի փղոսկրէ ու սկիւէ հսկայ արձանը:

3. Պերիկլէսի դարուն փայլեցան Եսփիլես, Ասփոկլես ու Եւրիպիդես սղբերգակ անուանի բանաստեղծները, Արիստոփանէս երգիծարանը, պատմութեան



Եսփիլէս

Թուկիտիդէս

Արիստոփանէս

հայրը Հերոդոտոս, Մեղոն աստղաբաշխը, բժշկութեան հայրը Իպսոկրատ, Թուկիտիդէս պատմաբանը և Պոլիկլոնոս, Ձեւախ ու Ապոլոնոս նկարիչները որոնց գործերը գժբազդաբար կորսուած են:

Բոլոր այս մեծ հանձարները՝ Պերիկլէսի կողմանէ պատուով, համակրանքով ու քաջակերութեամբ շնորհապատուած էին, և իրենք ծնունդ տուին Հելլենական Գրականութեան և Ոսկեդարուն, որ իր Մեծ անձնավորութեան անունով կոչուեցաւ Պերիկլէսի դար:

### ՊԵՆՈՊՈՆԷՍԵԱՆ ՊՍՏԵՐԱԶՄՆԵՐ

(431—404)

4. Մարական պատերազմներէն առաջ՝ արգէն տեսանք որ, Յունաստանի երկու հզորագոյն տէրութիւններն էին Աթէնք և Սպարտա: Առաջինը՝ իր ծովային խի երկրորդը՝ ցամաքային զօրութեամբը նշանաւոր: Ասոնց ամէն մէկը կ'ուզէր բոլոր Յունաստանի գերիշխանութիւնը ձեռք ձգել: Սակայն Պարսից արշաւանքը վրայ հասնելով՝ ընդհակառակը բուր յոյն ժողովուրդները միաբանեցան՝ իրենց երկիրը փրկելու համար: Երբ այս մեծ վտանգն անհետացաւ, Աթէնք և Սպարտա իրենց հին հաշիւը մաքրելու ելան:

Ինչպէս տեսանք, Աթէնացիք իրենց դաշնակիցներուն առատ դրամով ո՛չ միայն մայրաքաղաքներն հրաշալի շէնքերով զարդարած, հագա նաեւ, իրենց պաշտպանութեան և ապագայ որ և է պատահականութեան իրր նախատեսութիւն, վերակազմած էին ա՛յնպիսի զօրաւոր տորմիզ մը որ պատկառանք կ'ազդէր: Սպարտա չէր հանդուրժեր Աթէնքի ստացած նիւթական և բարոյական այս աննախընթաց ազդեցութեանը զոր վտանգ մը կը նկատէր իր գոյութեան: Ահա բո՛ւն պատճառը 3) տարի տեւող այն պատերազմներուն՝ որոնք կոչուած են Պելոպոնեսեան և Յունաստանի կործանումը փութացուցին:

5. Ինչպէս Աթէնք, Սպարտա ալ իր դաշնակիցներն ունէր: Ասոնց մէջ ամէնէն երեւելին էր Կորնթոս, իբրև ծովային ու վաճառաչան տէրութիւն որ կուրի բռնուած էր Կորկիւրեցուց հետ: Աթէնացիք,

Պերիկլէսի խորհրդով այս վերջիններուն օգնեցին, ինչպէս նաեւ Պլատէացիներուն: Երեք տարի տեւեց այս առաջին պատերազմը: Սպարտացիք Ատտիկէ արշաւելով՝ քաղաքներ ու գիւղեր քանդ ու աւեր կ'ընէին, միեւնոյնը ի գործ կը դնէին Աթէնացիք՝ Պերոպոնէսի ծովեզերեայ քաղաքներուն և բնակչաց նկատմամբ: Այս խառնաշփոթութեան մէջ էր որ Աթէնքի մէջ ծագեցաւ սոսկալի ժանտախտ մը՝ որու զոհ գացին հազարաւորներու հետ՝ նաեւ Պերիկլէս (429): Երբ իր մտերիմները արտասուալից աչօք անոր մեծագործութիւնները կը ներբողէին, Պերիկլէս ըսաւ «Իմ երկարատեւ պաշտօնավարութեանս շրջանին մէջ կատարած ամէնէն նշանաւոր գործս սա՛ է որ, բնաւ քաղաքացի մը իմ պատճառաւս սուգի չենթարկուեցաւ»:

ԿԼԷՈՆ ԵՒ ՆԻԿԻԱՍ. — Պերիկլէսի պակասը շուտով զգալի եղաւ, որովհետեւ երկու քաղաքացիներ, Կլեոն և Նիկիաս՝ գլուխ կանգնելով՝ պատերազմը շարունակեցին:

Աթէնացիք Մեսիլինէ կղզիին բնակիչներէն 1000 հոգի գլխատեցին, Սպարտացիք ալ միեւնոյն անգթութեամբ վարուեցան Աթէնքի դաշնակից Պլատէացիներուն նկատմամբ:

Յաջողութիւնը երեք տարի, երբեմն մէկ ու երբեմն միւս կողմը մնաց:

6. Բայց երբ Աթէնացիք Սփակսքիա ու Պիլոս կղզիները պաշարեցին, և միւս կողմանէ Պրասիդա Սպարտացի զօրապետն ալ Թրակիոյ Ամփիպոլիս քաղաքին մօտ Աթէնացւոց դէմ մեծ յաղթութիւն մը տարաւ, այն ատեն երկու կողմերն ալ Նիկիասի խորհրդով, բայց ակամայ յանձն առին զինագուր կնքել որ կոչուեցաւ Նիկիասի խաղաղութիւն:

ԱԼԿԻԲԻԱԴ. — Սակայն այս խաղաղութիւնը քանի մը փառասէր մարդոց խորհրդներուն յարմար չէր գար: Ասօնցմէ մին էր Պերիկլէսի քեռորդին Ալկիբիադ, որ շատ ընտիր բարեմասնութեանց և ծայրայեղ թերութիւններու խառնուրդ մըն էր: Ալկիբիադ յաջողեցաւ համոզել Աթէնացիները որպէս զի պատերազմը վերսկսին և ինքն ալ նաւատորմին հրամանատարութիւնն ստանձնելով՝ Նիկիասի հետ ճամբայ ելաւ դէպի Սիկիլիա: Սակայն, կէս ճամբէն ետ կանչուեցաւ սրբապղծութեան ամբաստանութեամբ՝ Ալկիբիադ Սպարտա ապստամեցաւ, մինչդեռ Աթէնական բանակն ալ՝ անդին, զրեթէ բնաջինջ կ'ըլլար: Ալկիբիադ իր անյողգողգ բնաւորութեանը պատճառաւ Սպարտացիներուն ալ կասկածելի դառնալով՝ խոյս տուաւ Փոքր Ասիա՝ ուր Լիւգիոյ Տիստոփեոն մարդպանին դրամով յաջողեցաւ յունական բանակ մը կազմակերպել և ծովու վրայ ալ երկու ռնգամ յաղթեց Սպարտայի դաշնակից տորմիդներուն:

7. ԱԹԷՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ (404). — Որքան ատեն որ Աթէնացիք զօրաւոր նաւատորմի մը տէր էին, կրցան իրենց գոյութիւնը պաշտպանել՝ Պերոպոնէսեան կատաղի պատերազմաց մէջ: Բայց երբ յաջորդաբար, նախ Արքինուսա կղզիխուժիւն քով, և վերջին անգամ Ելլեսպոնտոսի մօտ՝ Եգոս գետին բերանը՝ Սպարտացի Լիւսանդր խորամանկ և արիասիրտ զօրապետը՝ Աթէնական նաւատորմիդը և մնացած միակ ընտիր բանակն ալ բնաջինջ ըրաւ, այն ատեն Աթէնք յաջողութեան ամէն յոյս կորսնցուց: Այս աղետալի պարտութեան վրայ, Լիւսանդր անարգել մտաւ Ատտիկէ, պաշարեց Աթէնքը և գայն սովի բռնելով առաւ ու նորա պարիսպները վայրագ ուրախութեամբ ու յաղ-

թական երգերով կործանեց: Այս եղաւ անա Պերպոնէսեան պատերազմներուն տխուր վախճանը:

Տ. Սպարապետ Աթէնքի տիրելով՝ Սուրնի օրէնքը ջնջեցին և կառավարութիւնը յանձնեցին 30 իշխաններու: Ասոնք, շատ մը կատկածելի Աթէնացիներ մահուան դատապարտեցին, իսկ շատեր ալ ինքնակամ հեռացան իրենց երկրէն: Ասոնց մէջ կը գտնուէր նշանաւոր անձ մը, Թրասիպոլ որ իր քանի մը հարիւր ընկերներով Թեփէ ապաստանեցաւ և հոն բանակ մը կազմակերպելով՝ քաղեց Աթէնքի վրայ և յաջողեցաւ 30 իշխանները վատրելով՝ իր երկրին անկախութեանը տիրանալ: Թրասիպոլ, Սուրնի հին օրէնքը վերահաստատեց և իր այս մեծ ծառայութեանն ի վարձատրութիւն, բաւականացաւ ձիթենիէ պարզ պրակ մը ընդունելով (103):



Սոկրատ

Այս դէպքէն չորս տարի յետոյ, Սոկրատ անուանի փիլիսոփան իր ժամանակի սուտ իմաստուններուն (Սոփիստ) նախանձին և վատթարացած Աթէնացիներուն ատելութեանը զոհուելով՝ մահուան կը դատապարտուէր:

Ն Ա Ն Ա Ջ Բ Ի Ի Ր Ո Ի Ն

9. ԿՐՏՍԵՐՆ ԿԻԻՐՈՍ (401). — Պերպոնէսեան պատերազմերէն յետոյ, Յունաստանի ամէնէն զօրաւոր տէրութիւնն էր եղած Սպարտա և իբր այն՝ պարտաւոր կը զգար զանի պաշտպանել իր շահուն համար:

Այս միջոցին, Կրստերն Կիւրոս, Փոքր Ասիայէն 10,000 յոյն վարձկան զօրքով ճամբայ կ'ելլէր դէպի Պարսկաստան՝ իր Արսաեսու Ուեսդ եղբոր դէմ պատերազմելու համար: Պատերազմը տեղի ունեցաւ Բաբելոնի մօտ (Կունաքսա) ուր խառնուրդին մէջ սպանուեցաւ Կիւրոս: Իսկ յոյները այս անձանօթ երկրին մէջ անպաշտպան, կը պատրաստուէին անձնատուր ըլլալ յաղթականին՝ երբ Քսենոփոն, որ Սոկրատի աշակերտներէն մ'ըն էր, յուսահատ զօրաց զլուխը կ'անցնի և իր ներշնչած քաջալերութեամբ ճամբայ կ'ելլեն Յունաստան վերադառնալու համար: Յոյները՝



Քսենոփոն

Բաբելոնէն մինչեւ Տրապիզոն, անձանօթ ու դժուարամատոյց երկիրներէ կ'անցնին, մաքառելով մարդկային ու բնական անհնարին դժուարութիւններու դէմ և վերջապէս Սեւ ծովը տեսնելով՝ ցնծութեան աղաղակներ կ'արձակեն: բայց հոն, նաև չի գտնելով՝ կը ստիպուին ծովեզերքէն մինչեւ Խրիսուպոլիս (Իւսկիւտար) հետիտան քաղել՝ ուսկից կ'անցնին դիմաց Եւրոպա:

Յոյները 15 ամառան մէջ 5800 քիլոմէթր կամ 1450 մղոն ճամբայ քալած էին անաղին կայսրութեան մը մէկ սահմանէն միւսն անցնելով՝ ինչ որ ամէնէն փայլուն ապացոյցն էր իրենց բարոյական գերազանցութեան և կարգապահութեան ոգիին: Այս նշանաւոր արշաւանքը որ կոչուած է Նախանջ բիւրուց, շատ հետաքրքրաշարժ ու սքեւորեալ սօսով մը ի գիր առած է նոյն ինքն Քսենոփոն:

10. ԱԳԵՍԻՍՍ. — Այս արշաւանքը ի վեր հանած էր սա գաղանիքը թէ՛ Պարսից պետութիւնը,

հակառակ իր արտաքին փայլին, ներքնապէս ու բարոյապէս շատ տկարացած էր: Ուստի, Սպարտայի Ագեսիլաս թագաւորը ուզեց այս պարագայէն օգուտ քաղել և զօրաւոր բանակով մը անցաւ Ասիա:

Սակայն հազիւ քանի մը յաղթութիւններ տարած էր, երբ ստիպուեցաւ վերադառնալ Եւրոպա, լսելով որ Աքեմէ, Կորնոս, Թեփե և Արգոս՝ Պարսից թելադրութիւնով նիզակակցութիւն մը կազմեր են Սպարտայի դէմ:

Ագեսիլաս, Բէսփտից Կորոնեա քաղաքին մօտ հանդիպեցաւ դաշնակից բանակին: Երկու կողմէն ալ կատաղաբար կռուեցան, բայց յաղթութիւնը մնաց Սպարտացւոց, որոնք վերստին տէր կ'ըլլային իրենց ցամաքային գերիշխանութեան: Սակայն միեւնոյն ատեն Կոնոն Աթէնացին ալ Սպարտայի ծովային տիրապետութիւնը կը կործանէր՝ Փոքր Ասիոյ մէկ ծովեզրին մօտ՝ անոր նաւատորմը բնաջինջ ընելով:

11. ԱՆՏԱՂԻԿԻԴԱՍԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ (337). — Այն աստիճան սպաւանած էին Յոյն ազգին բարքն ու նկարագիրը որ, Պարսից վեհապետները իրենց առատ դրամին շնորհիւ՝ կարող էին անոնց ամէնէն թանկագին բաները գնել, ինչպէս ճարտասան, զօրք ու զօրապետ, նաւատորմ, քաղաք ու քաղաքացի: Այսպէս, Սպարտա Անսալիկիդաս անուն իր խորամանկ մէկ եփորոտին միջոցաւ, մամնաւոր դաշնադրութեամբ մը Պարսից վեհապետին կը վաճառէր Ասիոյ յոյն գաղթականութիւնները և ինքն ալ բացարձակ տէր կ'ըլլար Եւրոպայի յոյներուն՝ միշտ Պարսից օժանդակութեամբ:

12. Թեփէի Գերիշխանութիւնը (371) — 362). — Սպարտացիք, Յունաստանի բոլոր ժողովրդոց հետ

ծայր աստիճան կոշտութեամբ կը վարուէին: 382 ին մատնութեամբ տիրեցին Թեփէի Կարմեա միջնաբերդին: Թեփացի մը Պելոպիդաս բոլոր Բէոպտիոյ քաղաքներուն հետ նիզակակցելով՝ իր երկիրը ազատեց: Սպարտայի զրկած մէկ նոր բանակը Եպամինոնդաս Չախճախեց Լեկսրայի ճակատամարտին մէջ (371) և յառաջանալով մտաւ Պելոպոնէս: Սակայն չի կրնալով Սպարտան կործանել, բաւականացաւ Մեկալոպոլիս ու Մեոնեա քաղաքները վերականգնելով: Եպամինոնդաս երկրորդ անգամ մըն ալ արշաւեց Պելոպոնէս



ու Մանսիսեա քաղաքին մօտ շատ փայլուն յաղթանակ մը տարաւ (362) բայց ինքն ալ մահացու կերպով վիրաւորուեցաւ: Երբ կատարեալ յաղթութեան վերջին աւետիան առաւ, Եպամինոնդ իր ձեռքովը քաշեց հանեց սիրտը՝ միտուած սրաքը՝ ըսելով. Եպամինոնդ «Հիմա կրնամ հանգիստ մեռնիլ»: Երբ զինքը շրջապատող արտասոււալից բարեկամները կը ցաւէին որ ասանկ նշանաւոր քաղաքացի մը անզաւակ կը մեռնի, Եպամինոնդ պատասխանեց «Ընդհակառակը, երկու զաւակներ կը թողում իմ երկրիս, Լեկսրայի և Մանսիսեայի յաղթութիւնները որոնք բաւական են իմ անունս անմահացնելու»:

Եպամինոնդ ու Պելոպիդաս, հին Յունաստանն յիշեցնող այն երկու նշանաւոր դիւցազուններն են, որոնք սպաւանեալ շրջանի մը մէջ՝ իրենց անկեղծ տոհմաւիրութեամբ, արիական ոգիով և անողիւտ բարեկրթութեամբ պատիւ բերին իրենց ցեղին:





Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

1. Յունաստան աշխարհագրական ի՞նչ դիրք ունէր, որո՞նք էին այս երկրին նախկին բնակիչները. — 2. Քնական ի՞նչ բաժանումներ ունէր. — 3. Ո՞վ էին Հելլէնները եւ քանի ցեղերու բաժնուած էին. — 4. Յունաց պատմութիւնը քանի՞ մասերու կը բաժնուի. — 5, նկարագրէ Տրոյոյ պատերազմը:

1. Որո՞նք էին Դորիացիք, ասոնց արշաւանքին հետեւանքները ի՞նչ եղան. — 2. Յոյները միութեան ի՞նչ կապեր ունէին. — 3. Յունաց կրօնքն ի՞նչ էր, քանի՞ դասակարգի աստուածներ ունէին. — 4. Խօսէ Ոլիմպիական խաղերուն եւ անոնց օգտակարութեանը վրայ:

1. Ո՞ւր կը գտնուէր Լակոնիա եւ ի՞նչ վիճակի մէջ էին անոր բնակիչները. — 2. Ո՞վ էր Լիկուրգոս եւ ի՞նչ օրէնքներ դրաւ. — 3. Լիկուրգոսի օրէնսդրութեան հիմք ի՞նչ էր. — 4. Այս օրէնքներուն հետեւանքը ի՞նչ եղաւ. — 5. Սպարտա բարոյապէս ալ ի՞նչու չի զօրացաւ. — 6. Որո՞նք եւ քանի՞ են Մեսենական պատերազմները:

1. Ո՞ւր կը գտնուէր Ատտիկէ, ի՞նչ դիրք ունէր, — անոր բնակիչներուն մասին ի՞նչ կրնաս ըսել. — 2. Աթէնք քաղաքական ի՞նչ կազմակերպութիւն ունէր. — 3. Ո՞վ էր Սոլոն եւ ի՞նչ օրէնքներ դրաւ. — 4. Սոլոնի օրէնսդրութեան ոգին ի՞նչ էր. — 5. Ի՞նչ տեսակ ազնուականութիւն մը հաստատեց. — 6. Կառավարութիւնը քանի՞ մարմիններէ կը բաղկանար. — 7. Ինչպէ՞ս կրնաք բաղդատել Լիկուրգոսի եւ Սոլոնի օրէնքները. — 8. Որո՞նք յաջորդեցին Սոլոնի եւ ինչ վախճան ունեցան:

1. Որո՞նք եւ քանի՞ են Մարական պատերազմները, եր՞բ եւ ի՞նչ պատճառներով տեղի ունեցան. — 2. Առաջին պատերազմը ո՞րն է եւ ո՞ւր տեղի ունեցաւ, այս պատերազմին

մէջ որո՞նք նշանաւոր հանդիսացան. — 3. Բսերքսէս ի՞նչ ոյժերով եւ ո՞ւսկից մտաւ Յունաստան. — 4. Արիստիդէս եւ Թեմիստոկլէս ի՞նչ կարեւոր դեր կատարեցին. — 5. Թերմոպիլէի ճակատամարտը ի՞նչպէս տեղի ունեցաւ. — 6. Նկարագրէ Սալամինէի նաւամարտը եւ Պլատէայի ճակատամարտը. — 7. Աթէնք ի՞նչպէս եւ որո՞ւ ձեռքով վերաշինուեցաւ. — 8. Արիստիդէս եւ կիմօն ի՞նչ ծառայութիւններ մատուցին, ո՞րն է Միկալէի յաղթութիւնը:

1. Ո՞վ եւ ի՞նչ նկարագրի տէր էր Պերիկլէս. — 2. Ի՞նչ հոյակապ շէնքեր կանգնել տուաւ. — 3. Իր օրով ո՞ր երեւելի անձերը կ'ապրէին. — 4. Ի՞նչ առթիւ տեղի ունեցան Պելոպոնէսեան պատերազմները. — 5. Պերիկլէս ի՞նչ վախճան ունեցաւ. — 6. Պատմէ Կլէոնի եւ Նիկիասի գործերը. — 7. Ո՞վ էր Ալկիպիադ. — 8. Աթէնքի անկումը ի՞նչպէս տեղի ունեցաւ. — 9. Սպարտացիք ի՞նչպէս վարուեցան Աթէնացոց եւ Յունաստանի միւս ժողովուրդներուն հետ. — 10. Ո՞վ էր Կրտսերն Կիւրոս, նկարագրէ նահանջ Բիւրուն արշաւանքը. — 11. Ո՞վ էր Ագեսիլաս, ի՞նչ արշաւանքներ գործեց, ո՞րն է Քերոնայի ճակատամարտը. — 12. Անտալիդասի դաշնադրութիւնը ո՞րն է. — 13. Նկարագրեյէք Թեփէի ստացած զերիշխանութիւնը եւ անոր երկու մեծ քաղաքացիներուն գործերը:



# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ

## ՎԵՐԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ



(250—336)

1. Ընդարձակ, լեռնային և բարեբեր երկիր մըն է վերին Յունաստան, որ կը գտնուէր Ելլագայի հիւսիսային կողմը:

Ասոր բնակիչները կը սերէին Հելլենական ցեղէ և էին կտրիճ, բայց քաղաքակրթութեան մէջ յետագէմ: Քրիստոսէ 4 դար առաջ է որ կը սկսի առնու և կարեւորութիւն ստանալ շնորհիւ սեծ մարդու մը որ իր տէրութեան բուն հիմնադիրն եղած է:

2. Փիլիպպոս Բ. (359—336). — Այդ մեծ մարդն էր Փիլիպպոս, որ իբրև արքայազուն, պատանեկութեանը Պելոպոնեսի ձեռք պատանդ տարուած էր թեփե և հոն՝ Եպամոնոնդի խնամքին ներքեւ՝ Յունական քաղաքակրթութեան մէջ կրթուած էր: Փիլիպպոս, բնականէն ուշիմ և հնարամիտ, հիմնապէս ուսաւ Յունաց զինուորական արուեստին և գրականութեան հետ, նաեւ անոնց ազգային նկարագրին թերի կողմերը և ներքին տկարութեան զաղանիքները:

3. Երբ իր երկիրը վերագարձաւ, Փիլիպպոս միտքը դրաւ առիթէն օգուտ քաղելով Յունաստանը նուաճել: Իր այս փառասէր նպատակին հասնելու համար, նախ և առաջ կազմեց զօրաւոր բանակ մը որ կը բաղկանար 16,000 կտրիճ և շատ լաւ մարզուած զին-

ուորներէ՝ որոնք երկայն նիզակներով և անխոցելի վահաններով զինուած էին: Այս անպարտելի և նշանաւոր բանակն է զոր, Երկաթապատ պատուարի մը կը նմանցնէին (Փաղանգ):

4. Փիլիպպոս, իր զօրաւոր բանակին շնորհիւ՝ գործի սկսաւ և նախ նուաճեց Եգեան ծովու սահմանակից՝ Պոսիդէ, Ամփիպոլիս և Ոլիմբոս քաղաքները ուր գտնուած անտառներու փայտով զօրաւոր նաւատորմից մը կազմեց և առատ սոկիլի հանքերովն ալ՝ միտքը դրաւ Յունաց ճարտասանները կաշառել:

Փիլիպպոս, իր այս անդրանիկ յաջողութեանց միջոցին է որ սենեցաւ մանչ գաւառի մը, Ալեքսանդր, որու գաւառիարակը եղաւ Արխսոսէյ անուանի փիլիսոփան: Փիլիպպոս, յարմար առիթներէ օգուտ քաղել զիտցոյ խորամանկ քաղաքագէտ մըն էր: Իր գաղտնի թելադրութեամբ՝



Արխսոսէյ

Թեփացիներէն հրաւիրուեցաւ պատժել Փոկիսացիները որոնք Դելփիի նուիրական հողերէն մաս մը մշակած և մինչև անգամ անոր տաճարին գանձերը կողոպտած ըլլալով՝ կը մերժէին օրինական տուգանքը վճարել: Փիլիպպոս հաճոյքով ընդունեց այս հրաւերը և Փոկիսացիները նուաճելով՝ (նուիրական պատերազմներ) Ամփիլիպիոնի մէջ անոնց ունեցած երկու ձայնի իրաւունքը ինք ստացաւ (346):

5. Դեմոսթենէյ. — Սուկայն Փիլիպպոս թագաւոր՝ իր ահեղ վազագներն ու զօրաւոր սուրմիզն ունենալով՝ հանդերձ, միակ անձէ մը կը վախնար, այն էր անուանին Դեմոսթենէյս, որ իր բնական թոթովախօսութիւնը յարատեւ ձիգերով ուղղելէ յետ-

տոյ, Յունաստանի ամէնէն մեծ ճարտարանը եղած էր: Այս մարդը՝ փառասէր Փիլիպպոսի թագուն խորհուրդներուն թափանձելով՝ կը յորդորէր իր հայրենակիցները սրպէս զի միաբանին իրենց գոյութեանը սպառնացող վտանգին դէմ: Նշանաւոր են այս առթիւ իր խօսած ճառերը Ոլիւնդեան և մանաւանդ Փիլիպեանները՝ իբրեւ պերճախօսութեան հրաշակերաններ:



Դեմոսթենէս

6. ԲԵՐՈՆԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (338). — Փիլիպպոս, Փոկիսացիները նուաճելէ յետոյ՝ յանկարծ գրաւած էր Բէոտիայի Սլադեա քաղաքը՝ ուսկից շատ զիւրին էր Ատտիկէի վրայ քալել: Այս լուրն առնելով սոսկաց Աթէնք եւ Դեմոսթենէսի խորհրդով՝ նիզակակցեցաւ Թեփէի հետ՝ արդիւնքը համար Փիլիպպոսի յառաջխաղացումը: Ճակատամարտը տեղի ունեցաւ Բէոտիայի Բերոնեա քաղաքին մէջ՝ (338) ուր յոյները յաղթուեցան: Սակայն Փիլիպպոս իր խորամանկ ընթացքով՝ ջանաց յաղթուած յոյներուն սիրտը շահիլ և առաջարկեց Պարսից դէմ պատերազմը վերսկսել: Կարնթաի մէջ գումարուած Ամփիկտիոնեան առեանը այս առաջարկն ընդունելով՝ զանի յունական բանակին ընդհանուր սպարապետ կարգեց:

Սակայն մահը վրայ գալով՝ չկրցաւ իր փափաքին հասնիլ (336 Ք. Ա.):

ՄԵԾՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (336—323)

1. Այս շրջանին փառքը կը կազմէ՝ Փիլիպպոսի արժանաւոր սրդին Մեծն Ալեքսանդր, որ անուանի վարպետներու ձեռքով ընտիր, ու բազմակողմանի դաստիարակութիւն մը ստացած էր: Զինուորական արուեստին ու մարմնական ամէն կարգի մարզանքներու հետ, հաւատարապէս հմուտ էր՝ յոյն գրականութեան և գեղարուեստից: Ամէնէն աւելի էր պաշտէր Համբարտի հրաշակերանները՝ զորս գրեթէ գոց գիտէր և իր գերագոյն փափաքն էր՝ անոր անմահացուցած զիւցողներն՝ Աքիլէսի նմանող մը ըլլալ:



Մեծն Ալեքսանդր

2. Ալեքսանդր՝ 21 տարեկան հասակին մէջ հազիւ իր հօրը յաջորդած էր, երբ բոլոր յոյները Դեմոսթենէսի խորհրդով զէնք առին իրեն դէմ: Ալեքսանդր կը կանխէ իր հակառակորդները և կայծակի արագութեամբ կ'արշաւէ Յունաստան, Թեփե քաղաքը հիմնայատակ կը կործանէ, բնակիչներէն 6000ը կը ջարդէ ու 30,000 ալ իբրեւ գերի կը ծախէ՝ խնայելով միայն տաճարներուն և այն տան՝ ուր ծնած էր Պենդարոս բանաստեղծը: Բոլոր Յունաստան կը զարհուրի նորատի թագաւորին այս անակընկալ զօրութենէն: Բայց Ալեքսանդր, որ իր նպատակին հասած էր, իր հօրը պէս կ'սկսի սիրաշահիլ յունաց

սիրտը և համոզել զանոնք՝ որպէս զի Մարտիան պատերազմները } վերսկսին: Իրօք ալ, Կորնթոսի մէջ գումարուած զաշնակից Յունաց ժողովը՝ Ալեքսանդրը ընդհանուր սպարապետ կը կարգէ յունական բանակին:

3. Ալեքսանդր, կառավարութիւնը իր զօրապետներէն Անտիպատրոսի յանձնելով՝ 334ին, 35,000 հետեակ և 5000 ձիաւոր զօրաց ընտիր բանակով մը՝ Ելլեսպոնտոսէն կ'անցնի Ասիա. և Միտիոյ Իրանիկոն գետին քով՝ Պարսից դէմ կը տանի իր առաջին յաղթութիւնը:

Այս պատերազմին մէջ՝ Ալեքսանդր, Պարսիկ իշխանագունի մը հետ մենամարտած պահուն՝ քիչ մնաց կեանքը վրայ պիտի տար, եթէ իր Կլիսոս բարեկամը օգնութեան չի հասնէր:

ԻՍՈՍԻ ՃՍԿՍՏՄՍՐՏԸ. (333). — Դարեհ Կոստանի առաջին բանակը խորտակելէ յետոյ, Ալեքսանդր մտաւ Փոլսզիա՝ ուր Կորթեան հանգոյցը կտրելով՝ իր յաղթական ընթացքը շարունակեց դէպի Կիլիկիա: Ալեքսանդր, քրտնած վիճակի մէջ, Կիլիկոս գետը մտաւ լրացուելու: Այս անխոհեմութեան հետեանքը եղաւ մահացու տենդ մը: Կեանքը վտանգի մէջ էր և զօրքերը կ'արտատուէին՝ երբ իր Փիլիպպոս անձնուէր բժշկին ազգու խնամքովը՝ երկրորդ անգամ մահուանէ ազատեցաւ:

Սակայն Դարեհ, հաստատապէս միտքը դրած էր վճռական հարուած մը տալով՝ այս ափ մը օտորոկանները ծովը լքափել: Ընտարի, 500,000 զօրաց ահագին բանակով մը եկաւ ճակատիլ Ալեքսանդրի դէմ, Կիլիկիոյ ԻՍՈՍ քաղաքին մօտ: Ալեքսանդր յաղթեց, Դարեհ խոյս տուաւ, յաղթականին ձեռքը թողլով

անբաւ հարստութիւն, զէնք ու պաշար, ինչպէս նաև՝ հազարաւոր գերիներու հետ՝ իր մայրը, կիներն ու զաւակները՝ որոնց հետ վերջին աստիճան ազնուութեամբ վարուելով՝ անոնց գերութիւնը մուցնել տուաւ:

5. Իսոսի փառաւոր յաղթութիւնը Ալեքսանդրի առջեւ կը բանար Սուրիոյ ու Պաղեստինի ճամբան: Նախ մեծահարուստ Իամասկոսի տիրեց, ապա Փիլենիկէ մտնելով՝ Տիրոս քաղաքը ծովէն 7 ամիս պաշարեց, առաւ ու հիմնդատակ կործանեց: Ալեքսանդր Պաղեստինէն անցաւ Եգիպտոս՝ որու դարաւոր յիշատակարանները սքանչացումով գիտեց և ինքն ալ՝ Նեղոսի բերանը հիմնեց իր անունով Ալեքսանդրիա քաղաքը՝ որ ապագային այնքան նշանաւոր պիտի ըլլար իբրև Նոր Աքեմէ և մեծահարուստ վաճառատեղի:

6. ԱՐԲԵԼՍՅԻ ՃՍԿՍՏՄՍՐՏԸ (331 Ք. Ա.). — Ալեքսանդր՝ Եգիպտոսի վրայ իր տիրապետութիւնն ապահովելէ յետոյ, իմանալով որ Դարեհ ահագին պատրաստութիւններով յուսահատ գլխադրութեան մը կը պատրաստուի. փութաց Ասիա՝ և անցնելով Եփրատ ու Տիգրիս գետերէն, Պարսից ստուարաթիւ բանակը (իբր 1000000) գտաւ Հին Նինուէ քաղաքին մօտ՝ Արբելայի զաշտերուն մէջ: Երկու կողմերն ալ համոզուած էին թէ՛ իրենց բաղդը այս պատերազմին արդիւնքէն կախում ունէր: Բայց վերջապէս զինուորական արուեստն ու կարգապահութիւնը այս անգամ ալ Ալեքսանդրի տունին վճռական յաղթութեան մը փառքը՝ որով կը տիրանար Պարսից ընդարձակածաւալ պետութեան և անոր Ծօս, Պերսեպոլիս, Եկբասան ու Բաբելոն մեծահարուստ մայրաքաղաքներ:

րուն: Իսկ Դարեհ, այս անդարմանելի ձախողուածին վրայ՝ խոյս տուաւ և քիչ օրէն մեռաւ:

Ալեքսանդր լացաւ իր հակառակորդին այս տխուր վախճանին վրայ, փառաւոր յուզարկաւորութիւն մը կատարեց և մարդասպաններն ալ անոր ընտանեացը ձեռօք չարաչար սպաննել տուաւ:

7. Ալեքսանդր իր յողթական ընթացքը շարունակեց այժմեան Ափղանիստանի և Թաքարիստանի ձամբով եւ հատու մինչեւ Հնդկաստան՝ որու վեհապետները առ ահի հպատակութիւն յայտնեցին, բաց ի Պարսէն՝ որու մեծահոգի ընթացքին համար, Ալեքսանդր զանի վերահաստատեց իր իշխանութեան մէջ և հետը դաշնակցեցաւ: Աշխարհակալը կը փափաքէր աւելի առաջ, մինչեւ Գանգես երթալ, սակայն բանտկը այս նպատակին ընդգիւմանալուն, ստիպուեցաւ Պելուքիստանի և Կրմանի ձամբով՝ կիզիչ անապատներէ անցնել, առկալ պաշարի չգոյութեան և բնական հազարումէկ դժուարութիւններու՝ և վերադառնալ Բարսելուն: Իսկ իր Նեարխոն ծովակալը՝ բանտկին մէկ մասը երիթրեան ծովէն փոխադրեց Պարսկաստան:

8. ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ. — Ալեքսանդր, իր զինուորական ասդանդին, ահեղ փաղանդներուն և փորձառու զօրապետացը շնորհիւ՝ 10 տարուան մէջ տիրացաւ ասիայիս ընդարձակ աշխարհակալութեան մը՝ որու սահմաններն էին Ադրիականէն մինչեւ Ինդոս, Կովկասէն մինչեւ Արարիոյ անապատները, և վերջապէս՝ Եգիպտոսն ու Նուպիան:

Միայն թէ պէտք է գիտնալ որ, մինչեւ այս դարը չէր տեսնուած մտրդկային աշգիլ քաղաքակրթութեան ասիական նպաստաւոր աշխարհակալութիւն մը, ինչպէս եղաւ Ալեքսանդրինը:

Ալեքսանդր աւելի շինող և հիմնող եղաւ՝ քան թէ աւերող ու կործանող: Ալեքսանդր, անոր համար կոչուեցաւ ՄՅԾ, որովհետեւ նոյն իսկ իր հակառակորդաց հանդէպ՝ մեծանձն ու ազնիւ եղաւ և ճշմարիտ արժանիքն ու դժբաղդ արիւթիւնը պատուեց:

Իր գլխաւոր փափաքն էր՝ միլիոնաւոր և բազմաթիւ ցեղերէ բաղկացած ժողովրդոց մէջ Յունական լեզուն և քաղաքակրթութիւնը դնել իբրեւ միութեան կապ, յարգելով անոնց կրօնը, ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները: Ալեքսանդրի կատարած աշխարհակալութիւնը՝ կերպով մը յունական քաղաքակրթութեան արշաւանքն էր դէպի Արեւելք՝ ուր այնքան արդիւնաւոր եղաւ ապագային: Սակայն իր երիտասարդութիւնը, ստացած անօրինակ փառքը և շոքքորդներու ծայրայեղ գովասանքները՝ մալորեցուցին այս ազնիւ հոգին, որ սկսաւ ինքզինքը դերմարդկային էակ մը նկատել: Ալեքսանդր տակաւ անձնատուր եղաւ պերճանքի ու մեղկութեան, մանաւանդ գինովութեան ժամերու մէջ, նոյն իսկ իր սիրելիներուն կեանքին ալ չի խնայելով՝ արատաւորեց մեծ զօրապետի և մեծ քաղաքակրթողի իր համբաւը:

Իր խիզճը տանջող և իր առողջութեանն սպառնացող ծայրայեղութիւնները շուտով կարճեցին իր կեանքը՝ և մեռաւ Բաբելոնի մէջ (323 Ապրիլ 21ին Ք. Ա.), երբ հազիւ 33 տարեկան էր:

Երբ իր զօրապետները հարցուցին թէ՛ որո՞ւ կը թողուր իր աէրութեան ժառանգութիւնը, Ալեքսանդր պատասխանեց «Ամէնէն արժանաւորին»:



### ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. Որքան որ փառաւոր եղած էր Ալեքսանդրի գահակալութիւնը, նոյնքան ալ արիւնահեղ եղաւ իր մահն ու յուզարկաւորութիւնը, ինչպէս որ ինքն ալ գուշակած էր կանխաւ :

Ալեքսանդր արժանաւոր յաջորդ մը չունենալուն, իր փառաւէր զօրապետները շարունակ 22 տարի (323—301) իրարու դէմ կատաղի պայքար մղեցին՝ անոր ընդարձակ պետութիւնն իրարու ձեռքէ յափշտակելու համար: Վերջապէս, Փոլեզիոյ Իփսոս քաղաքին մօտ տեղի ունեցած վճռական ճակատամարտով, Ալեքսանդրի պետութիւնը երեք գլխաւոր մասերու բաժնուեցաւ: 1. ՅՈՒՆՍՍՏԱՆ, 2. ԱՍՍՈՐԻՔ, 3. ԵԳԻՊՏՈՍ:

Ասոնց մէջ ամէնէն աւելի փայլեցան՝ Ասորիք ու Եգիպտոս: Առաջինը հիմնեց Սելեւկոս Նիկասոս, որ թագաւորի տիտղոսն առաւ և իր տէրութիւնն ու յաջորդները՝ հիմնադրին անունով կոչուեցան Սելեւկեան: Իսկ Եգիպտոսը բաժին ինկաւ Պտղոմէոս զօրապետին, որ նոյնպէս կոչուեցաւ թագաւոր և իր տէրութիւնն ու յաջորդներն ալ Պտղոմէոսեան, այնպէս որ, երկու տէրութեանց վեհապետներն ալ՝ աւելի իրենց անունով կը ճանչցուին քան թէ հարստութեան տիտղոսով:

2. Սելեւկեանց տէրութիւնն ի սկզբան մեծ փայլ ստացաւ՝ չնորհիւ իր առաջին աշխարհաչէն վեհապետներուն՝ որոնց հիմնած բազմաթիւ քաղաքներուն մէջ՝ ամէնէն կարեւորներն էին Անտիոք՝ (Անթաքիա) Որոնդէսի վրայ, Սելեւկիա՝ (Մէլէֆքէ) Տիգրիսի վրայ և Լաոդիէի՝ Միջերկրականի եզերքը: Սելեւկեան

պետութիւնը կը տարածուէր Ինդոսէն մինչեւ Ելլեսպոնտոս, որով իր մէջ կը պարունակէր Պարսից հին կայսրութեան ամէնէն ընդարձակ և հարուստ գաւառները:

Սելեւկոս Նիկասորէն յետոյ՝ ամէնէն նշանաւոր թագաւորը եղաւ Մեծն Անտիոքոս որ Պտղոմէոսեաններուն և Հռոմայեցւոց դէմ մղած պատերազմներով մեծ անուն հանեց: Բայց Մակնեսիոյ (Մանիսա) ճակատամարտին մէջ յաղթուեցաւ Հռոմայեցիներէն՝ որոնք տիրեցին Փոքր Ասիոյ, իսկ Պարթեւները՝ Արեւելեան մասին: Նոյնպէս Հրեաներն ալ իրենց անկախութիւնը գտան Մակարայեցւոց օրով:

Իր ապիկար յաջորդներուն ժամանակ, բարուց ապականութիւն, և միւս կողմէն՝ արտաքին զօրաւոր թշնամիներու անընդհատ յարձակումներ՝ փութացուցին այս տէրութեան անկումը: Վերջապէս՝ Քրիստոսէ 64 տարի առաջ, Հռոմայեցի Պոմպէոս մեծ զօրապետը Ասորիքը նուաճելով Հռոմէական գաւառ մը ըրաւ:

3. ՊՏՂՈՄԷՆՈՍԵԱՆՔ. — Մեծին Ալեքսանդրի ամենամեծ փափաքը, այն է, յունական քաղաքակրթութիւնը Արեւելքի մէջ տարածելու գաղափարը իրագործողները եղան Պտղոմէոսեանք: Ասոնց օրով Եգիպտոս աննախընթաց փայլով մը փայլեցաւ՝ քաղաքակրթութեան ամէն ձիւղերուն մէջ ու դարձաւ աշխարհի լուսաւորութեան կեդրոնը: Առաջին երեք Պրտոմէոսներու օրով, Եգիպտոս շատ ծաղկեցաւ երկրագործութեան, վաճառականութեան, ճարտարութեան և գրականութեան մէջ:

Պտղոմէոս Ա. (Սոտեր), իր Ալեքսանդրիա մայրաքաղաքը՝ գիտութեանց փառաւոր կեդրոն մ'ըրաւ: Հոն հիմնեց երեւելի մատենագարան մը որ կը պա-

րունակէր 7000է աւելի թանկագին ձեռագիրներ, նոյնպէս՝ Միւսեոն մը, տեսակ մը կաճառ՝ ուր կը բնակէին ամէն ազգէ գիտուններ, բժիշկներ, լեզուագէտներ, մատենագիրներ ու չափագէտներ՝ ստանալով թագաւորէն լիառատ վարձատրութիւն ու մեծամեծ պատիւներ: Այս Պողոտէոսն էր որ, Նեղոսի բերանը գտնուած Փարոս անուն փոքր կղզիին վրայ բարձր աշտարակ մը կանգնել տուաւ՝ որտէ կատարին վրայ գիշերները լոյս կը վառուէր նաւերն առաջնորդելու համար:

4. ՊՏՂՈՄԷՆՈՍ ՅԻԼԱՏԷԼՅՈՍ (Եղբայրասէր) ալ պաշտպան կանգնեցաւ գիտութեանց և գրականութեան: Իր օրով Եգիպտոս աշխարհիս տառջին ծովային տէրութիւնն էր: Դարձեալ, այս Պողոտէոսն է որ, Նեքուսովի նման, փորձեց ջրանցքով մը Միջերկրականը կարմիր ծովուն միացնել, բայց չի յաջողեցաւ: Սակայն իր իշխանութեան ամէնէն փառաւոր գործը եղաւ 72 Հրեայ բարբառներու ձեռքով՝ Հին Կտակարանը երբայեցերէնէ յունարէնի թարգմանութիւնը որ կոչուած է Եօթանասնից բարգիւննութիւն:

ՊՏՂՈՄԷՆՈՍ Գ. ԵԻԵՐԳԵՏԷՍ (Բարերար) ի օրով, մասնաւորապէս Աշխարհագրութեան ուսումը մեծ յառաջդիմութիւններ ւրաւ, որով սկսան աւելի ճիշտ ու կատարեալ քարտէսներ գծուիլ՝ լայնութեան ու երկայնութեան աստիճաններով: Եւ երգեալէս պատեւրագմներ ալ ւրաւ և տիրեց Փոքր Ասիոյ, Ասորաց մէկ մասին, Արարիոյ ու Եթովպիոյ:

Այս երեք անուանի թագաւորաց մահէն յետոյ, Եգիպտոսի յունական տէրութիւնը՝ զեղխութեան և անստակութեան մէջ թաթխուելով՝ պատրաստի որս մը դարձաւ Հռոմայեցւոց, որոնք Քրիստոսէ 31 շտարի

առաջ տիրեցին այս հարուստ երկրին: Եգիպտոսի վերջին թագուհին եղած էր Կլէոպատրա՝ Հռոմայեցի Անտոնիոս զօրապետին կինը:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Ալեքսանդրի մահուանէ յետոյ, այս երկիրը յարատեւ պատերազմներու և ներքին խռովութեանց ասպարէզ մը դարձած էր՝ աշխարհակալին ընտանեացը պարագաներուն կողմանէ:

Վերջապէս, Քրիստոսէ մէկ ու կէս դար առաջ, Հռոմայեցիք տիրեցին բոլոր Յունաստանի որ եղաւ Աֆայեա անունով Հռոմէական դաւառ մը:



Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

1. Նկարագրէ Հիւս. Յունաստանի աշխարհագրական դիրքը եւ անոր բնակիչներուն վիճակը. — 2. Ո՞վ էր Փիլիպպոս եւ որո՞ւ մեռով դաստիարակուեցաւ. — 3. Ինչպէ՞ս վերակազմեց իր բանակը. — 4. Յունաստանի ո՞ր քաղաքներուն տիրեց. — 5. Որո՞նց կ'ըսուի նուիրական պատերազմ. — 6. Ո՞վ էր Դեմոսթենէս եւ ինչ կարեւոր դեր կատարեց. — 7. Ի՞նչպէս մեռաւ Փիլիպպոս:

1. Փիլիպպոսի ո՞վ յաջորդեց, ի՞նչ նկարագրի տէր էր Ալեքսանդր. — 2. Ի՞նչպէս յաջողեցաւ Յունաց սիրտը շահիլ. — 3. Ի՞նչպէս սկսաւ իր աշխարհակալութիւններուն. — 4. Ո՞րն էր իր առաջին յաղթութիւնը Պարսից դէմ. — 5. Պատմէ Իսոսի ճակատամարտը, Փիւնիկէի, Պաղեստինի ու Եգիպտոսի նուաճումը. — 6. Ի՞նչպէս եղաւ Արբելայի ճակատամարտը. — 7. Ալեքսանդր մինչեւ ո՞ւր շարունակեց իր աշխարհակալութիւնը եւ որո՞նք էին անոր սահմանները. — 8. Ալեքսանդրի աշխարհակալութեան բազմակողմանի օգուտները որո՞նք եղած են:

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Ե Ի Ի Թ Ե Ր

1. Յունական խաղերու եւ հանդէսներու՝ զանազան տեսակէտներով ունեցած օգտակարութիւնը:
2. Բաղդատեղ Թեմիստոկլէսի եւ Արիստիդէսի նկարագիրները եւ անոնց մատուցած տարբեր ծառայութիւնները՝ Մարական պատերազմաց ժամանակ:
3. Պերիկլէս:
4. Սոկրատ:
5. Դեմոսթենէս:
6. Բսենոփոն:
7. Ալեքսանդր՝ իբրեւ մարդ, իբրեւ զինուոր եւ իբրեւ աշխարհակալ:
8. Բաղդատեղ Ալեքսանդրի աշխարհակալութեան հանգամանքը Սեսոստրի, Նաբուգոդոնոսորի, Կիւրոսի եւ Դարեհի աշխարհակալութեանց արդիւնքին հետ:
9. Պտղոմէոսեանց կատարած քաղաքակրթիչ դերը:
10. Յունաց անկումին ներքին պատճառները:

Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Իրենց հայրենակիցներուն ապերախտութեանը զոհ գացող երեւելի Աթէնացիներ:
2. Հին դարերու մէջ՝ աշխարհագրական գիտութեան նպաստող միջոցներ:
3. Համր քարտէսի մը վրայ նշանակէ Ալեքսանդրի աշխարհակալութեան սահմանը, նուաճած երկիրները, եւ այն քաղաքները՝ ուր վճռական ճակատամարտներ տեղի ունեցան:

Ի՞նչ կը յիշեցնեն ձեզի հետեւեալ անունները. —

Մարաթոն, Աթոս, Արտեմիսիոն, Ելլեսպոնտոս, Թերմոպիլէ, Սալամինէ, Եւրիմէտոն, Պլատէա, Եգոս—Բոթամոս, Իսոս, Արքելա, Իփսոս, Սարդիկէ:



ՅՈՒՆԱՅ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ


1. Ինչպէս տեսանք, Յունաստան, թէպէտ Եւրոպայի ամէնէն փոքր երկիրներէն մին էր, սակայն իր բարձր քաղաքակրթութիւնով բոլոր աշխարհի բարոյապէս տիրեց եւ ապագային վրայ ալ՝ անհուն ազդեցութիւն մ'ունեցաւ:

Իրաւ է որ Յոյները եզրպտացիներէն և Փիւնիկեցիներէն գիտութեանց և արուեստներու վերաբերեալ նախնական շատ բաներ սորվեցան, սակայն անոնց հետ՝ չափազիտութիւն, բժշկութիւն, երկրաչափութիւն, բուսաբանութիւն, աստղաբաշխութիւն ևն. այն ժամանակին համար աննման կատարելութեան մը հասուցած ըլլալու պատիւը իրենց կը պատկանի: Բայց ինչ որ աննախնթաց բարձրութեան և մեծութեան դրոշմը կը կրեն, իրենց գրականութիւնն ու արուեստներն են: Երաժշտութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն շատ ծաղկեցան՝ մանաւանդ Պերիկլէսի և Ալեքսանդրի դարերուն: Ամէնէն երեւելի նկարիչն է Աբելլէ: Աննման քանդակագործ ու արձանագործն է Փիդիաս՝ Պերիկլէսի դարուն փոռքը: Յետոյ կուգան Լիզիբէ և Պրաքսիթէլ արձանագործը:

2. Յունական ճարտարապետութիւնը իրեն յատուկ ոճին ու ձեւերուն պատճառաւ՝ երեք դլխաւոր կարգերու կը բաժնուէր, ինչպէս՝ Դորիական, Յոնիական և Կորնթական կարգ: Մինչև հիմայ Յունաստանի այլ և այլ մասերուն մէջ գտնուած յունական ճարտարապետութեան մնացորդները (տաճար, թատրոն ևն.), զմայլում կ'ազդեն գիտողին՝ իրենց պար-



զուլթեանը մէջ՝ ունեցած շնորհալի ճաշակին, նըրբութեան և արուեստի կատարելութեանը տեսակէտներով: Այս ճիւղին գլուխ գործսցնելէն մին էր Եփեսոսի մէջ (այժմ Այս Սուլուզ) Անահիտի նուիրեալ զուտ սպիտակ մարմարէ և սիւնազարդ հրաշալի տաճարը, որ աշխարհիս 7 հրաշալիքներէն մէկը ընդունուած էր:



Աշխարհիս եօթը Հրաշալիքները(\*)

3. Ինչպէս ըսինք, յունական գրականութիւնը աննախընթաց կատարելութեան գրողը կը կրէր իր ամէն ճիւղերով, որոնց մէկ քանին նոյն իսկ Յոյն հանճարին ծնունդն է, ինչպէս է Ողբերգութիւնը և Քնարերգութիւնը:

(1) Ընդհանրապէս աշխարհիս եօթն ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ ընդունուած են. — 1. Շամիրամի Առկախեալ Պարտէզները, 2. Եգիպտոսի Բուրբըրը, 3. Ալեքսանդրիոյ Փարոսը, 4. Մոզոլէի Գերեզմանը, 5. Ոլիմպիական Արամազդի Արժանը, 6. Եփեսոսի տաճարը, 7. Հռոդոսի պղնձէ հսկայ արձանը:

4. ԲՄԱՍՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ մէջ փայլեցաւ Համերոս, որ կը կարծուի թէ Քրիստոսէ իբր 1000 տարի առաջ ապրած ըլլայ: Ասոր երկու հրաշակերտներն են Ոգիտական և Իլիական՝ որոնց վրայ խօսեցանք արդէն: Իբրեւ Քնարերգակ բանաստեղծ երեւելի կզան Պենզարոս, Տիրատէս, Սափո և Անակրէան՝ որոնք քնարի վրայ՝ պատերազմի մէջ իրենց քաջութիւններովը նըշանաւոր հանգիստացող անձանց գործերը և կամ կեանքի հեշտութիւնները կ'երգէին:

Իբրեւ Ողբերգակ բանաստեղծ մեծ անուն թողած են Եւրիլէս, Սափոկլէս ու Եւրիպիլէս, իսկ Արիստոփանէս նշանաւոր է իբրև կատակերգակ բանաստեղծ:

ՊՍՏՄՈՒԹԵԱՆ ճիւղին մէջ փայլեցան Հերոգոտոս, որ իր Արեւելք երկարատեւ ուղևորութիւններն ի գիր առած և Ոլիմպիական հանգէսներուն մէջ զանաւր կարգաւով՝ քանիցս մրցանակի արժանացած է: Հերոգոտոս կը մեղադրուի իր պատմական նկարագիրներուն մէջ իբր զարդ և իր ժամանակի ճաշակներուն գոհացում տալու նպատակաւ՝ առասպելներ ալ խառնած ըլլալուն համար: Թուկիտիդէս, որ շատ հրապուրիչ ոճով մը գրած է Պելլոպոնէսեան պատերազմները: Դեմոթիսէն անքան սքանչացած էր այս գործին վրայ, որ կարենալ յագեհալու համար, քանի՛ քանի՛ անգամներ ծայրէ ծայր ընդօրինակած էր զայն: Քսենոփոն, Նահանջ Բիւրուն անուանի զիւցազնը, այս արշաւանքին պատմութիւնը գրած է, ինչպէս նաև Կիւրոսի դատախարակութիւնը՝ որու մէջ կը նկարագրէ նաև Պարսէց բարքն և առտնին սովորութիւնները:

ԻՄՍԱՍՍԱՍԻՐՈՒԹԵԱՆ մէջ փայլեցան Թալէս, Սուլոն, մանաւանդ Սոկրատ, որ բարուց ապականու-

Թեան շրջանի մը մէջ՝ իր չքնաղ սուսքնութեամբ, անկեղծութեամբ և կրօնական աննախապաշար համազուտներովը կը փայլէր: Իր փամփոխակից սուս խմաստունները (Սովետ) — որոնց կեղծիքն ու անբարոյացուցիչ սկզբունքները կը դատապարտէր հրապարակաւ — ամբաստանեցին այս անուանի խմաստասէրը իբրև անկրօն և խուլարար՝ ու զանի մահուան դատապարտել տուին: Սակրատ բանտի մէջ մեռաւ մաշխիւնի խմելով:

Սակրատի ամէնէն նշանաւոր աշակերտները եղան Պդատոն և Արխատտէլ: Առաջինը հիմնադիրը եղած է Ակադեմականաց դպրոցին, այսպէս կոչուած է, որովհետեւ, Աթէնացի Ակադեմոս անուն իր մէկ բարեկամին տունը կը հաւաքէր իր աշակերտները և հոն կ'ուսուցանէր: Իսկ Արխատտէլ հիմնեց Պերիպատիկեանց այսինքն՝ ձեմարանականաց դպրոցը: Յունարէն բեքիբաթօ կը նշանակէ ձեմել: Արխատտէլ սովորութիւն ունէր բացօթեայ տեղերու կամ ընդարձակ սրահներու մէջ՝ իր աշակերտներուն հետ ձեմելով դասախօսել:

Պէտք է յիշել նաեւ Չէնոն՝ Ստոյիկեաններու դպրոցին հիմնադիրը, Եպիկուրոս, որ եղաւ հիմնադիր համանուն դպրոցին: Իսկ Դիոգենէս, կեանքի դաւնութեանց և զրկանքներու սոկալու համար, բնական ամէն հաճոյք, հանգիստ և դիւրութիւն արհամարելով շան պէս կ'ապրէր: Իբրև բնակարան՝ տակաւ մը, իբրև հագուստ՝ ամառ ձմեռ միեւնոյն ցընցոտին և իբրև կարասի՝ ջուր խմելու հող պարզ աման մը միայն ունէր: Օր մը տեսնելով որ աղեկ մը գետեղերքին մօտենալով երկու ափովը ջուր կը խմէր «Այս աղան ինձմէ աւելի խելացի է եղեր» ըսաւ և հողէ ամանը գետինը զարնելով կտարեց: Երբ

անգամ մը, Դիոգենէս կորնթոս կը գտնուէր, Մեծն Ալեքսանդր փափաքեցաւ տեսնել այս մեծ փիլիսոփան: Դիոգենէս տակաւի մը մէջ պառկած՝ արևուն գիմացը կը տաքնար: Ալեքսանդր հարցուց թէ ի՞նչ կը խնդրէր իրմէ: Դիոգենէս անտարբեր կերպով մը պատասխանեց — «Սա կը խնդրեմ որ քիչ մը մէկ կողմ քաշուիս և արեւիս լոյսը չի խափանես»: Ուրիշ օր մըն ալ, ցորեկ ատեն լապտերը վառած, Աթէնքի փողոցները կը թափառէր: Երբ պատճառն հարցուցին, «Մարդ կը փնտռեմ» պատասխանեց:

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ մէջ հաշակ հանեցին Դեմոթենէս, Յունաստանի ամենամեծ ճարտասանը, որ իր բնատուր հանճարին շնորհիւ՝ քաղաքական գործերու մէջ ալ մեծ ազդեցութիւն և կարեւորութիւն ստացաւ: Իր մրցակիցն էր Եսքինէս ճարտասանը որ չկրնալով գէթ մօտենալ անոր գերազանց պերճախօսութեան, յուսահատ՝ քաշուեցաւ Հոդոս կղզին և հոն հիմնեց ճարտասանութեան առանձին դպրոց մը: Երբ օր մը Դեմոթենէսի գէթ իր խօսած մէկ ճառը կը կարդար, ունկընդիր աշակերտները խանդավառութեամբ ծափահարեցին զինքը: Այն ատեն Եսքինէս ըսաւ «Հապա ի՛նչեր պիտի ընէիք, եթէ անգամ մըն ալ թեմոթենէսի պերճախօսութիւնը անձամբ լսելու բաղժն ունենայիք»: Եսքինէսի այս անկեղծ խոստովանութիւնը մեծ պատիւ կը բերէ իր ճշմարտասիրութեան որով նոյն իսկ իր հակառակորդին ունեցած իրական արժանիքը կը զննատէր իր աշակերտաց ներկայութեան:



ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՄԻՆՋԵՒ ԺԱ. ԴԱՐ

ՊԵՂԱՍԳԱՅԻՔ. — շեղեցաց արշաւանքը. —

Կրօնք. — Ուխտագրական 12 աստուածներ:

Գիւցագունք. — Հերակլէս, Թեսէոս, Յաոնն, Պերսէոս ևն.

Արգոնաւորաց արշաւանքը.

Տրոյոյ պատերազմը (1115—1181):

ՏԵՐՈՒԹԵԱՆՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Պելոպոնէսի մէջ Դարկացուոց ձեռքով կը հիմնուի առաջին կազմակերպեալ կառավարութիւնը՝ Սպարտա: Թ. դարուն, Սպարտա կը ըլլայ բոլորովին զինուորական տէրութիւն մը, կը նուաճէ Մեսիան (745—668) և իր գերիշխանութիւնը կը տարածէ Պելոպոնէսի վրայ:

Կեդր. Յունաստանի մէջ կը զարգանայ Աթենք: Զ. դարուն, Սոլոն օրէնքներ կը գնէ: Աթենք կը ըլլայ առաջին կարգի ծովային պետութիւն մը:

ՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

(504—449)

Մարական Ա. պատերազմ. — Մարաթոն—Միլդիասկս (490)

Մարական Բ. պատերազմ. — Թերմոպիլէ—Լեոնիդաս

Սպարաբնէի ծովամարտը . — Թեմխատիկէս  
 Պլասեայի ճակատամարտը . — Պաւսանիաս (479)  
 Մարական Գ. պատերազմ . — Կիլոնի արշաւանքը և  
 կնքած խաղաղութիւնը :  
 Պերիկլես . — Ոսկեզար դպրութեանց և արուեստից  
 (449—431) :

ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆ

ՊԵՂՈՊՈՆԷՍԵԱՆ ՊԱՏԵՐՍՉՄՆԵՐ (431—404)

Սպարտայի նախանձը Աթէնքի դէմ . —  
 Պելոպոնեսեան պատերազմներ (431—404) . —  
 Աթէնքի մէջ ժանտախտ կը ծագի . —  
 Նիկիասի խաղաղութիւնը (421) . —  
 Մելիտիոյ արշաւանքը—Ալկիբիադ (415) . —  
 Աթէնքի գրաւումը—Լիսանդր (404) . —  
 Երեսուն բռնաւորք—Թրասիպուլ . —  
 Սոկրատայ մահը (399) . —

ՍՊԱՐՏԱ ԵՒ ԱԹԷՆՔ

Սպարտայի զօրութիւնը . —  
 Սպարտացիք Ասիա կ'արշաւեն . —  
 Նահանջ Բիւրուն (401—400) . —  
 Սպարտայի դէմ նիզադակցութիւն . —  
 Կորոնեայի ճակատամարտը (394) . —  
 Դաւենակցութիւն Անտալիդասի (387) . —  
 Թեփէի սակաւատեւ զօրութիւնը . —

Եպամիհոնոյ և Պելոպիդաս . —  
 Լեւկսրայի ճակատամարտը (371)  
 Մանսինեախ » (362)

ՀԻՒՍԻՍՍՅԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Փիլիպպոսի զօրութիւնը (359) . —  
 Դեմոթենէս ընդունայն ճիգեր կը թափէ Յունաստանն  
 ազատելու համար . —  
 Փիլիպպոս Յունաստանի կը օրէն . —  
 Փիլիպպոսի մահը (336) :

ՓԻՒՊՊՈՍԻ ԿՍՅՍՐՈՒԹԻԻՆԸ (336—323)

Ալեքսանդրի պետութեան բաժանումը . —  
 Իլիսսի ճակատամարտը  
 ՀՌՈՄՍՅԵՅԻՔ՝ Ալեքսանդրի երկրին և Յունաստանի  
 կը օրէն (146—142) . — Սելեւկեանց թագաւորու-  
 թիւնը կը նուաճեն (64 Ք. Ա.)—Եգիպտոսը կը միա-  
 ցընեն Երկնց ընդարձակ կայսրութեան :





ՓՈՔՐ ԱՍԻՈՅ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ, ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Արեւելքի այն մեծամեծ պետութիւններէն ի զատ՝ որոնց վրայ կարգաւ խօսեցանք արդէն, Փոքր Ասիոյ ցամաքակղզիին մէջ ալ կը գտնուէին քանի մը մանր տէրութիւններ որոնց մասին կ'արժէ ամփոփ տեղեկութիւն մ'ունենալ: Այդ տէրութիւններն էին. —

Արեւմտեան մասին մեջ՝

ՄԻՍԻԱ. — Գլ. քաղաքներն էին Իլիոն կամ Տրոփագա, Լափսակոն (Լափսէքի), Կիզիքոն (Քափուտաղ), Ապիսոս, Ասրամիսոն (Էտրէմիտ), Պերկամօն (Պերկամա):

ԼԻԻԴԻԱ. — Մայրաքաղաքն էր Սաղիլիկէ: Գլ. քաղաքներն էին՝ Եփեսոս (Այասուլուգ), Փոկեա (Յօջա), Զմիոն (Զմիւռնիա), Կլազոմէն, Մակնեգիա և Ն.: Ինչպէս տեսանք, բաւական ընդարձակ և զօրաւոր տէրութիւն մըն էր Լիւզիա՝ որու վերջին թագաւորը եղաւ մեծահարուստն Կրեսոս, որ քա.է 547 տարի առաջ՝ Կիւրոսէն յաղթուելով՝ Լիւզիա և Բիւթանիա՝ պարսկական Սատրաքութիւն մը եղան:

ԿԱՐԻԱ. — Կը գտնուէր Արշիպեղագոսի վրայ: Գլ. քաղաքներն էին՝ Միլէս, Ալիկարնաս, Միկալի և Կնիքս քա.քր կղզին: Նշանաւոր եղած է իր քաջագոր-

ծուծեամբը՝ այս երկրին Արեւմիս Ա. թագուհին(480) Սալամինէի ծովամարտին մէջ: Իսկ Արեւմիս Բ. (353) իր Մօզօիէ ամուսնոյն յիշատակին ի յարգանս՝ շինել՝ տուաւ անպիտի հոյակապ գերեզման մը, որ աշխարհիս Եօրն Հրաւալիմեբուն կարգն անցաւ:

Կեդրոնական մասին մեջ՝

ԿԱՊԱԳՈՎԿԻՍ. — Ընդարձակ տէրութիւն մը՝ որու գլ. քաղաքներն էին՝ Մաժակա կամ Կեսարիա, Նազիանգա՝ ուր ծնած է եկեղեցւոյ երեւելի Հայրերէ մին՝ Գրիգոր յայն աստուածաբանը:

ԳԱՂԱՏԻՍ. — Այս փոքր տէրութիւնը հիմնեցին Գալլիացի գաղթականներ՝ Քրիստոսէ 278 տարի առաջ: Գլ. քաղաքն էր Անկիրիա (Էնկիւրբի):

Հիւսիսային կողմը՝

ԲԻԻԹԱՆԻՍ. — Հիմակուան Խիւտավէնտիկեար կուսակալութեան տեղ: Բնակիչները Թրակիացի գաղթականներ էին: Գլ. քաղաքներն էին՝ Պրուսա, Նիկիա (Իզնիկ), Նիփոմեդիա (Իզմիտ), Հերակլեա (Էրէյլի), Ափամե, Քադիեդոն (Գատըքէօյ), Խիսուպոյիս (Իւսկիւտար) և Նիկոմիդիոյ ծոցին մէջ Լիքիսիա (Կէպղէ), ուր կը զանուէի, կ'ըսեն, Մեծն Աննիբալի գերեզմանը:

ՊԱՓԼԱԿՈՆԻՍ. — Սեւ ծովու եզերքը: Գլ. քաղաքներն էին Սիևոպ և Պոմպեուպոյիս:

ՊՈՆՏՈՍ. — Հիմակուան Տրապիզոնի կուսակալութեան տեղ: Մայրաքաղաքն էր Թրապիզոն (Տրապիզոն), Կերազոնգ (Կիրասոն), Ամիսոս (Սամսոն), և Սեբասիա: Պոնտոսի թագաւորներուն մէջ ամէնէն հռչակաւորը եղած է Մեծն Մինդաւոս Զ.


(126—63), որ քառասուն տարի անընդհատ և արիւարար մաքառեցաւ Հոռմայեցւոյ դէմ:

Հարաւային կողմը՝

ՊԱՄՓԻԼԻՍ. — Փոքր Ասիոյ Կեզը. Հար. մասին մէջ: Գլ. քաղաքներն էին՝ Ասալիա, Բերկա և Սիդե (Էսքի Ատալիա):

ԿԻԼԻԿԻՍ. — Միջերկրականի հիւս. արեւլ. կողմը: Գլխաւոր քաղաքներն էին՝ Տարսոն, Իսոս, Սելեւկիա, Անարզափա ևն.:


ՓՈՒԻԻԳԻՍ. — Կը բաժնուէր երկու մասերու. Մեծ և Փոքր Փոնդիլիս: Գլ. քաղաքներն էին Կորդոն, Հիերուպոյիս, Լաւոյիլիէ, Իփսոս և Ափամե:




12.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԸՏԿԵՐ ՀԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆՑ

ԹՆԻՒԱԿԱՆ	ԵԳԻՊՏՈՍ	ԱՍՈՐԵՍԱՆ	ՊԱՂԵՍՏԻՆ	ՓԻՆԻԿԷ	ՄԱՐԲԵՒՊԱՐՍԿԻ
40 Դար Քսէ առաջ	Եգիպտ. կայսրթ. Մեմփիս եւ Բուր- գերը կը շինուին				
20րդ. դար		Նինուէի կայսրթն.	Արրահամու կո- չուժը (2055), — Մոփսէս	Փենիկեան գաղ- թականութիւններ կը հիմնուին	
18րդ. եւ 17րդ. Դ.	Թէփէի մեծու- թիւնը.				
1579			Դատաւորներ Թագաւորներ	Հիրամ	
1096			Սաւուդ		
1056			Դաւիթ		
1016			Սողոմոն		
976			Հերթուած		
788		Ուարդանաբալ	Իսրաէլի թագաւո- րութեան կործա- նումը.		Հիմնարկութիւն Մարագ Պետու- թեան
745		Սարգոնեանք Սարգոն			
721					
656	Եգիպ. պատ. Թը- ւականը կը ճշդուի				
625		Նինուէ կը կոր- ծանէ Բաբելոն. կայսրութիւնը			
587			Վախճան Յուդայի թագաւորութեան		
		Ասորեստան Միս	եւ Պաղեստին		
560					
558		Ասորեստան Պարսից իշխանութեան	ն. Պաղեստին եւ փլինիկէ խանութեան տակ կը մտնեն		Կիւրոս կը յաղթէ Աթաշակի Կամբիւս (527—522)
527	Կամբիւս Եգիպտոս կ'արշաւէ				
	Պարսկաստան, որու մաս կը կազմէ 503ին, իր իշխանութիւնը մինչեւ Նաստ	ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԿԸ ՏԻՐԵՆ	ն Ասիոյ ու Ափրիկէի զլ. երկիրները, որոպա տարածելով կ'սպառնայ Յու- սնի:		Դարեհ Վշտասպ- եայ (521—485)



Յառաջարան	
ՄԱՍՆ Ա. — Ընդհ. Գիտելիք	7
Մարդկային Յեզեր	9
Մարդկային Բաղաքակրթութիւն	16
Նախնեաց ծանօթ աշխարհը	18
Պատմութեան բաժանումները	19
ԵՔՐԱՅԵՅԻՔ	20
ԵԳԻՊՏԱՅԻՔ	26
Փիհնիկեցիք	35
ՄԱՐՔ ԵՒ ՊԱՐՄԻԿՔ	42
ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆ	54
Ա. Թագ. Ասորեստանի	56
Բ. Թագ. Ասորեստանի	60
Համառօտագրութիւնը Արեւլ. Հին ազգերու պատ.	62
Խմբագրութեան նիւթեր	66
Պարտականութիւն	66
Հրահանգ	66
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՅՈՒՆԱՅ	67
Յունաց ծագումէն, մինչեւ Դորիացուց արշւնքը.	69-73
Յունաց Միութեան կապերը	74
Յունաց Կրօնը	76
Լակոնիա. — Լիկուրգոս եւ իր Օրէնսդրութիւնը	78
Ատտիկէ. — Սոլոն եւ իր Օրէնսդրութիւնը	82
Լիկուրգոսի եւ Սոլոնի Օրնէնքներուն բաղդրութ.	86
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԿ. — Մարական Ա. պատերազմ	88
Մարական Բ. պատերազմ	91
Աթէնքի վերաշինութիւնը	96
Պերիկլէս եւ իր Դարը	99
Պելոպոնէսեան պատերազմներ	101
Նահանջ Բիւրուն. — Բսենոփոն	104
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԿ. — Վերին Յունաստան	110
Փիլիպպոս եւ Դեմոսթենէս	111
Մեծն Ալեքսանդր եւ իր աշխարհակալութիւնները	113
Ալեքսանդրի պետութեան բաժանումը	118
Յունաստանի վերջին օրերը	121
Խմբագրութեան նիւթեր	122
Յունաց Բաղաքակրթութիւնը	123
Փոքր Ասիոյ երկրորդական տէրութիւնները	129





0000318

ՀՀ Ազգային գրադարան



NL0000318

20-7=13  
13+7=20

10

99  
99

2013

220

0

9 9 13

